

Ирина

Смирнова

8916-99

У-15 IV

1964



391.542-3

V-15

15 NOV 2011

ՅԱՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԻՔԻԱՆ

# ՅՈՐՈՒՏ-ՄՈՐՈՒՏ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵՇՆ-ՔԻՑ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐԸ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԽԱՆ  
Տպարան Մերովբէ Աւագհանի  
1907

891.99

Մ-15

մար.

ՅՈՎԵՆԻՆԻ ՄԱԼԻԿՈՎԵՆԻ

70

# ՀՕՐՈՏ-ՄՕՐՈՏ

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՐԱԳԻՑ

9355

ԵՐՐՈՐԴ ԳԻՐԸ



ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ  
Տպարան Մերովլէ Աւագեանի  
1907

121 JUN 2013

41509

2070U-2070F

Печ. дозв. тип. С. Я. Авакова, Нахич. н-д.

## Մ Ե Ր Ա Լ Է

### I

Կեանքը նոր էր զարթել քնից,  
որ Գ... քաղաքի ճանապարհը բռնած, կար-  
կատած չուխէն ուսին, մեծ, մազազուրկ փա-  
փախը գլխին, ծակոտիներով շալուարը հա-  
գին, ձեռի ճիպոտը երբեմն շարժելով, եր-  
բեմն կուան տակ դնելով դնում էր ծերունի  
Հանէսը:

Ծերութեան ալիքը ծածկել էր նրա  
գլուխը. կնճիռները ակօս էին ձգել երեսին.  
և երբ նայէիր նրա գէմքին, կկարդայիր մի-  
այն անդուլ աշխատանք: Նա քայլերը  
հետզհետէ արագացնում էր, աշխատելով  
ըսպէ առաջ համնել քաղաք իր դարդին դար-  
ման անելու:

«Ա՛խ, Մարալ ջան, ուսիդ մատադ,  
եարար ուր յարան քեզի. եարար որ տ-

նաստուածը դանակը քաշեց բկիդ, գլուխդ  
կտրեց, հոգիդ առաւ, աչքերիդ լուսը բա-  
ղեց. թէ անօրէն թուրքը? հիմա լծած  
արօրին, իր ցանքը կանէ, տունուտեղ  
կպահէ. և ով գիտէ հիմա անաստուածն  
ինչպէս ուժով ձիպոտով կխփէ մէջքիդ,  
դու էլ մէջքդ կկուացնես, ապա կբարձրաց-  
նես, նոր ուժով կքաշես արօրը. իսկ նա,  
նա, ուրախանայ անօրէնը... Մինչդեռ  
ես առանց Մարալի, Զէյրանս առանց ընկե-  
րոջ, լուծս գետինը, գործս երեսի վրայ,  
տունսուտեղս քաղցած... Ա՛խ, Աստուած,  
էս ի՞նչ զուլում էր, որ բերիր զլուխս,  
քնած տեղս եկան եզս աղըլէն (փարախ)  
տարան... Ա՛խ, թուրքը? բու անօրէն հէրդ  
անիծած, որ գիշեր-ցերեկ հանգիստ չու-  
նինք ձեռքէդ...

Բաւականին ճանապարհ կտրելուց յե-  
տոյ, նա ճանապարհի ափին նստեց մի մար-  
մանդ տեղ և զլուխն առաւ երկու ձեռքի  
մէջ:

Զեփիւռը փշում էր գուրգուրանքով,  
արտուաը ճախրում էր օղում և ուրախ եր-  
գում, առուակը կարկաչում էր անուշ քըր-  
քիջով, արծիւը հզօր թիերը յաղթական տա-

րածած բոլոր թափով սաւառնում էր զէպի  
վեր, կասես իր հզօրութիւնն ու վեհութիւ-  
նը ցոյց տալու, առաւօտեան մշուշը կամաց-  
կամաց նօսրանալով տեղի էր տալիս հետգհե-  
տէ լեռներից ներքև իջնող արևի յաղթական  
ճառագայթներին. հօտերն արդէն հասել է-  
ին արօտ. հեռուից լսւում էին հովուի սրնգի  
հնչիւնները, և անդը կենդանացնող ու գը-  
րաստներին զգաստացնող երկրագործի հո-  
րովէի արձագանքը... Սակայն այդ բոլորը  
կասես անախորժ, նոյն իսկ օտար լինէին  
Հանէս-ապօր սրտին. նրա գարդն այնքան  
մեծ էր, որ ոչինչ չէր կարող փարատել,  
բացի իր Մարալից:

**Մարալը, Մարալը, Հանէս-ապօր աչքի  
լոյս Մարալը:**

Ահա նորից լսւում է երկրագործի հո-  
րովէլը. այս անգամ աւելի բարձր և աւելի  
մօտիկ.

«Հօտաղ, քշէ վար էնէենք,

«Մէկ ակօնն հազար էնենք.

«Նազլու խանումի համար

«Եկող ձմռան բար էնենք.

«Հօտաղ, հծ-ծ-ծ-ծ-ծ...

Դրան հետեւում է հօտաղի անմիջական

պատասխանը ուղղած եղներին.

«Դէ, փահէվան իմ եզը ը ը՝

«Մարալ-ջէյրան իմ եզը.

«Քաշէ քաղելուդ մատաղ,

«Դարդիս դարման իմ եզը.

Հօտաղ, հօ-օ-օ-օ-օ-օ...

Հանէս-ապէրը սթափուեց. նրա ական-  
ջին համնողը իր եղների անուններն էին.  
Նրա սիրտը լցուեց մի նոր դառնութեամբ.  
հօտաղը կասես դիտմամբ ասաց այդ հորո-  
վէլը, որ ծաղը նրան, աւելի տանջանք  
պատճառէր... Նա երկու ձեռքով խփեց  
ծնկներին ու հառաչեց.

— Հայ վախ հայ. ուրիշն իրեն ունե-  
ցածով աշխատի, ուրախանայ, իսկ ես իմ  
ունեցածս կորցնեմ, տիրիմ... Եարաւան  
Աստուած, մեռնիմ արդար դիւանիդ, սա ի՞նչ  
դատաստան է...

Նա տամուկ աչքերը սրբեց և ուղեց  
վեր կենալ շարունակել ձանապարհը, երբ  
յանկարծ նրա դիմաց ելաւ հարևան Զ...  
դիւղացի Պալասը:

— Բարե՛, Հանէս-ապէր, առաւօտ վաղ  
էստեղ մենակ նստել ի՞նչ միտք կանես:  
— Ա՛յս, Պալաս ջան, մի հարցնէ, դար-

ելս կապուա է:

Պալասը լրջօրէն նայեց նրա դէմքին,  
ձեռը տարաւ կոմբալ քթին, հաստ ու կարճ  
պեխերը ոլորեց ու հարցը եց.

— Ի՞նչ է եղել, Հանէս-ապէր:

— Ե զս, Պալաս ջան, Մարալ եզս գի-  
շերը թուրքերը աղըլէն տարել են—, արտա-  
սուեց Հանէս-ապէրը, և աչքերը քամեց:

Պալասը նորից նայեց նրան, նրա թա-  
փած արտասուքներին և հաստ շրթունքնե-  
րը շարժեց.

— Էդ որ կուլաս, Հանէս-ապէր, էդ  
լացովդ ի՞նչ պիտի անես, ասա. Էն գողա-  
ցող թուրքը լացդ պիտի լսէ, պիտի խըդ-  
ճայ, եզդ ետ պիտի բերէ քեզի տայ, ի՞նչ է:

Հանէս-ապէրը այդ խօսքին պատասխան  
չգտաւ տալու:

— Եթէ տանող թուրքն իմանայ—, ա-  
ռաջ տարաւ Պալասը,—որ դու Մարալիդ  
համար էդպէս կուլաս՝ վաղը կգայ միւս ըն-  
կերն էլ կտանի:

— Ջէյրանը—, ինքնիրեն կորցրածի  
պէս ճշաց ծերունին, և աչքերը չոելով նա-  
յեց Պալասի երեսին:

— Այս, Ջէյրանը—, անողոք վրայ բե-

րեց Պալասը, — խեղճ հայ, խելքու զլուխու  
հաւաքիր, սիրու առ, էս ալան-թալան աշ-  
խարքի մէջ մալիդ ու զլխիդ տէր եղիր,  
թէ չէ լացով բան չես շինի... Լացի դիմաց  
խիղճ է պէտք. իսկ թուրքի մէջ վաղուց է  
մեռել խիղճը:

Ծերունի Հանէսը այդ խօսքերից ամա-  
չելով զլուխը քաշ արեց ներքի, և նայեց  
դալար-դալուկ խոտերին, որ զեփիւոի առ-  
ջև անընդհատ օրօրւում էին:

— Շիտակ չէ ասածս, Հանէս-ապէր:  
— Շիտակ է, Պալաս ջան, շիտակ՝,  
հառաչելով արտասանեց ծերունին:  
— Հանէս-ապէր, գիտե՞ս ինչ կայ:  
ի՞նչ:

— Եթէ մենք մեր իւրաքանչիւր գո-  
ղացած եղայ փոխարէն թուրքից խլէինք  
երկուսը, եթէ նրա տոմեն մի հարուածի փո-  
խարէն հասցնէինք կրկնակին՝ թուրքը չեր  
համարձակուի մեր ինչքը յափշտակել, մեզ  
վրայ ձեռք բարձրացնել. այդ մենք չենք  
արել, այդ պատճառով էլ նա երես առած  
ամեն ինչ կանէ:

— Լաւ կսես, Պալաս ջան, լաւ-  
բայց ես էնքան թուրքի մէջ ի՞նչպէս գտնիմ

գողացաղին, որ եղը խլեմ, բերեմ:

Պալասը ճանաչում էր ծերունի Հանէ-  
սին իրրե բարի և խեղճ մարդու, բայց այդ-  
քան միտամիտ և անմեղ չէր կարծում: Ծե-  
րունին այդ վարկեան նրա վրայ մանկան  
տպաւորութիւն թողեց. նա մի-երկու բոպէ  
լուռ նայեց արդար, բայց խեղճ մարդու  
երեսին, նոգու խորքից յարգեց նրան, բայց  
միենոյն ժամանակ ցաւեց նրա վրայ և ա-  
սաց.

— Հէնց էդ է մեր սխալը, է, Հանէս-  
ապէր:

— Ի՞նչը:

— Որ պէտք է զնանք գողացողին փընտ-  
ուենք:

— Ապա ի՞նչպէս:

— Էն գողացողը որ եկաւ քու Մարտ-  
րդ աղըլէն տարաւ, եկաւ, հարցըլեց քեզ, թէ  
դու ով ես:

— Ո՞չ:

— Դու էլ զնա առանց հարցնելու—  
փնտուելու բեր:

— Ախար ես ի՞նչպէս իմանամ էն գո-  
ղացողն ով է, որ զնամ բերեմ:

— Էլ էղտեղ ախր-մախր չկայ. զնա,

բեր, պրծաւ գնաց. մնացածն Աստուած  
կհաւասարեցնէ:

— Պալաս—, զայրոյթով արտասանեց  
Հանէս-ապէրը, և աչքերը չուց նրա երե-  
սին,—էդ ի՞նչ կասես. Աստուած և գողու-  
թիւն...

— Ի՞նչ, ասածս քեզ մեղք թուաց:

— Մէղք, մահացու մեղք...

— Էդ որ իմ ասածը մեղք է, ապա  
ինչու Աստուած չի պատժէ էն մարդուն,  
որ ոչ թէ միայն կասէ, այլ կանէ:

— Պալաս, մեղք մի գործէ. չէ՞ որ  
նա վերելց ամեն ինչ կտեսնի:

— Հանէս-ապէր—, այս անգամ հսնդիատ  
և լրջօրէն ասաց Պալասը,— գուշը գու-  
էդտեղ Աստծու մատը կտեսնիս. Աստուած  
էդտեղ գործ չունի. էդտեղ հայը գործ ու-  
նի աւազակ թուրքի հետ. իսկ Աստծու մա-  
տը խառնել էդ տեսակ բաների մէջ՝ աւե-  
լի քան յանցանք է. Աստուած բարձր է:

Հանէս-ապէրը փորք ժամանակ լուռ  
մնաց. ապա զլուխը բարձրացրեց, պշշած  
նայեց Պալասի երեսին ու ինքնարերաբար  
ասաց.

— Էդ վերջի ասածիդ համոզուեցի.

շխտակ կսես. Աստուած բարձր է. Նա գո-  
ղերից ու գողութիւնից հեռու է. այ—, և  
ձեռով ցոյց տուեց երկնքի կապուտակը:

— Հանէս-ապէր—, այս անգամ գրե-  
թէ երգեց Պալասը, — մարդ դառիր, մանրդ.  
աշխարքի երեսին թէ կուղես, որ քեզ մար-  
դատեղ գնեն՝ աւելի լաւ է եղիր յափշտա-  
կող, քան մուրացկան. էդպէս է նրա օրէն-  
քը. ով կրւզէ ապրի՝ նա պարտական է աշ-  
խարքի օրէնքը կատարել. ով չի կատարէ՝  
նա կտուժէ... նայիր, Հանէս-ապէր, շունն  
աւելի զօրեղ է քան կատուն. բայց երբ նա  
կյարձակուի կատուի վրայ՝ կատուն կհանէ  
ճանկերը, կիսրէ նրա աչքերը, կչանկուէ  
երեսը, կփախցնէ. իսկ ոչխարը որ գայլին  
ոչ մի գիմագրութիւն չի ցոյց տալիս՝ նրա  
փորի բաժինն է... չիմա իմացար բանի զօ-  
րութիւնը:

Հանէս-ապէրն իրեն համար տակաւին  
այդ անծանօթ մաքերի հեշտանքի ու ծփման  
մէջ բառ չգտնելով պատախանելու, հանեց  
ծխատուփը և սկսեց պապիրոս շինել:

Պալասը ևս նրա ծխախոտից իր քթի  
նման հաստ պապիրոս շինեց, վառեց, ծու-  
խը պինդ ծծեց ու հարցըրեց.

— Հիմի էսպէս ուր կերթաս:  
 — Քաղաք. նաչալնիկի քով:  
 — Ինչի:  
 — Գանգատ, որ եզս գտնի:  
 Պալասն այդ խօսքերի վրայ բարձր  
 ծիծաղեց:  
 — Ինչի կիմնդաս:  
 — Ինչի: Ասեմ. — հերու գողացել էին  
 մեր գիւղացի Խշեմի եզները. խեղճի ունե-  
 ցած-չունեցածը էդ մի ջուխտ եզն էր. գիւ-  
 ղացիք գողին բռնեցին, բերին գիւղ. նա-  
 չալնիկն էդ ժամանակ անց կկենար գիւղով.  
 Նա գողին տեսնելու պէս առաւ մտրակը մի  
 քանի հատ հասցրեց... փեշերին... ապա  
 գողի քիրվա, մեր գիւղացի Թորոյենց Թո-  
 րոս-աղա կսեն, գետնի տակն անցնի, նրա  
 հետ թեթևի տուած բարձրացան տան կտու-  
 րը. ինչ եղաւ էնտեղ, ինչ չեղաւ, Աստծուն  
 է յայտնի, միայն երբ ցած իջան՝ նաչալնի-  
 կը գողին բաց թողեց, իբր թէ մինչի գոր-  
 ծի քննութիւնը... էն թողնին էր... Դէ գնա  
 Խշեմ գող գտիր, որ եզներդ առնիս... Հաս-  
 կացար ասածիս միտքը:

Հանէս-ապէրը այդ պատմութիւնը լոե-  
 լով ցնցուեց. հիասթափութիւնն ու յուսա-

հատութիւնը կատարելապէս տիրեցին նրան.  
 մինչ այդ նա մի յոյս ունէր, այն էլ 'ի գե-  
 րե ելաւ. ինչ անէր. ինչպէս գտնէր Մա-  
 րալը:

— Պալաս ջան, ասածդ շիտակ է, հա-  
 մա սիրաս տիրեցրիր:

— Ես ճշմարտութիւնն ասացի. սուտ  
 խօսելուց, զուր յոյսերից, ինքնիրեն խա-  
 բելուց ի՞նչ օգուտ... է՞ն, Հանէս-ապէր,—  
 խօսքը փոխեց Պալասը,— էն որ ճամբայ ես  
 ելէ՝ գնա, գուցէ Աստծուած մի բան կաջողէ,  
 Մնաս բարով:

— Երթաս բարով—, ճայնեց Հանէս-  
 ապէրը և երկար նայեց Պալասի ետից, որ  
 թեերն աղատ փարտելով, շշվացնելով գնում  
 էր, կասես խսկի բան պէտքը չլինէր:

Հանէս-ապէրը սաստիկ նախանձեց այդ  
 ըսպէ անփոյթ և վշտի չենթարկուող Պալա-  
 սին: Նա մօտեցաւ ճանապարհից քիչ հեռու  
 գտնուած աղբիւրին, սառը ջրից կուշտ  
 խմեց և ճնշուած հողով քայլերն ուղղեց դէ-  
 պի քաղաք:

II.

Օրն արդէն ճաշ էր դտուել, որ Հանէս-

ապէրը հասաւ քաղաքք: Քաղաքի կեանքը նրա  
շրջակայքում կանգ էր առել. միայն կենտ-  
րոնն էր աղմկում. վաճառականը իր ապ-  
քանքը գովելով մուշտարի էր զբաւում.  
բախկալը իր մրգեղէնն էր զրուատում. չար-  
չին ձութն ու մաստակը փառաբանում. ա-  
մեն մէկը աշխատում էր մի բան անել,  
միքանի կոպէկ աշխատել, ապրուստ ձա-  
րել: Բայց այդ կանչերը, գովքերը չանէս-  
ապօր ուշադրութիւնը չկարողացան զբաւել.  
նա խիստ յոգնած էր և խոնջացած. լուռ  
անցկացաւ քաղաքի միւս կողմը, ուր զբա-  
նում էր գաւառապետի գիւանատունը: Բայց  
քայլերն այլ ևս չկարողացաւ շարունակել.  
սաստիկ յոգնել էր. հարկաւոր էր քիչ հան-  
գստանալ: Քիչ հեռուն նա նկատեց մի չար-  
դախ, որի մօտերքը ոչոք չէր երեսում.  
սաստիկ փափագ զգաց այդ չարդախում զո-  
վանելու, զինջանալու: Գնաց նստեց չար-  
դախի շուաքում, սկսեց ծխել ու մտածել,  
թէ ինչպէս գնար գաւառապետի գիւանա-  
տունը, ինչպէս զբագրների բուերը մի-մի  
աբասի դնելով հասնէր գաւառապետին,  
ինչպէս զլուխը բանար, չոքէր նրա առջեր,  
ինդրէր, աղաչէր, պաղատէր, պատմէր իր

դրութիւնը, ասէր, որ ինքը առանց եզայ  
կորած է, լուծը գեախնն է մնացել, ցանքը  
կիսատ, տունը քաղցած... «Այս ամենը որ  
իմանայ աղա նաչանիկը միթէ մեքանալու  
չէ ինձ և Մարալս գանելու, տալու չէ...  
Եա Տէր-Աստուած, Քեզ եմ ապաւինել. Դու  
քեօմակ ըլլես... ինքնիրեն մրմռաց նա և  
յենուեց պատին: Յոգնածութիւնը բոլորովին  
յաղթեց նրան. նա աչքերը փակեց և սկսեց  
մրափել: Եւ նա արդէն անուշ խոմբացնում  
էր, որ յանկարծ քնի միջից լսեց շըխկշի-  
կոցի ձայն: Վեր թռաւ քնից, աչքերը տրո-  
րեց և տեսաւ հեռուից ոտից-գլուխ զի-  
նուած մի ձիաւոր ուղիղ գէպի այդ չարդա-  
խը գալիս: Նա ոտքի կանգնեց:

Զիաւորը մօտեցաւ:

— Ո՞վ ես, այ եխտիար. Եկ ձիուս աս-  
պանդակը բռնիր, իջնեմ:

Հանէս-ապէրը առանց բառ արտասա-  
նելու վազեց ասպանդակը բռնեց:

— Ո՞վ ես դու. Էստեղ ի՞նչ կշինես:

Ի՞նչ ասէր Հանէս-ապէրը. ասէր, թէ  
Մ... գիւղացի է, եկել է քաղաք գաւառա-  
պետի մօտ գանգատ, որ թուրքերը Մարալ  
եզը գողացել են: Բայց չէ որ ձիաւորը

Թուրք բէկ էր, էն էլ աղալար, նրա կաշին կհա-  
նէր: Ասէր թէ... Բայց ի՞նչ ասէր: Այդ շփոթ-  
ման մէջ նա կմկմաց.

— Նոքար մարդ եմ, աղա ջան:

— Նոքար. դէ բռնէ ձիս ման ածէ,  
մինչև ըրտինքն անցնի, ես վերևը գործ ու-  
նիմ, մինչև չգամ — , հրամայեց թուրք բէ-  
զը և չարտախի մօտի տան սանդուխքներով  
բարձրացաւ վերև:

Ծերունի Հանէսը առաւ ձիու սանձը և  
սկսեց ման ածել ու մտածել. «սա ի՞նչ բան  
է. Տէր-Աստուած. էնպէս մի հրամայեց,  
կասես իրեն հօրը ճորտը լինէի. իսկ Ի՞ս, որ  
համարձակութիւն անգամ չունեցայ ասելու,  
թէ եզս գողացել էն, եկել եմ գանգատ...  
թիւ, ամօթ ինձ, ամօթ էս փափախիս, հա-  
զար ամօթ, որ կծածկեմ... Պալասն իրա-  
ւունք ունի. մեղաւորը մենք ենք. բոլոր  
մեղքը մերն է»...

Նա այդ դառն ինքնաքննութեան վրայ  
այնքան ջգրուեց, որ կատաղութիւնից փա-  
փախը գետնովը տուեց: Զորացած, մազա-  
գուրկ թեթև փափախը զնտակի պէս վեր-  
վեր թուաւ, դիպաւ ձու առաջին ոտքերին.  
ձին խրտնեց, ետի ոտքերի վրայ ծառացաւ,

ուզեց փախչիլ: Ծերունին նրա սանձից պինդ  
բռնեց, կախ ընկաւ, օդի մէջ մի-երկու պտոյտ  
գործեց, սակայն սանձը ձեռից չթողեց, պա-  
հեց: Զին ֆռուաց, ֆշաց, նայեց նրա սպի-  
տակահեր գլխին, հոտոտեց, հանգստացաւ:  
Այդ երևոյթը կատարելապէս կատաղացըց  
չանէս-ապօրը. — Եթէ ձին փախչէր, ի՞նչ  
պատասխան էր տալու թուրք բէզին, ի՞նչ  
էր ասելու նրան. ի՞նչպէս պիտի ազատուէր  
նրա ձեռքից:

«Բայց ի՞նչու համար պատասխանատու  
պիտի լինէի, մտածեց նա, և ո ես չխնդրե-  
ցի, թէ ձիդ տուր ման ածեմ, ինքը տուեց,  
էն էլ ի՞նչպէս. հրամայելնվ»...

Նա կամացուկ թոգոս փափախը գետ-  
նից վերցրեց, գրեց գլուխը, ապա ետ դա-  
ռաւ նայեց բէզի ձիուն, որ նոյնպէս կար-  
միր էր, ինչպէս իր եղը, նոյնպէս սիրուն,  
ինչպէս իր Մարալը, նոյնպէս բարձր, հսկայ,  
ինչպէս իր կորուսար... բայց ի՞նչու, ի՞նչու  
տարաւ անիծուած թուրքը, որ ինքը մնաց  
առանց եղույ, դունէ-դուռ ընկած, մաթալ...  
այժմ էլ ստիպուած թուրք բէզի ձին բռնե-  
լիս. ի՞նչու...

«Տէր-Աստուած, սա ի՞նչ դատաս-



1 ՀԱՅՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
1922 7/11

տան է»...

«Անարդարութիւն, անարդարութիւն»,  
կասես նրա ականջին այդ բոպէ բղաւեց  
Պալառը, «աւելի լաւ է եղիր յափշտակող,  
քան մուրացկան... այդպէս է աշխարհիս  
օրէսքը»...

— Պալառ —, շնչաց նա և յիշեց նրա  
կոմբալ քիթն ու տարօրինակ քարոզը. «ա-  
ռանց վնասությունարցնելու, վերցրնւ, բեր»...

Այդ բոպէ նրա վրայ մի տարօրիբակ  
զգացմունք եկաւ, որը կասես նրան նոր  
ջահիլութիւն, արիութիւն շնորհեց, և իր  
բոլոր ուժով մղեց դէպի ձին։ Նրա աչքերը  
խիստ լայն բացուեցին, փայլեցին մի տա-  
րօրինակ նայուածքով։ Մի-երկու վայրկեան  
նա այդ գրութեան մէջ ազահ աչքերով նա-  
յեց կարմիր, բարձր, սիրուն ձիուն, դառն  
խոկաց, ապա յանկարծ սանձը զցեց նրա  
զլիխն, ոտքը գրեց ասպանդակը, թռաւ մէջ-  
քին ու կանչեց.

— Գալիս եմ Պալաս, գալիս, ասածդ  
շիտակ է...

III.

Մի շաբաթից Հանէս-ապօր եղը ջրիւ-

տրկել էր. նրա Մարալը տեղն էր, միայն  
այն առաջուայ Մարալը չէր, այլ մի ուրիշ,  
նոր Մարալ։

---

Տէր-Աստուած, ի՞նչ եմ արել Քեզ, որ Դու...  
ու սկսեց գառն հեկեկալ:

— Կուրղին ջան, մատաղ քեղի—, ա-  
սաջ անցաւ գայեակը և գրկեց նրա դու-  
խը,— Աստծու դէմ արտնջալով ի՞նչ կա-  
րող ես անել. զբանով միայն նրա բարկու-  
թիւնը կշարժես:

— Ե՞ն, կատար-ապլա—, արտասուքը  
սրբեց կուրղինը,— մէկ սիրտս բաց, ահս  
մէջը որքան վէրք կայ—. Նրա ձայնը խեղ-  
գուեց կոկորդում և նա անկարող եղաւ այլ-  
ևս շարունակել: Այդ ըստէ նրա մտքի մէջ  
յարեց իր անծայր խեղճութիւնը իր բոլոր  
պատկերով, իր գժբախտութիւնը, իր անոր-  
դիութիւնը. զգաց նա իրեն մի անարգուած,  
վիրաւորուած, արհամարհուած արարած.—  
Աստուած անգամ իր ստեղծածին չի կա-  
մենայ, ի՞նչպէս չտրտնջամ, որ սա վրայ  
վեցերերորդ երեխան է, էլի մեռած կծնի:

Ի՞նչ պիտի անես, բալաս, Աստծու կամ-  
քըն է, պիտի տանիս. գետինն ստեղծուել  
է նրա համար, որ երկնքից ի՞նչ գայ զլսին,  
դարուլ անի:

Այդ լսելով կուրղինն աւելի հաւատաց

## ԳԵՂՋՈՒԿԻ ՎԻՃՏԸ

«Սարի գլխին երկու դոչ,  
«Մինը փնջած, մինը ոչ.  
«Մեռնիմ Աստծու գիւանին,  
«Մինին կտայ, մինին ոչ:  
Ժող. երգ:

I.

**Գոմի** դուռը բացուեց և ճրագի  
աղօտ լոյսի առջե երեաց գայեակ կատարի  
գլուխը:

— Ի՞նչ խաբար—, չպուխը գնչից գէն  
տանելով անհամբեր հարցըրեց կուրղինը և  
վեր կենալով տեղից, երկու-երեք քայլ ա-  
րեց գէպի նա:

կատարը միմիայն լուռ նայեց նրա ե-  
րեսին:

— Օ՛օ, դու չես խօսի... լուռ ես...  
հասկացայ... դարձեալ մեռած է... Ա՛խ,

ի վերուստ եկած պատիժներին, որ մարդ  
արարածը պարտական էր տանելու. և ոչ մի  
ճանապարհ չունենալով այդ անողոք գա-  
լիքներից փախչելու, մի կարեկցութիւն  
խնդրող հայեացք ձգեց դայեակ կատարի  
երեսին և սկսեց նորից հեկեկալ:

— Դէ, չերիք լաս. արտասուք թափե-  
լուց ոչ մի օգուտ չկայ. արտասուքը որ  
դարդի դարման ըլլիք՝ շատ մեռեներ յա-  
րութիւն առած կլինէին: Սառան մեղք է.  
լացիդ ձէնը կլսէ, աւելի կտիրի. չէ որ նրա  
համար մեծ դարդ է, որ կենդանի որդի չի  
բերէ...

Կուրդինը լսելով Սառայի անունը, մտաւ  
նրա զրութիւնը, քիչ սթափուեց, աչքերից  
սրբեց արտասուքը և մրմռաց.

— Է՞ն ինչ արած. որ կասես Աստծու  
կամքն է թող էդպէս լինի, թող Աստուած  
էլ չկամենայ, թող հողով-ջրով կորչինք...  
քանի որ Աստծու կամքն էդպէս է...

Կատարը ցնցուեց այդ խօսքերից. նա  
մի քայլ հեռացաւ Աստծու դէմ խօսող Կուր-  
դինից, զայրացած նայեց նրա երեսին, սա-  
կայն իսկոյն զգալով, որ Կուրդինն այդ ա-  
մենը անում էր իր սրտի կակիծից, անհուն

վշտից, կարեկցեց, մօտեցաւ նրան ու կուր-  
դուրանքով խօսեց.

— Էդ Աստուածը ինչպէս զիտէ չտալ,  
էնպէս էլ զիտէ տալ. չպէտք է նրա դէմ  
տրտնջալ. նա ողորմած է. մեզ՝ նրա ստեղ-  
ծածներիս հարկաւոր է հաւատալ, հնագան-  
դուել և սպասել. Հանգստացիք, բալաս. Սա-  
ռային հարկաւոր է պառկեցնել, տաքացնել.  
ևս գնամ նրա մօտ:

— Գնա—, հազիւ շնչաց կուրզինը, և  
զլուխը թողեց կը ծքին:

Վշտի ծանրութիւնից նա նորից չպու-  
խը տարաւ գնչին, իրար վլայ միքանի ան-  
գամ ծծելով ծխի թանձը քուլաները թողեց  
օդի մէջ, ու ինքը կորաւ այդ ամպ կազ-  
մած ծխի ու մտածութեան անծայր աշխար-  
հի մէջ... նա ե ազում էր ժամանակին ու-  
նենալ հասած որդիք, որ իրեն օգնական լի-  
նէին, ծերութեան հասակում իրեն պահող,  
իրեն անցմանից յետոյ օջախը պահպանող...  
Սակայն տասներեք տարի է, ուզիղ տասն-  
երեք տարի, ինչ նա այլ կերպ էր ճա-  
շակում կեանքի պարգև...

Այդ խոհերի մէջ էր նա, երբ նորից  
ներս մտաւ կատար-ապլան, և թաշկինակի

մէջ փաթաթած մի բան տուեց նրան:

Կուրղինն այդ իրին նայելուն պէս ցընցուեց, մի հուժկու սարսուռ անցաւ նրա վրայով, և նա տարօրինակ գրութեան մէջ զգաց իրեն. կիրքնու խիղճը կասես միատեղ յարութիւն առան նրանում. և նա չգիտէր բարկանար այդ անշունչ իրի վրայ, թէ խըղճար, կարեկցէր նրան... Մեքենայաբար նա թաշկինակի մի կողմը ետ արեց և տեսաւ մէջը մի մսի զանգուած կախ ընկած վերջաւորութիւններով, մի թոյլ ճիւաղ, որ կրում էր մարդու պատկեր, միայն մի բան պակաս՝ շունչ, կենդանութիւն... Եւ երբ նա մանկան տաք շունչը շոշափելու փոխարէն զգաց նրա երեսի մահուան սառնութիւնը մի դառն անէծք կարդաց և ուզեց մոնչալ, կանչել... Սակայն կատար-ապլայի ներկարութիւնից քաշուելով տիրապետեց իրեն և քթի տակ մրմռաց.

— Սա է, սա է էն անիծածը, որ մեռած է եղել մօր արդանդից... Սա է, սա է էն թշուառը, որ բաղդ չէ ունեցել կենդանի ծնուելու...

Ու մեռելը դնելով կուն տակ անցաւ բակը, այնտեղից վերցրեց բանը, և ելաւ

կուրս:

Մարտ ամսի մի մութ գիշեր էր, այնպիսի մի գիշեր, երբ թանձր խաւարը ծածկում է մարդկանց աչքերից և երկինքը և աստղերը. կատաղի հողմերը անկանոն կերպով փշում են աջ ու ձախ, և ահոելի ձայներ արձակում, մարդկանց վրայ սարսուռ թափում. նոր զարթան մանուկ երկիրը դուռը էր նրա արհաւելրքների առաջ:

Սակայն բնութեան այդ խաղն այնքան սարսափելի չէր կուրղինի համար, որքան այն միւս խաղը, որ նա տանում էր կուն տակ դրած...

Գնում էր, ինքն էլ չգիտէր ուր, դէպի որ կողմը. միայն դող-դող քայլերն էին, որ ճամբայ էին. կարում:

Գնում էր...

Յանկարծ հեռուում երևացին սեսև բաներ. կասես գեանի տակից բաած ուրուականներ լինէին, որ բանելով նրա առաջ իրար շուրջ մկնեցին պտոյա գործել կուրղինը այդ երևոյթի առջև սաստիկ ցնցուեց. նրա սիրան սկսեց սաստիկ բաբախել. քայլերը կասես յամբացան տեղում և մի կաշկանդող երկիւղ տիրեց նրան...

«ԱՇ, գերեզմանները... մեռելները»... այրուած ուղեղով շշնջաց նա և յանկարծ յիշեց, որ մի մեռել էլ իր հետ կար, իր կուան տակ. չգիտէր, իր մեռած որդին այդ ըսպէ իր բարկամն էր, թէ մինը այն ողիներից, որոնք գիշերները դուրս են գալիս գերեզմաններից, շրջում են բնակչութեան բոլորքը, մարդ են փնտում, որ բռնեն, վրէժինդիր լինեն նրանց այս աշխարհում իրենց կրած տանջանքների ու տառապանքների փոխարէն:

«Բայց չէ որ սա իմ որդին է... Ոչ... ես հայր եմ... ես պարտական եմ... այս մանուկն ապագայում ինձ աւելի վրէժիւնդիր կլինի, եթէ ես նրան այս ողիների համայնքից հեռու թաղեմ... Ոչ, ոչ, իմ մանուկս այստեղ, այս գերեզմանոցում, սրանց մէջ պէտք է թաղուի... Գուցէ սրանով առաջը կառնեմ այն բանի, որ այսուհետեւ ծնուելիք որդիքս էլ մեռած չլինին... Այսպէս շարունակուելը գուցէ միւս որդիներիս անէծքն է, որ գերեզմաններից հեռու, ամէն մէկին մի տեղ եմ զցել... Այն, այն, իմ որդիս այստեղ պիտի թաղուի... Բայց —, յանկարծ կանգ տուաւ նա, — արածս արդեօք

մեղք չէ, արդեօք Աստծու դէմ չի լինի. եթէ Տէր-Միսիթարն իմանայ, չի նեղանայ... Չէ որ նա իրաւունք չի տալիս —, էլի կանգ տուաւ նա, նորից նայեց չորս կողմը, և տեսաւ, որ ոչոք չէր երևում, խօսեց, — ԷՇ, Տէր-Միսիթարը ողտեղից պիտի իմանայ. դուրսը մութն է, ոչոք չկայ, տանիմ թաղեմ...

Ու շարժուեց առաջ:

Այս անգամ գերեզմանների քարերը սև, ահուելի ժանիքների նման ցցուեցին սրա դիմաց սպառնալի տեսքով. Նրանք կարծես աղաղակում էին չմօտենալ իրենց, չխանգարել իրանց անդորրութիւնը: Կուրղինը կանգ տուաւ: Հեռուից կասես փափառց էր լուսում, մարդկանց ոտնաձայն գալիս, ողիների ներկայութիւն զգացւում... Դողը պատեց նրան, և նա ընկաւ մի տեսակ կախարդական վիճակի մէջ, որ արդէն իրեն տիրապետողը կառավարողը ինքը չէր, այլ մի անյայտ ձեռք, աներենյթ բան...

...Զը՞ը՞նդ, յանկարծ բահը ոիսչում է գերեզմանսաքարերին, սարսուեցնող ձայն է արձակում. գերեզմանների խորքերից կասես մեռելների ձայներ են գալիս, որ բո-

դոքում են իրենց զիշերուայ խաղաղութիւնը խանգարելու համար... Բայց ոչ, նրանք բողոքում են, որ իրենց սրբութիւնը ապահում են, անկնունք մեռել են բերել թաղելու իրենց շարքում։

...Զը՞ը՞նդ, նորից լւում է բահի ձայնը. Կուրդինն սթափում է ձայնից, նայում է ետեղ, տեսնում է թաշկինակի մէջ փաթաթած ընկած նորածինը, որի դէմքի հետ խաղում է քամու շարժումից փողփողով թաշկինակի ազատ ծայրը. մանուկն այդ բոպէ երեսում է նրան որպէս մի ողի, մանրւկ, անմեղ, տանջուած, բողոքող ողի...»

Նա զգում է կատաղի ցուրտ քամի, սասնութիւն, սակայն քըտինքը հոսում է ճակատից. ձեռը տանում է քըտինքը սրբելու, զգում է, որ մարմինն այրւում է կրակների մէջ, մինչդեռ ճակատը սառն է ինչպէս սառոյց... Եւ այդ վայրկենին կասես մի օտար ձեռք վերցնում է մանկանը, շալրում արդէն պատրաստած փոսիկի մէջ, ու շտապշտապ հողով ծածկում... Նա ուզում է թողնել հեռենալ։

...Զը՞ը՞նդ, լւում է նորից հնչիւն. Նա շփոթում է. հնչիւնը կըկնուում է. Նա նա-

յում է շուրջը, բահին. բայց այս անգամ զնգացողը բահը չէ, այլ եկեղեցու կոչնակը. Նա աւելի քան շփոթում է, խլում է բահը, զնում կռան տակ և քայլերն արագացնում դէպի տուն։

Թէ ինչ ճանապարհով էր գնում, ինչպէս, նա չէր զգում, միայն սաստիկ շտապով փախչում էր արդէն լոյսին տեղի տուող խաւարից, զանգերի ձայնից, Տէր-Միկթարից...

Եւ դարձեալ միքանի բոպէ... Նա արդէն սառը քըտնքի մէջ կորած, խելքը կորցրած, դողացող մարմնով, արցունքն աչքերին, թուլացած ընկած է իր տանը, Սառայի ոտքերի տակ։

— Կուրդին, Կուրդին ջան, հանգստացիր, ինչ ես էղպէս յուսահատ լալիս, երեխայ հօ չես. Աստուած ողորմած է —, պառկած տեղից հաղիւ գլուխը բարձրացնելով թոթովեց Սառան։

— Ակա, Ասուա ջան, չզիտես սիրտս ինչ տեսակ աղույած է, գարդս ինչքան խորունկի...»

Ա.

Սառան ձեռքերն ու ստքերը քուրսուտակ կախած, կարկատած շալը ուսին, ստուծ հայեացըլ մաշուտծ կարպեախն յառած, լուռ անձնասառը էր եղել իրեն վըշաերին:

Ընդամենը երկու օր էր, ինչ պառկած տեղից վեր էր կացել նա: Առանց այն էլ արնաքամ եղած, չորացած մարմինը թոնրատան դոնից ու երթկից փչող սառը քամիներից պաշտպանելով զգում էր իրեն ինչոր անհասկանալի վիճակի մէջ. մտածում էր.

«Ի՞նչու համար է էսպէս, որ սա արդէն վեցերորդ որդին եմ բերում, դարձեալ մեռած. ախար սրա մէկըլ»... Եւ չղանելով ոչ մի պատասխան իր հարցին, մնում էր անորոշ դրութեան մէջ կարպեախն նայելիս:

Սպա այն չքաւորութիւնը իր սարսափեցնող կերպարանքով... Մի-երկու դատարկ կարաս, որոնց վրայ հանգչում էին նոյնպէս դատարկ բերանիվայր դրած կճուճները, իւղի համար շինած հաստիկ ու կարճիկ ծա-

պը, որոց մէջ ոչ էրիշտայ կար ոչ կորկոտ, ոչ բուրդ ոչ մանած, ոչ իւղ ոչ պանիր, ոչ թթու ոչ աղը զբած բան. դատարկ-դատարկ... այնպէս դատարկ ինչպէս իրենց գոմը, ուր միայնակ իրենց բող կովս էր կանգնած, ուրը նոյնպէս ողեկորոյս էր, ինչպէս ինքը Սառան... Այնտեղ էլ բաց երթկից և կտուրի ծակերից փչում էր սառը քամին և նրա մազերը նիհար մարմնի վրայ բիղ-բիղ կանգնեցնում... Եւ այդ չքաւորութիւնը, անբաղդութիւնը, որ քեասիպի անբաժան ընկերներն են, երբէք-երբէք այնպէս անողոք կերպարանքով չէին երևան եկել իրենց բոլոր թափով, ինչպէս այդ օրը, այդ ժամին:

Սառան դեռ այդ ընդարմացած յուսահատ դրութեան մէջ էր, որ անախորժ կերպով տան դուռը ճոռալով բացուեց և ներս մտաւ կուրղինը:

Կուրղինն էլ նոյնքան ընդարմացած էր, որքան Սառան. խեղճութիւնը, չքաւորութիւնը, անբաղդութիւնը նոյնքան նրա գէմքին զրոշմուած էին, որքան Սառայի: Նա մոլոր քայլերով մօտեցաւ դատարկ կարասների շարքին, մէջքը գէմ տուեց նրանց և մի լուռ, մաշող հայեացք ճգեց չորս կողմը, մի

խղճալի-կարեկցական նայուածք կնոջ երեսին, և անզգայօրէն գէմքը յառեց ձեզունին:

Այդ բոպէ տան կտուրեց սաքի արոփիւն լսուեց: Երթկի բացուածքում երկեցաւ մի անորոշ կերպարանք:

- Կուրղին ափար:
- Ո՞վ է.
- Ես եմ:
- Դու ով ես:
- Ժամկոչ էլպակը:
- Ինչ՝ է:
- Հայդէ երթանք:
- Ինչի, ուր:
- Ժամի պարիսպը. հուաքուել են քեզի կկանչեն.

- Ո՞վ:
- Տէրտէրը, գեղացիք:
- «Տէրտէր», — ականջում ուժզին արձագանք տուեց էլպակի ձայնը և բոպէ-ապէս սարսափը տիսեց կուրղինին. Նա մի դառը բան նախազգաց, և ակամայ հարցըց:

- Ինչի համար կկանչեն. չխտե՞ս:
- Տղայ ես թաղէ, ինչ է, տեղէն

հանել են:

«Հանել են...

Այդ խօսքն արդէն հերիք էր, որ սարսափը կայծակի նման տրաքուէր նրա գըլխին: Երեխան գերեզմանից հանելու հետ շատ բան էր լոյս աշխարհ հանւում, այնպէս, ինչպէս ոճրագործի եղեռնագործութիւնը բաց անելու համար գտնւում է մի զլիաւոր փաստ, մի ապացոյց:

— Ասիր «հանել են»—, անզիտակցօրէն հարցրեց նա, — ով է հանել, տէրտէրը:

— Ո՞չ, շունը:

«Շունը...

Այս հօ աւելի խայտառակ էր և աւելի սարսափելի քան առաջինը:

Կուրղինի մէջ կորաւ, հալուեց ամեն ինչ, թէ արիութիւն և թէ գիտակցութիւն. Նոյն իսկ կուրղինն ինքը հալուեց-մաշւեց և իր բանը վերջացած համարեց: Նա այդ բոպէ զգաց իրեն հոգով-մարմնով կորած... Թաղման գիշերը ամբողջապէս պատկերացաւ նրան իր դաժան և մռայլ կերպարանքով:

— Ի՞նչ, ի՞նչ—, իրար վրայ կըկնեց Սառան—, հանել են... շունը... շունը հանել

է... և տեղում մնաց քարացած։ Նրա դարպը կարծես իրեն հերիք չէր, այժմ այդ խայտառակութիւնն էլ աւելացաւ, որ կասես նրան երկնքից գիտին զցեց, սաղսաղ սպանեց։ Նա մի անոյժ ճիչ արձակեց և ընկաւ բուրսու վրայ։

— Սառա՛, Սառա՛, ինչ կանես, երեխայ հօ չես, Սառա՛, հանգստացիր։

— Է՛, ինչ հանգիստ, քանի որ գերեզմանի մէջ անգամ հանգիստ, չունինք... Քետոփու ու հանգիստ...

— Ի՞նչ կարող ենք անել. Աստծու կամքն է. մեր ճակատին էդպէս է զրած, պիտի տանինք։ Կատարապլան կասէ, «գետինն ստեղծուել է նրա համար, որ երկնքից ինչ զայ զլիին, զարու անի»։

Գետինը... հողը... մենք... իրար խառնեց Սառան, աչքերից սրբեց արտասուքը, մօտեցաւ ամուսնուն, սերտ կպաւ նրան, իր միակ մխիթարանքին ու սփոփանքին այս անողոք աշխարհում։

Սակայն այդ ըոսկէ ուրիշ էր Կուրդինի մտածմունքը, ուրիշ էր նրա դարդը. — Ի՞նչ պատասխան պիտի տար տէրտէրին, ի՞նչ պիտի ասէր հաւաքուած ամբոխին... Եթէ հնար

լինէր ամենեին տանից գուրս չգալու՝ նա դուրս չէր գայ, և չէր գնայ ամբոխի մէջ. սակայն այդ անհնար էր. Եթէ չգնար՝ զօրով կտանէին, և ետինն աւելի վատ կլինէր քան իրեն ոտքով գնալը. Ի՞նչ անէր. հարկաւոր էր գնալ։ Նա դողդող ոտքի կանգնեց, ոյժերն աշխատեց հաւաքել և քայլերն առաջ շարժեց։

— Ասուուած ջան, Դու օգնես ինձի—, մեղմ հառաչ արձակեց նա, համբուրեց Սառայի ցուրտ, արցունքներով թրջուած այտերը, և յամը քայլերով ելաւ դուրս։

### III.

— Զար Յուլիանոսնէր, Հերովդէսնէր. անաստուածնէր, անհաւատնէր. թուրքնէր, քրդեր. կուապաշտնէր, հեթանոսնէր. անիծեալնէր, նզովեալնէր. դեեր, սատանաննէր. օձեր, մողէսնէր. գորտեր, խլուրդնէր. որդեր, ճիճուննէր. Մեհրուժաննէր, Վասակնէր. ուրացողնէր, կուրացողնէր. Աստծու պատուիրանը մոռացողնէր, պաս ուտողնէր, անարժաննէր, փշեր, փուշ կենդանիննէր. գարշելիննէր, Լուսաւորչի խողեր...

— Հերիք եղաւ, տէր-հայր, հերիք.  
հանգստացիր:

— Աւանակներ, ջորիներ. մկներ, աշքիսներ, տաշտէ կռնակներ (կըիայ) փորսուղներ. մարդագէլներ, աղուէմներ. վեստ Սարզիսներ, Յուղաներ. կենդանի մեռելներ. անթաղ մարմիններ. չնչհաւատներ. Աստծուաչքից ընկածներ. սատանի ձագեր. դժոխւքի կոճեր...

— Դէ հերիք, հերիք... բաւական է...  
— Զէնդ կտրէ, փուչ արև, փուչ կալ.  
կալ. մէկն էլ դու չես հա, որ հերու չէ առաջի տարին Աստուածածնայ պասին մունտառ բուկդ չկարացիր պահէ, պասդ կերար:

— Ի՞նչ էնէի. հիւանդ էի. թողութիւն էրա—, համարձակ, քիչ էլ յանդուգն պատասխանեց մի դեռահաս երիտասարդ:

— Հիւանդ էիր. հա. գիտեմ. բկի հիւանդ էիր:

— Սուրբ կարգդ վկայ:  
— Որ հիւանդ էիր, ապա ինչի՞ չմեռար:  
— Ի՞նչ կխօսի—, զայրացած քթի տակ մըմոաց երիտասարդը:

— Մխլուն կերար, լաւացար, հա. դոնդո...

— Տէր, մեղայ Քեզ—, նորից մըմոաց երիտասարդը:

— Դէ լաւ. դու էլ սնւս կայ. կտեսնիս, բարկացել թուրքի մոլլա է կտրէ, հետը խօսել չիլի—, նկատեց պաս ուտող երիտասարդին նրա մօտինը:

Երէցը նորից մէկ անգամ նայեց հակառակ խօսող երիտասարդին, ապա միւսների վրայ կանչեց.

— Բոլորդ էդ խալթը կանէք, բոլորդ. հօ մենակ նա չէ. բոլորդ էլ փչացել էք:

Այդ ժամանակ հեռութից երկաց կուրզինը: Նա կտուրների վրայով անցնելով մօտենում էր ամբոխին:

Տէր-Մխիթարը, որ ամբոխի մէջ տեղում հերոսի պէս կանգնած բարկութիւնից մռնչում էր աջ ու ձախ, տեսաւ կուրզինին: Նա թողեց ամբոխը և կրակոտ հայեացքը յառեց կուրզինի կողմը:

Կուրզինը հեռութից նկատեց Տէր-Մխիթարին նրա կըծքին փռուած լայն մօրուքով, կրակոտ, չուծ աչքերով. նկատեց և շանթահարի պէս եղաւ:

Օ՛-օ, ինչպէս նա մօտենար այդ կրակ կտրած մարդուն, որ ողջ գիւղը կուռկուոի

ձագի պէս իր առջելը կուչ էր բերել. այդ  
կրակը իրեն ողջամբ կայրէր... Նա մի բո-  
վէ կանգ առաւ, որոշեց ետ դառնալ բայց  
այդ բովէ Տէր-Մխիթարի հայեացքը նորից  
դիպաւ նրան, և նա տեղում կասես մեխ-  
ւեց. տեսաւ, որ ետ գնալ այլ ևս անհնար էր:

Տէր-Մխիթարը մօրուքը ցցեց, մասով  
ցոյց տուեց նրան ու կանչեց.

— Հրէն, հրէն եկաւ պիղծը, հրէն—,  
և գաւազանը մեծ-մեծ զցելով շարժուեց  
դէպի նա:

Կուրղինը, որ մինչ այդ արդէն հասել  
էր ամբոխին, քարացած մնաց երէցի առջեւ,  
լեզուն կապ ընկաւ բերանում:

— Եկար, հա, փշանալու. հիմի գաւա-  
զանս փորդ կոխեմ... Էդ ի՞նչ է արածդ:

Գիւղացիները տեսնելով քահանայի ծայ-  
րահեղ բարկութիւնը և մտածելով, չլինի  
թէ նա այդ կրակ կտրած ըովէին մի փոր-  
ձանք բերէ, կտրեցին նրա առաջը, չժողին  
մօտենալու:

— Թողէք, թողէք ինձի դրան սպանեմ:

— Տէր-հայր, մեզ բաշխիր. կխնդրենք,  
հանգստացիր:

Քահանան պահեց իրեն, մի բայլ ետ

արեց ու դառաւ.

— Ասա տեսնիմ, փուչ փչանալու, էն-  
քան օծած մեռելների հոգուն ինչ պատաս-  
խան պիտի տաս, որ քու մունտառ ան-  
կնունք լակոտիդ համար էնքան մեռելների  
հոգին պղծեցիր... Ասա տեսնիմ, քեզի ով  
իրաւունք տուեց, որ մեր Լուսաւորիչ պա-  
պայի դէմ էդ տեսակ մեզք գործես, գե-  
րեզմանները մունտուես, էնքան մեռելների  
հոգին դժոխքի բաժին դարձնես... Մահի  
արա, տես ի՞նչպէս մեռելների հոգիները  
երկնքից զլխիդ նզովք կկարդան. նզովուիս  
դու, նզովուիս... Զէն հանէ, ձէն. ինչի ես  
սուս կեցէ:

— Մեմեմեղաւոր եմ, թողութիւն  
էրա—, ճիալ ծոելով կմկմաց կուրղինը:

— Ասենք Աստծուց չվախեցար. բա  
էնքան մեռելներից էլ չվախեցար:

— Թո-թո-թողութիւն էրա—, նորից  
թոթովեց կուրղինը և զլուխը բոլորովին քաշ  
արեց կրծքին:

— Սրան նայեցէք—, երեսը դէպի ամ-  
բոխը դարձնելով շարունակեց երէցը.— զի-  
շերը մունտառ մեռելը ծածուկ տանի գե-  
րեզմանները թաղէ, յետոյ էլ գայ ինդրէ,

թէ «Թողութիւն էրա»:

— Մեմեղաւոր եմ, գողողաց կուրդինը, և սկսեց դառն հելեկալ ու արասասուք թափել. նա այդ բովէ խեղճ էր ինչպէս ՚ի ծնէ գերի, թոյլ իրեւ մանուկը, և նուաստացած իրեւ ոչընչութիւն:

Քահանան տեսաւնրաարասասուքիկաթիւները, որ յորդ կերպով թափուելով աչքերից այտերի վրայով գլորւում էին ներքև։ Այդ երեսյթի առջև նա զգացուեց, խղճաց կուրդինը և խօսակցութեան տոնը փոխելով դառւ.

— Իհարկէ մեղաւոր ես. մեղաւոր ըլլիլդ նրանով երեցաւ, որ Աստուած պատիժը ինքը ուղարկեց, լայեղ անզամ չարեց, որ մարդիկ գնային մունտառ մեռելդ տեղէն հանէին, շունը դրկեց հանելու... Հիմի տեսա՞ր որտեղ է Աստծու դատաստանը...

Այդ խօսքերի մէջ այնքան դառն վիրաւորանք և արհամարհանը էր գտնում կուրդինը, որ վեր էր ամեն տեսակ վշտից ու նեղութիւնից. այդ անպատւութեան առաջ նա ուղում էր փղձկալ, թափել սրտում կուտակուած դարդը և լճացած վիրաւորանքը, սակայն քանի որ ասովը երէցն էր, Թրիս-

տոսի փոխանորդը, ի՞նչ պատասխան տար. չէ՞ որ նա աւելի լաւ էր հասկանում Աստծու խորհուրդը, քննել է երկնքի ու գետնի երեսը, ուրեմն էլ ինչպէս վիրաւորուէր իզուլ և բողոքէր անտեղի, քանի որ տէրտէրը չէր ասում անձնական հաշիւներից, ոյլ Աստծու կողմից, պաշտօնից. պաշտօն, որ նրան՝ի վերուստ էր տրուած և ոտքը էր... «Ո՛չ, տէրտէրն իրաւոնք ունի, ես եմ մեղաւորը», շշնջաց նա և նայեց երէցի երեսին, տեսաւ նրա մեղմացած դէմքը, զրանից սիրա առած դառւ.

— Տէրտէր ջան, ախր ես էլ մարդ եմ, հօ ոտքի տակի հող չեմ. ես էլ բան կզգամ. մէկ ինձ էլ հարցըու, իմացիր դարդս ի՞նչ է, ետեւ բարկացիր... Ախր ես էլ հէր եմ. ի՞նչ էնեմ, ի՞նչպէս չէրուիմ, որ սա վրայ վեցերորդ երեխան է, դարձեալ մեռած կծնի, ոչ կիսունքի կհամնի, ոչ էլ հայ-ըրիստոնէի թաղման կարժանանայ... Որդիքս ամեն մէկը մի կողմ եմ թաղել, իսկի հիմի տեղերն էլ չգիտեմ, թէ որը որտեղ եմ զցել... քանի որ միտքս կընկնին՝ քթիս ծակերէն մուխը գուրս կուգայ... Որ սաղ էին մնացէ, հիմի վեց մանչ զաւակի տէր կըլլէի, օջախ

կշեննար, ժամանակին մենք էլ մեծ օջխի  
անուն կհանէինք։ Ասի էս մի աղէն տանիմ  
գերեզմաները թաղեմ, գուցէ գրանով մեռած  
երեխայ ծնելու առաջն առնիմ. գուցէ գրա-  
նից յետոյ երեխաներս կենդանի աշխարք  
դան... Թողութիւն էրա... Մեղաւոր եմ...  
կինզրեմ. մի բարկանայ, մի անիծէ... թէ  
չէ ընկերս—Առան հիւանդ է, իմանայ ա-  
նէք ու բարկութիւնդ, տամլայ կրերէ  
(կաթուած լինել)... հազիւ վերջացրեց նա  
և արտասուբի մէջ խեղուած չոքեց նրա  
առջև։

Քահանան այդ լսածի և տեսածի առջե  
մնաց քարացած. նա կասես առաջին անգամ  
էր տեսնում գեղջուկ ծնողի մեծ ծով դար-  
ձած վիշտը իր օջախի և զաւակների վե-  
րաբերմամբ. այդ բոպէ կուրղինը նրա առջե  
մի կատարեալ կենդանի զիրք էր, մարմա-  
ցեալ վիշտ, որ տեսնում էր և շոշափում.  
Նա բարկութիւնից սթափուեց, մեղմացաւ,  
կարեկցեց և ձեռը քնքուշօրէն զրեց նրա զըլ-  
խին։

Այդ երեսյթից զիւղացիք սիրտ առան  
և չորս կողմից վրայ բերին.

— Թողութիւն էրա, տէր-հայր, թո-

զութիւն էրա, մենք էլ կիսնզրենք. մի սխալ-  
մունք է, եղել է. մեղք է, նայիր, մի սահ-  
թուայ մէջ խեղճը առջնդ ինչպէս աղի պէս  
հաղաւ։

Տէր-Միսիթարը խօսող հայեացքով նա-  
յեց ամբոխի երեսին ու դառաւ.

— Եաւ, կներեմ. բայց իմ ներելով ինչ  
կլինի, քանի որ մեղքը սրբուած չէ. վեր-  
ջապէս մենակ հօ էդ մեղքը չէ, որ ձեր  
զզին ծանրացել է. Էլի ինչքան մեղքեր  
կանա...»

Ամբոխն իսկոյն հասկացաւ, թէ Տէր-  
Միսիթարը զրանով ինչ էր ուզում հասկաց-  
նել, ինչ բանի էր ակնարկում. բայց նոր  
մէկից խօսելու և յուզուելու տեղիք չտալու  
համար լոեց։

Սակայն Տէր-Միսիթարը ուշադրութիւն  
չդարձնելով նրանց լուռթեանը նորից բոնկեց։

— Իհարկէ, էգպէս կլինի. Էս քանի  
տարի է ասելով բերանս մազ բուսաւ, թէ  
էս գերեզմանատուն է, հօ թուրքի գոռ չէ,  
որ թողել էք առանց պարսպի. Էլ գառ, էլ  
հորթ. Էլ եզ, էլ կով. էլ ձի, էլ ջորի. Էլ էշ,  
էլ գոմէշ. Էլ շուն, էլ գէլ. Էլ կատու, էլ  
մուկ. Էլ չգիտեմ ինչ հօրս ցաւը ասես, որ

վրայով չեն անցնի. Եկէք միքանի սէլ քար  
թափենք, պարիսպ շինենք. չեղաւ-չեղաւ...  
Էնքան չարիք ո՞որ, բանն էստեղ հասուցիք,  
որ շներն սկսեցին գերեզման փորել, մեռել  
հանել... Պարիսպ որ ըլիք, հօ էս փուշը  
իրեն մունտառ մեռելը չէր կարայ տանի  
թաղէ, որ շունն էլ ետեից դնար հանէր...  
Տեսէք, երկու սրբազնութիւն միասին կա-  
տարուեցին, մեզի մեղքի մէջ կորուցին. դրա  
յանցանքը ումն է... իհարկէ ձերը: Հիմի էլ  
կայնել էք, կասէք, «Տէր-Մխիթար, թո-  
ղութիւն էրա»: Տէր-Մխիթարն ինչ էնէ.  
զլուխը ո՞ր քարին տայ, քանի որ էս տեսակ  
բաներ կտեսնի, ի՞նչպէս թողութիւն տայ:

Այդ ժամանակ մի սպիտակ մօրուքով  
ծերունի, որ երկար ժամանակ հեռուում  
նստած լուռ դիտում էր, ցուպի օդնու-  
թեամբ առաջ շարժուեց ու ասաց.

— Տէր հայր, մեռնիմ օծեալ կարգիդ,  
բոլոր ասածդ իրաւ է, բայց բարկութիւնդ  
աւելորդ: Ճշմարիտ է, մեծ մեղքը մերն է,  
որ մինչ օրս գերեզմանները թողել ենք առանց  
պարսպի, բայց հիմա, որ էս փորձանքը պա-  
տահեց, խօսք ենք տալիս, որ աշունը գա-  
լու պէս անպաճառ շինենք:

Ծերունու խօսքերի վրայ քահանայի  
գէմքը փայլեց մի անհուն ժպիտով. շրթունք-  
ներին կասես վարդ բացուեց, բերանում  
երեացին մարգարիտներ: Անհուն ուրախու-  
թեամբ հարցրեց.

— Հաստատ խօսք էք տալիս:  
— Հաստատ—, միաբերան գոռաց ամ-  
բոխը:

— Էն կանաչ մեռնը:  
— Էն կանաչ մեռնը—, կրկնեց ամ-  
բոխը:

— Էն կարմիր աւետարանը:  
— Էն կարմիր աւետարանը:  
— Դէ որ էգպէս է, ես էս մարդուն  
կներեմ, գուք էլ ձեր խոստումը մտքերդ  
պահեցէք: Դէ, որդի, վեր կաց. կներեմ.  
Աստուած թողութիւն շնորհեսցէ:

Կուրդինը նրա աջը համբուրելով վեր  
կացաւ չոքած տեղից:

— Միայն միւս անգամ, թէ որ կնի-  
կըդ էլի մեռած տղայ բերէ, չհամարձակուիս  
տանելու գերեզմանները թաղելու:

— Ո՛չ, չեմ տանի—, աչքերը ներքե  
խոնարհած հազիւ արտասանեց կուրդինը:

— Դէ, մնաք խաղաղութեամբ—, դառ-

նալով դէպի ամբոխը հրաժեշտ տուեց քահանան և հեռացաւ. — հա, Էլպակ, իրիկունս զանգերէն առաջ գնա բուրփառն ու խաչը ժամէն բեր, ես էլ մաշտոցս կառնիմ, երթանք մունառած գերեզմանները սրբալուայ էնենք, էնդից գնանք ժամ ասենք:

— Ծառայ եմ սուրբ կարգիդ, ձեռքը սրտին տարաւ էլպակը և հետեւց քահանային:

— Ովկէ, անձախ պրծանք, խորը շունչ քաշելով վրայ բերին միքանիսը:

— Շատ էր բարկացէ, համա էսպէս հէջ չէր բարկացէ. էս անդամ իստակ թուրքի մոլլա էր կարէ:

Երէցի գնալով կուրղինը մի փոքր թեթևութիւն զգաց, սակայն այդ թեթևութիւնը ինչոր խաբուսիկ, շինծու թուաց նրան. նազգաց, որ իր տանջանքը ոչ քահանան էր, ոչ էլ նրա յանդիմանութիւնը, այլ մի ուրիշ բան, որ ուրուրի պէս իր սուրբ ճանկերը իրել էր նրա սիրաը, ծակում էր, ուտում էր...

— Դէ գնա կուրղին ջան, գնա բալամ տուն. շատ մի միտք էնէ. Աստուած դարդն ու ցաւը մեզ համար է ստեղծէ. պիտի տանինք, ինչ կարանք էնէ. գնա տուն, գորսվալի կերպով, բայց կասես սիրտ ծակող

տոնով միտք յայտնեց ծերունին և խանդակաթ նայեց նրա երեսին:

Այդ խօսքերի վրայ կուրղինը փոխանակ մխիթարուելու, աւելի վիրաւոր և արհամարհուած զգաց իրեն...

«Դարդն ու ցաւը մեզ համար է, ի՞նչ պիտի անենք»... խօսքերը ծակում էին նրա ուղեղն ու սիրաը... Եւ չգիտէր, չէր կարող հասկանալ նա, թէ ինչու այդ դարդից ու ցաւից իրեն աւելի շատ բաժին էր հասած, քան մի ուրիշին, մինչև անգամ շատ շատերին, նոյն իսկ նստած ամբոխին, որոնք աշխարհի դառնութիւնների նմուշը շատ քիչ էին ճաշակել...

Եւ նա զգաց իրեն կատարելապէս մենակ, անտէր, թշուառ, անզաւանկ... Ու այլ ևս չկարաց իրեն պահել, երեխայի պէս բարձրը հեկեկաց, գառն հեծկլաց, խոկաց իրեն շրջապատող գառն վիշտը, արտասուքը հեղեղի պէս վազեցրեց աչքերից և դող-դող քայլերն ուղղեց դէպի տուն, իր սառն յարկի տակ, քուրսու քով նստած, չորացած, կուչ եկած Սառայի մօտ իր խորունկ դարդն ու դառն վիշտը ողբարու...

արմավ և անձնային բնակչության գոված խոշո  
ռանու և անուղղական տեսքով առաջ քաղաքացի և անձ  
նականական պահապահության մեջ գտնվության դրա  
շահագործ անընդունակ պահապահություն առաջ առաջ անձնա  
նական պահապահության մեջ գտնվության դրա  
շահագործ անընդունակ պահապահություն առաջ առաջ անձնա

### Մ Ե Գ Ն Ի Ս

(Եռէր պ. Ղազ. Կայալեանին)

Լ.

Ա եպաեմբեր-հոկտեմբեր ամիս-  
ները որ վրայ էին հասնում, վտապան շի-  
նող Գաբրիէլի առնը դառնում էր կատա-  
րեալ որբի դուռ. պատուէրները աեղում  
էին իրար ետից և Գաբրիէլը չգիտէր ո-  
րին հասնէր:

— Վարպետ, վառարանը քանդուել է,  
հարկաւոր է նորոգել. խնդիմ վաղը դաք  
շինէր:

— Վարպետ, շինութիւնը վերջացրինք,  
վառարանը մնացել է զնելու. խնդրեմ դաք:

— Վարպետ, վառարանը ծուխ է ա-  
նում:

— Վարպետ...

— Զեմ կարող դար, չէ. դործ շատ

ունիմ, ուրիշը տարեկը:

— Ուրիշ վարպետ չենք ուզում, քեզ  
ենք ուզում:

— Ես շուտ չեմ կարող դար, դործն  
շատ է. կուշանամ:

— Վնաս չունի, թող ուշ լինի, միայն  
թէ եկ:

— Թէ փողի բան է, ասա:

— Ոչ, փողի բան չէ. ժամանակ չու-  
նիմ, հասկանում էք, ժամանակ. (մինչեւ ձեր  
դալը պատուէրներ շատ եմ ստացել, ) չեմ  
կարող հասցնել:

Սակայն ոչոք չէր համաձայնում, որ ու-  
րիշ վարպետ կանչէր. «Թող քիչ ուշ լինի,  
միայն թէ Գաբրիէլի ձեռով լինի»:

Գաբրիէլը, Գաբրիէլը. այնքան շնոր-  
հալի էր վառարան շինող Գաբրիէլը: Բայց  
ինչ արած, որ այդքան շնորհալիութեան  
հետ նա ունէր մի մեծ պակասութիւն՝  
խմում էր: Երբ նրա խումը զալիս էր, վա-  
ռարան շինել չէ՝ բոերով որ ոսկի բաշխէին,  
աչքին չէր երևայ. նա պէտք է իրենն ա-  
նէր. մի լաւ պէտք է կոնծէր, մի-երկու օ-  
րով արբած մնար, ապա թէ ծանր զլիով  
դործի գնար:

— Այ վարպետ, հէջ բան որ չէ, ափսոն է քեզ. մէկ նայիր, ինչ ես դառել: ինքը շնորհով մարդ, սաղ քաղաքին յայտնի, ամեն տեղ անունդ կխօսին... ինքը էդ տեսակ խմին գերի: էդ զահրումար խմելն ինչ է, որ չես կարող վազ գալ. ամօթ չէ՛ք —, մի անգամ առաւօտեան պատահելիս նրան յանդիմանեց իր քաւորը. — մի մտածիր, տնաշէն, ինքդ կնոջ ու երեխաների տէր, հասակդ յիսունին մօտիկ... ջահիլ էլ չես, որ ասեմ, թէ անձիդ չես կարող տիրել. ափսոս չէ քեզ, որ գինեսներն ես քաշ գալիս, ու էնտեղից շատ անգամ քեզ ձեռքերի վրայ են տուն բերում... էդ հաւա հերիք չէ, կօշիկդ չարժողն էլ վրէդ խօսի... Ափսոն...

Քաւորը մինչդեռ խօսում էր, Գարրիելը պատկը քաշացնում էր:

— Ասա, շիտակ չէ ասածո:

— Շիտակ է, քաւոր ջան, շիտակ —, պլուխը բարձրացնելով հաղիւ լսելի ձայնով խօսեց Գարրիելը:

— Նայիր, երեսիդ գոյնը կատես մեռելի գոյն լինի, էնքան որ խմելուց դադիացելդինել է. եթէ ինքդ քեզ չես խղճայ,

գոնէ մանրուխոշորիկդ խղճա, կնոջդ խղճա, Ասաւուած ունեցիր:

— Լաւ ես ասում, քաւոր ջան, լաւ:

— Լաւ ասելուցս ինչ օգուտ. աշխարքի երեսին լաւ բան շատ. մեզի՞ ինչ, մեր ձեռքն ինչ կընկնի. դու կատարելն ասա:

— Կատարելը —, ինքնարերաբար արտասանեց Գարրիելը, — ինչ կատարել:

— Զիմես:

— Զիմեմ, հը, չիմեմ —, ինքն իրեն այս անգամ հարց տուեց Գարրիելը և ընկաւ պատասխանի ետեից, թէ ինչպէս չխմէր. կամ կարող էր արգեօք չխմել:

— Այս, չիմես. ինչ, դժուածը բան է:

— Դժուար չէ. ինչի՞ է դժուար:

— Թէ որ չէ, էլ ինչ:

— Լաւ կլինի, քաւոր ջան, էլ չեմ խմի —, վճռական կերպով խոստացաւ Գարրիելը:

— Հաստատ խօսք ես տալիս:

— Հաստատ —, աշքերը թարթելով հղուխը շարժելով ձայնեց Գարրիելը. — հաստատ քաւոր ջան, հաստատ:

— Տես, սանահէր, խօսքիդ տէրը լինիս, էլ չիմես, թէ չէ էլ անունդ չեմ տայ:

— Են զրկած մեռնդ վլայ:

— Լաւ:

Քաւորը խիստ ուրախացած, որ Գալրիէն այլ ևս խմելու չէր, Գաբրիէն էլ խիստ ուրախացած, որ քաւորը պատճառ դարձաւ իրեն այլ ևս չխմելուն՝ իրարից զոհ բաժանուեցին:

II.

Երեկոյեան դէմ էր: Գաբրիէլը գործը վերջացրած վերադառնում էր տուն: Քաւորի խօսքերը գեռ նրա ականջումն էին: Նա մեծ հրճուանքի մէջ էր, որ խօսք էր տուել կնքահօրը և առաւօտից մինչև երեկոյ կարողացել էր չխմել: Դա հօ կատարեալ յաղթութիւն էր: Գաբրիէն այնքան էր ուրախացել դրանով, որ մի վառարանի փոխարէն կասես երկուսը շինած լինէր:

«Այն, այն, լաւ է ասում քաւորս. խմելն ինչ բան է. մեղք եմ. եթէ ես մեղք չեմ, կինս ու որդիքս են մեղք. սրանից յետոյ էլ չպիտի խմեմ. տես, մի օր չխմեցի, ինչ եղաւ, հօ չմեռայ... մանաւանդ որ քաւորիս խօսք եմ տուել»:

Եւ շարունակում էր ճանապարհը:

Նրա տունը գտնուում էր քաղաքի ծայրում, մի թմբի վլխին, որի ծինելոյզից բարձրացող ծուխը երկում էր հեռուցից:

Գաբրիէն արդէն մօտեցել էր տանը, հարկաւոր էր անցնել էլի մի 100 քայլ, և նա արդէն տանը կլինէր. բայց այդ 100 քայլ տարածութեան վրայ, ճանապարհից քիչ ներքեւ, կար մի օղետուն, ուր սովորութիւն էր արել նա ամեն երեկոյ անց կենալիս մտնել, մի երկու դաւաթ կոնծել, վերջարանն անել ու գնալ տուն:

Նա արդէն հասել էր այդ օղետան դիմաց, որ ստամոքսի մէջ ինչ որ բան զգաց. կասես այնտեղ մի բան շարժուեց, մի ինչ որ պահանջ առաջ եկաւ, և կարծես մի բան ըստ երևոյթին նրա մարմինը քաշեց դէպի օղետուն:

Գաբրիէլը քայլերը գաղարացրեց. մի բոլե կանգ առաւ, զլուխը պտաշըրեց, ձեռը տարաւ ճակատին, շփեց ու մտածեց.

«Ո՛չ, ես քաւորիս հաստատ խօսք եմ տուել. չպիտի խմեմ. հարկաւոր չէ. դառնամ». մտմտաց նա և բարձրածայն ինքն իրեն հրաման արձակեց.

— Գնա Գաբրիէլ, առաջ անցիր. ու-

զիդ գնա. չծռուխ, զնա —, և զինուորի նման զցելով քայլերը անցկացաւ վորձանքու տեղից. բաւականին հեռացաւ. ապա ետ նայեց, աեսաւ, որ արդարև անց էր կացել օգետան դիմացից. խիստ ուրախացաւ իր այդ յաղթութեամբ, ոգևորուեց իրանով, խնդաց ու կանչեց.

— Կեցցես Գաբրիէլ, կեցցես, որ կարողացար խօսքիդ հաստատ մնալ, օգետուն չմտնել, չխմել. կեցցես. որ էպոչս է, արի գնանք ես քեզ պատիւ տամ...

Ու քայլերը նորից ուղղեց դէպի օգետուն:

Հ Ա Գ Ի Ց Պ Ո Ւ Բ Ս

I.

Պիհն-դօճ... զիհն-դօճ...

Յամը և զանդաղ զօղանջում էին եկեղեցու զանգերը և յայտարարում ննջեցեալի յուղարկաւորութիւն:

Մեռնողը Տէրտէրանց Աւետիսի կինն էր, Սուրունը, որ իրեն ետևից երկու զաւակ թողնելով որբ, մասաղ հասակում գնում էր դէպի յաւիտենական ոչընչութիւն:

Մեծ էր Աւետիսի վիշտը, որ զրկուելով իր անզուգական ամուսնուց, իր զաւակներով մնալու էր անխնամ:

Չոր գիակը գերեզման իջնելուց յետոյ Աւետիսը մի բուռը հող ածեց Սուրունի երեսին և դող-դող քայլերով մեռածի նման դառաւ տուն:

Անցան ախրութեան առաջին դառն օ-

ըերը. մարդիկ շարունակեցին իրենց սովորական կեանքը, բայց չանցաւ Աւետիսի կոկիծը. նրա վրայ այնքան ծանր էր ազգել կնոջ մահը, որ նա կոկիծի տակ չորացել, կուչ էր եկել: Եւ ամեն անդամ երբ նա նայում էր իր գաւակներին, տեսնում էր նրանց անփայլ դէմքերը, անխնամ մնալը, ընկնում էր մաշող մտածմունքների մէջ:

Տունը մնացել էր վերանայ, ինքը մենակ, առանց ընկերոջ. այլևս չկար այն ձեռքը, որ կարէր-կարկատէր, լուանար-մաքրէր, եփէր-թափէր, հոգար խնամէր. թէև Սուբունի ազգականները փոխնէփոխ դալիս էին նրա տունը հոգում, կառավարում, սակայն նրանք կարծես, այն համն ու հոտը չունէին, ինչ Սուբունը: Իրեն իրենց տեղը չէին, կերակուրն անհամ էր, հոգացողութիւնը թերի, ամեն ինչ անդիւր, անախորժ... Որդիքն արդէն սկսել էին կամաց-կամաց անկարգանալ, չէին լուանում ձեռքերը, երեսները, երեկոները կելտոտ ոտքերով մըտնում էին տեղաշոր\*), պատառուառմ էին

\* ) Գիւղում երեխաները ամրող օրը բռկոտն են. երեկոները տեղաշոր մտնելուց առաջ լուանում են ոտքերը, պատկում անկողին:

շորերը, այլևս չէին լսում իրենց հօրը. մի խօքով ամեն ինչ ընդունել էր ուրիշ կերպարանք:

Այդ գրութիւնն աւելի ծանր թուաց Աւետիսին, երբ նա մի անգամ հանեց կնոջ սնդկից նրա հայելին, նայեց դէմքին, տեսաւ. — աչքերը փոս ընկած, երեսին սպիտակ մազեր, շապիկի օձիքը խիստ կեղառա... Եւ այդ բոպէ երբ ետ գառաւ տեսաւ երեխաների կեղառա տեղաշորը անկարգ գետին թափած, արտասուքն առաւ աչքերը, սիրտը մըմռաց ու շրթունքը կանչեց.

— Այս, Սուբուն, Սուբուն, որտեղ ես. մէկ աչքդ բաց, տես Աւետիսդ ինչ հալի է—, ու սկսեց աչքերից առատ արտասուք թափել: Այդ բոպէ նա լիովին զգաց իրեն միայնակ, ինչպէս ծաղիկը անապատի մէջ:

Նրա սիրտն արդէն շատ էր լցուել ուզում էր ասել, պատմել այնտեղ կուտակուածը, թափել մէկի առաջ, սակայն չկար այդ մէկը, որ նրա հետ կիսէր իր տիրութիւնն ու ուրախութիւնը, հոգմն ու կոկիծը, տաքացնէր կոնսակը. այդ մէկը թոել-զնացել էր, իրեն թողել էր մեն-մենակ:

Աւետիսին իրեն զգում էր ինչպէս մի

թևանի թռչուն, որ ոչ կարողանաւմ է թռչել, ոչ էլ սատկում է... Դա հօ կէս մահ է...

III.

Տէրտէրանց Աւետիսն յայտնի էր իրենց գիւղում ինչպէս լաւ օջախի տէր, լաւ մալ ու դէլվաթ ունեցող մարդ. Նա յայտնի էր մանաւանդ իր բարի և հանդարդ բնաւորութեամբ. և այդ էր պատճառը, որ ողջ գիւղը ցաւակից էր նրա կորստեան, յանձին նրա կնոջ:

— Ափսնս, խեղճ տղայ—, կանչում էր մէկը,— ինչ կին կորցրեց:

— Քանդուեց խեղճի տունը—, աւելացնում էր երկրորդը:

— Դէ թող պսակուի, գիւղի մէջ էսքան այրի կին կայ, մէկին թող ուզէ, ինչի կսպասէ—, վրայ էր բերում երրորդը:

Եւ ամեն մէկը անկեղծ ցաւակցելով կասես մի տեսակ պարտականութիւն էր զգում Աւետիսի բաղդաւորութեան մասին հոգալու:

Միւս կողմից հետզհետէ մօտենում էր Աւետիսի այրիանալու տարին. շատ այրի

կանայք աչք ունէին նրա վրայ. շատերն էին ուզում այդ միակ, բարի և լաւ մարդու հետ իրենց կեանքը կապել:

Սակայն ուրիշ էր Աւետիսի սիրալ. Նա Ա... քաղաքում տեսել էր իր ծանօթ Բագրատի քրոջը, Սալվիին, որ իր նիստուկացով, պատրաստած թէյ ու ճաշով, պահած տուն ու տեղով խիստ դիւր էր եկել նրան. և ամեն անգամ երբ նա քաղաք էր գնում, յաճախում էր Բագրատի տուն, նստում փափուկ օթոցների վրայ, մաքուր թէյ խմում, կամ համեղ ճաշ վայելում, զգում էր իրեն կատարեալ երջանկութեան մէջ:

«Տեսար կեանքը. ապրին էդ տեսակ կլինի. մենք էլ պիտի ըսենք թէ կապը ինք. մեր ապրածը կեանք չէ, կատարեալ իշու տանջանք...

Եւ այժմ երբ նա այրի էր, ապատ, տելի շատ էր զբաղւում Սալվիով, քան առաջ: Նա շարունակ յիշում էր այն դէպքը, երբ նա կնոջ մահուանից յետոյ առաջին անգամ գնաց քաղաք, Սալվիին խիստ սիրալի, խիստ էլ նազանի մօտեցաւ նրան, խանդակաթ նայեց նրա աչքերի մէջ և կա-

ըեկցօրէն թողապիս տուեց; իր հայեացքը խաղացրեց նրա աչքերի մէջ և այդ հայուածքով կարծես ասաց.

«Անկեղծ ցաւում եմ քեզ պատահած դժբաղդութեան և պատրաստ եմ օգնել...

Այդ խօսուն հայեացքը այդ ըոպէից մխուեց Աւետիսի սրտում:

Դրանից յետոյ երբ նա շատ անգամ միայնակ էր մնում ու խորը անձնատուր լինում իր մտքերին, այսպիսի հարց էր տալիս իրեն.

«Ի՞նչու համար էն տեսակ չանեմ, որ սրանից յետոյ մարդավարի ապրիմ. աշխարք մէկ եմ եկել, հօ մէկ էլ գալու չեմ»... ու նրա միտքը գալիս կանդ էր առնում Սալվիի վրայ: Սալվին արդէն մի տեսակ նախադուռն էր հանդիսանում նրան իր ցանկացած երջանիկ կեանքին համնելու:

Աւետիսը տակաւին այդ երելուող, բայց հետզինտէ հասունացող դրութեան մէջ էր, որ առաւօտ վաղ նրա մօտ հիւր եկաւ Սալվիի եղբայր Բագրատը: Նա ձիուց իշնելու պէս թէյ ուզեց: Բայց Աւետիսի կնոջ ազգականներից գեռ ոչ ոք չէր եկել, և թէյ պատրաստող չկար: Բագրատը նայեց Աւե-

տիսի երեսին ու դառաւ.

— Աստուած ողորմի հոգուն, Սուբուն քրոջս մեռնելէն ետև տանդ մէջ ոչ մի կարգուկանոն չէ մնացէ: Էս տարին եկաւ անցաւ, հալա գու գեռ պիտի պսակուիս: Ինչի՞ կսպասես չխեմ: Թէ քեզի չես խըղճայ, գոնէ երեխաներիդ խղճա:

— Լաւ կասես, Բագրատ ջան, խելօք խօսքին ինչ կարամ ասէ:

— Դէ որ լաւ կասեմ, էլ ինչ կմտածես:

Աւետիսը մի քանի վայրկեան լուռ նայեց նրա երեսին ու ցածր խօսեց.

— Կմտածեմ. էն որ պսակուիլ է, էն տեսակ մի կին առնիմ, որ կեանք տեսնիմ:

Բագրատը մի-երկու ըոպէ մտախոհ նայեց նրա աչքերին ու հարցըեց.

— Ո՞վ է էդ կինը, որ կեանք տեսնիս: Աւետիսը լոեց:

Բագրատը որ մինչ այդ սակաւ ինչ կասկածում էր, մտքի մէջ խօսեց. «ա, տսել է սիսալուած չեմ». ու գարձեալ հարցըեց.

— Հա՞ ո՞վ է:

— Էն, ինչ ասեմ. էն որ բլելու բան չէ:

— Չըլլի՞ Սալվին է—, երեսը պատ-  
ռեց Բագրատը:

— Այս—, հազիւ լսելի ձայնով շշնջաց  
Աւետիսը, և դէմքը շուռ տուեց միւս կողմ:

— Թէ Սալվին կուզէ, ես հակառակ  
չեմ:

Այդ խօսքերը Աւետիսի համար իստա-  
նեալ աչքալոյս էին: Նա զգում էր, որ Սալ-  
վին իրեն մերժելու չէր:

### III.

Բագրատի և Աւետիսի խօսակցութիւ-  
նից երեք ամիս յետոյ Սալվին արդէն գիւ-  
ղում հարս էր, Աւետիսի կինը:

Պաակուելուց յետոյ, երբ Սալվիի հա-  
մար անցան սկզբի դարիք օրերը ու օտար  
տապաւորութիւնները, նա սկսեց կամտց-կա-  
մաց իրազործել այն ամեն մտածուծներն ու  
ծրագրները, որ առաջուց խորհել էր:

Նա սկսեց մանուկներից, մաքուր լուաց  
նրանց վրայ-գլուխները, խուզեց Տրդատի  
գլուխը, հիւսեց Սոփիկի ծամը. նրանց նոր  
ձեի շորեր կարեց հագցրեց, ապա փոփո-  
խեց մարդու շորերը, հազնիլ տուեց նեղ

շալուար, կոճկած կրծքով արխալուզ, ոտ-  
նաման, շապիս: Աշնան դէմ փոխել տուեց  
օղայի ձեւը. ծածկը դարձրեց հարթ, ձե-  
ղունաւոր, փողոցի վրայ բաց անել տուեց  
լուսամուտ. իսկ տան սովորութիւնները,  
նիստուկացը, կերուխումը հարս գնացած  
օրից արդէն փոփոխած էր:

Այդպիսի փոփոխութիւնները խիստ աչ-  
քի էին ընկնում քաղաքից հեռու նստած  
դիւղին, շատ էլ զրաւիչ:

— Ախչի Դիլպար:

— Հա:

— Հէջ գնացել ես Տէրտէրանց Աւե-  
տիսի տուն.

— Զէ:

— Հըլը գնաս, խելքդ գլխէդ կերթայ:

— Ի՞նչ կայ որ:

— Մեակամ չիտես. էնպէս նոր տուն  
է սարքէ, որ նես մտնիս, բերանդ բաց  
կմնայ:

— Շիտմկ կսես:

— Հաղորթ:

— Ի՞նչ տեսակ է. մէկ պատմէ:

— Օդայի միջի փոռածքը, կակուխ  
մինդարները, շարած բարձերը, բարձերու

Վրայ քաշած հաղթիան, օդայի միջի սեղանը,  
աթոռքները, պտուէն քաշած հայլին, որ սաղ  
երեսդ մէջը կերևայ, մեծ լամպը, պատե-  
րուն կպցրած պատկերները, սամավարը,  
չայի սարբը, էլ ես ի՞նչ գիտեմ, ո՞ր մէկն  
ասեմ, նես մտնիս, բարեւդ կմոռանաս։ Ա-  
ռաւօտ-իրիկուն էլ չայ կիսմեն։

— էրնակ էդոնց։

— էրնակ ըսիր ու պլծար։ Մենք էլ  
պիտի ըսենք, թէ աշխարք ենք եկէ, կեանք  
կտեսնինք։ Կեանքը քաղցցոցն է։

Դիլպարը մաշող նախանձից ոչինչ չկըտ-  
նելով ասելու՝ ծանը ախ քաշեց և մատը  
օծիքից ներս տանելով վիզը քորեց։

— Գիտես Դիլպար, էդ բոլորը քաղ-  
քէն է հեաը բերէ. աղբէրն է ջէնէզ դրէ։

— էրնակ էդպէս քըոջը —, նորից հա-  
սաչեց Դիլպարը և շալակելով ջրով լվը  
սափորները հեռացաւ տուն։

IV.

Անցնում էին օրերն իրար ետեից։ Նոր  
սկսած կեանքը քանի զնում աւելի և աւելի

ընտանի էր դառնում Սալվիի, մանաւանդ  
Աւետիսի համար։ Աւետիսն ուրախ էր, որ  
գտել էր իր սրտի ուզածը, իսկ Սալվին ՅՅ տա-  
րի տանը նստելուց յետոյ ճաշակելով, ամուս-  
նական կեանքի քաղցրութիւնը, խիստ գոհ  
էր, որ դառել էր անկախ մարդ, բարի և  
հանգիստ ամուսնու կին։ Մի բան, որ Սալ-  
վին խորթ էր, դա զիւզն էր իր աղտկա-  
լի միապաղաղ կեանքով. սակայն նա յոյս  
ունէր այդ էլ մի կերպ կարգի դնել. միայն  
հարկաւոր էր համբերել և սպասել։

Մինչ այս մինչ այն Աւետիսն արդէն  
կալը կալսել, հատիկն շտեմարանել, դար-  
մանը մարագը կըել պրծել էր, տուն էր  
քաշուել սպասելու մինչև գարնան գալը, որ  
նոր մէկից սկսէր իր դաշտային աշխատանքը։

Դուրսն արդէն աջ ու ձախ փչում էր  
սառը քամին, յաճախ հեաը ընկեր ունենա-  
լով անձրեխն, որ իր կաթիլները ցայտեց-  
նում էր այս ու այն կողմ։ Հետզհետէ դեղ-  
նում էր բուսականութիւնը, մերկանում  
դաշտը, չորանում խոտը, խամբում ծաղիկը,  
լուսում թռչնիկը, նուազում առուակը, փոք-  
րանում գետակը, սպառում աղբեւրը, ա-  
մեն ինչ նուազում, թռվանում, խեղճանում

և ճարահատեալ ընկնում քնի կամ մահուան գիրկը:

Կանգ առաւ և Տ... զիւղի կեանքը, տեղի տալով ձմեռային թմրած, անզործ օրերին:

Սալվին առնիլ առւեց ամուսնուն երկաթէ վառարան, որ օրը 2-3 անգամ վառում էր, նստում կողքին, տաքանում և սիրալի խօսում:

Մի օր էլ նոյնպէս, երբ մարդ ու կին նստած վառարանի կողքին, վառարանի վրայ պատրաստած թէյն էին խմում և զրոյց անում, Սալվին մի նազանի հայեացք ձգեց Աւետիսի երեսին ու դառաւ.

— Աւետիս, հոգիս, կուզէս, որ միշտ էսպէս հանգիստ և լաւ կեանք անցկացնես:

— Ուզելն էլ խօսք է:

— Որ կուզէս, էն ժամանակ ինչ որ կասեմ, արա:

— Ի՞նչ է ասածդդ:

Սալվին միքանի վայրկեան նայեց ամուսնու երեսին, ճօճուեց տեղում, դէմքին մեղմ ժպիտ խաղացը ու ազդու եղանակով ասաց.

— Խանոնթ բաց:

«Խանութ», մտքում կրկնեց Աւետիսը, և խելոյն չկարաց որոշում կայացնել:

Սալվին լուռ դիտեց նրա մտածկոտ դէմքը և վրայ բերեց.

— Թէ չէ ռանչպարութիւն անելով ի՞նչ պիտի դուրս գայ. գարուն աշխատի, ձմեռ աշխատի. տեսածդ ի՞նչ է, մի կտոր ու հաց, էն էլ կէս-կուշտ, կէս-անօթի. գրան են ասէ, «դառը դատի, դարտակնստի». ի՞նչ կեանք է դա. քամուն, անձրեին, շոքին, տօթին, ցրտին, ցեխին, աշխատի ու անվերջ, անօպուտ աշխատի...

Աւետիսը կնոջ այդ խօսքերի վրայ պատկերացը իր 25 տարուայ ծանր, աշխատաւոր կեանքը, որ արդարև այդքան երկար և ձիգ տարիների մէջ հանգիստ և ուրախ օր չէր տեսել. այդ կեանքը նրա համար եղել էր անվերջ աշխատանքի մի շարք, առանց կատարեալ բաւարարութեան... իր գոյութիւնը պահպանելու մի յարատկ կոփւ... յիշեց ու շշնջաց.

— Շիտակ, որ «դառը դատի, դարտակնստի»:

— Որ էդպէս է, էլ ի՞նչ...

— Ի՞նչ անեմ:

— Բշար կասեմ խանութ բաց:  
 — Խանութ: Ինչով:  
 — Մալդ (խաշինը) ծախէ. մա իդ գնով:  
 — Ապա ոանչպարութիւն ինչով տնեմ:  
 — Ռանչպարութիւնը թող:  
 «Մալս ծախեմ, ոանչպարութիւնը թող-նիմ»... մտքի մէջ կրկնեց Աւետիսը, մտօ-րաւ և առանց պատասխան տալու մտավախ նայեց շուրջը, ինքն էլ չիմանալով ինչու:  
 — Ի՞նչ շատ միտք արիր:  
 — Միտք անելու բան է - , պատաս-խանեց նա և նորից լոեց:  
 Սակայն երբ սկսուեց ձմեռային անզործ երկար կեանքը, Սալվին աւելի և աւելի հաւասարիացրեց ամուսնուն այդ ձեռնար-կութեան մէջ, մինչև որ 'ի վերջոյ նրան համաձայնեցը եց:  
 Եւ նոյեմբերի վերջերին խանութն ար-դէն բաց էր, պլազման ապրանքները դարակ-ների վրայ շարած:  
 Աւետիսն սկսեց առևսուրը. գիւղացիք դառան նրա յաճախորդները, որոնք սովո-րութիւն արին ամեն օր գալ խանութ, նրա-տել, խօսել, նորութիւններ լսել, ծխել, ժա-մանակ անցկացնել:

Աւետիսն ուրախ ժպիտն երեսին ա-ռկտուր էր անում, գիւղացոց քաղաքից լուած բաները պատմում, ոկեորւում, ուրախանում, որ իր կեանքն այդպէս փոփոխութիւն էր կրել, ինքը նոր կեանք էր սկսել. հանգիստ, խաղաղ կեանք...

Նըս այդ ուրախութիւնը ծածուկ չէր մնում Սալվիի դիտողութիւնից. նա մի ա-ռանձին հպարտութեամբ ժպտում էր ամուս-նու երեսին և պարծանքով ասում.

— Որ կասէի, «Աւետիս խանութ բաց», ախար ես մի բան գիտէի. հիմա տեսար...

V.

Անցաւ ձմեռը: Բնութիւնը մի անդամ ևս վերանորոգուեց իր կեանքում:

Փչեց հարաւի կենսաբեր հողմը. հալ-ւեց ձիւնը, խոխոջաց առուակը, փափկեց գետինը, բսաւ ծաղիկը, գոռաց ամպը, դա-լարեց դաշտը, բացուեց տերեր, զարդարուեց թուփը, կանաչեց ծառը, ճոռողեց թլու-չունը, իր լայն թևերով եկաւ գարունը:

Երկրագործը գուրս նայեց խրճիթից, փառք տուեց Սրարչին, լծեց արօրը, դուրս

եկաւ դաշտ, սուր խոփով պատռեց գետնի  
կուրծքը, իր սիրուն հատիկն ու յոյսը թա-  
ղեց այնտեղ կանաչելու-բանելու:

Անասունները դուրս թափուան փակ  
գոմերից նորածիլ խոտի համն առնելու, կեն-  
դանութիւն շնչելու: Գաները փոռուան կա-  
լերը, հորթերը մարզագետինները, մանուկ-  
ները կտուրները, հաւերը փողոցները. բո-  
լորը-բոլորը դուրս եկան իրենց տներից-  
բներից մայր երկրի կրծքին փոռւելու, եր-  
կնակամարի կապուտակի տակ տարածուելու:

Այդ բոլորի մէջ Աւետիսն էր, միմիայն  
Տէրաէրանց Աւետիսը, որ դուրս չեկաւ դաշտ.  
Նա կապուած իր խանթի հետ, նստում էր  
սեղանափակի ետելը, կամ խանթի դռանը,  
և կամ մտնում էր սենեակ կնոջ հետ խօ-  
սելու, ականջը պահելով դռան՝ յաճախոր-  
դի: Բայց չկար յաճախորդ: Խօսակից էլ չու-  
նէր, որ ժամանակն սպանէր, զգալի չլինէր  
իր անգործութիւնը: Նրա ընկերը մնացել էր  
միմիայն ծխելն ու ծխախոտը: Գիւղում ե-  
րևացողը երբեմն-երբեմն դաշտից վերադար-  
ձող գիւղացիներն էին, որ մի-երկու ըոսէ  
մանելով խանութ, մի պաշկա թիւթիւն էին  
առնում ու շտապով հեռանում:

Խանթին կենդանութիւն տուողը հաւե-  
րըն էին, որ աներես կերպով ներս մանե-  
լով իրենց կտուցի բաժինն էին որոնում:  
Համարձակ աքաղաղը մարդ չեղած ժամա-  
նակ շատ անգամ մտնում էր խանութ և  
(կասես Աւետիսի ջղուն) բարձրանում էր  
սեղանափակի վրայ, երեսը դարձնում դէպի  
գլուի դուռը, թափահարում թերը ու յադ-  
թական ձայնով կանչում.

Կու-կու-լու-կու-ու-ու...

— Քշա, անտէր —, կատաղութեամբ  
վրայ որ պլծնում Աւետիսը և ձեռն ընկա-  
ծը շպրում նրա վրայ:

Մէ օր էլ նոյնպէս նա տխուր նստած  
խանթի գոանը ծխում էր և աչք պահում  
յաճախորդի, որ մօտեցաւ նրան իրենց  
գիւղի հտուստ դրացու որդին: Նրան տես-  
նելու պէտ Աւետիսի վրայ ինչ որ վատ, ան-  
հասկանալի տրամադրութիւն եկաւ. և մինչ  
նա այդ անսճոյ զգացմունքի մէջ էր, ե-  
կողը խօսեց.

— Աւետս ափար, թէ ժամանակ ու-  
նիս, հրամմէ Կթանք մեր տուն, հէրս քե-  
զի կանչեց:

— Ի՞նչի՞ ամար կկանչէ, չիտես —,

տհաճ կերպով հարցրեց Աւետիսը:  
 — Հարկաւոր բան ունի ասելու:  
 — Հարկաւոր բան, լաւ—, արտասաւ-  
 նեց Աւետիսը և դառաւ դէպի կինը.  
 — Սալի՛, խանթին աչք անցրու, մին,  
 չև կդամ:  
 — Լաւ—, գլխով հաղիւ նշան արեց  
 Սալի՛ն. և Աւետիսը դնաց:

VII.

Գրիգոր-աղէն, որ գիւղական կրանքի  
 երակից աւելի շատ էր հասկանում յան Ա-  
 ւետիսը, մենակ նստած չարդախում կալիան  
 էր քաշում:  
 — Բարի աջողում:  
 — Աստծու բարին, Աւետիս ան, նըս-  
 տիր—, կողքին տեղ հրամցրեց ՚րիգոր-ա-  
 ղէն ու դառաւ.  
 — Աւետիս ջան, ինչպէս կուննիմ, դու  
 ապրուստիդ հեշտ եղանակը գրար. էլ վար  
 ու ցանք անելու չես. հողեր՝ ի՞նչ պիտի  
 անես:

— Տեսնինք ի՞նչ կանեք—, չունենա-  
 լով մի դրական պատասխան տաեց Աւետիսը:

— Բեր ծախիր:

«Ծախիր»...

Ծածուկ, համը զգացմունքը այդ ըոպէ  
 պարզ կերպարանքով երեան եկաւ նրա մէջ.  
 մի բան կասես նրա սիրալ կծեց, զգաց-  
 նել տուեց, որ Գրիգոր-աղայի առաջարկու-  
 թիւնը մի քաղաքավար կողոպուտ էր իրեն  
 համար. և մի բան կասես ներսից տաց.

«Բոլոր անասուններդ ծախեցիր, մշտա-  
 պէս զրկուեցիր նրանցից, նայիր, որ հողե-  
 րիցդ էլ չզրկուիս... ու չկորցնես կեանքիդ  
 հիմքը:

— Ո՞չ, չեմ ծախի:

— Ապա ի՞նչ պիտի անես:

— Ուզող ըլլի՛ երեսը կտամ:

— Երեսը—, հարցական կլինեց Գրի-  
 գոր-աղան, ու կնճիռները զիգուեցին նրա  
 ձակատին. լաւ, երեսը տուր—, և մտքում  
 շարունակեց. «մինչև որ մէկ օր էլ ստիպ-  
 ւած կլինիս բոլորը ծախել»:

Աւետիսը համաձայնեց ստացուելիք  
 պառողի մի քառորդ մասով, ու ի՞նչ որ ան-  
 բաւարար պրով վերադարձաւ տուն:

VII.

Հորիզոնի վրայ երկար կամար կազմող  
արել կատարում էր իր գործը. նրա կիզիչ  
ճառագայթների տակ համում էր խոտը,  
դեղնում գարին, կարմրում ցորենը, ատոք  
հասկերով լցում հաճարն ու վարսակը:

Սար, ձոր, գաշտ, հովիտ լցուած էին  
կիսահագնուած քաղուորներով, որ պերան-  
դիները հէպ-հօպ անելով բնութեան պար-  
գևարածն էին հնձում:

Դիւզը կատարեալ դատարկուել էր.  
մնացել էին միայն պառաւ կանայք, որ ե-  
րեխաներին էին պահում, մէկ էլ եփող-թա-  
փող քէյփանիները: Եղած տղամարդը զիւ-  
զում միմիայն Տէրտէրանց Աւետինն էր, որ  
բանգարկուածի նման ակամայ մնացել էր  
զիւզում. նա այրող նախանձով նայում էր  
շուրջը եռ եկող կեանքին և ջերմ փափակ  
զգում ինքն ևս դաշտ զուրս գալու, այստե-  
ղի աշխատանքին մասնակից լինելու. բայց  
նա դաշտում գործ չունէր. դրա փոխարէն  
շղթայուած արդէն վերանայ խանթին, ժա-  
մերով սպասում էր յաճախորդի. բայց յա-  
ճախորդ չէր երևում. առևտուրը կատարե-

լապէս կանգ էր առել. իսկ եղած առևտրից  
նա այնքան քիչ փող էր ստանում, որ չէր  
կարողանում նոյն իսկ իր առօրեայ ամենա-  
կարեսը ծախքերը հոգալ. մինչդեռ բնու-  
թիւնն իրենը պահանջում էր. հարկաւոր էր  
ապրել. նա այլ ևս չէր նայում ապրանքի  
էժան ծախուելուն. ծախում էր ինչ զին էլ  
տային, միայն թէ օրական ապրուստի զին  
դուրս գար... Նա ծախսում էր գրա-  
մագլւից:

Նրա ծախքերը շատանում էին աւելի  
այն ժամանակ, երբ քաղաքից հիւր էր գա-  
լիս կողով եղայցը Բաղրատը, օրերով մնում, ու-  
տում, խմում, ծխում, յագենում ապա գնում:

Իրերի այդ տեսակ զրութիւնը կատա-  
րեալ յուսահատութեան էր հասցնում. Աւե-  
տիսին: Նա թէև աշխատում էր իրեն հա-  
մոզել, հանգստացնել, որ սարսափելու ոչինչ  
չկայ, իրեն զործի զրութիւնն է այդպէս,  
կըարելաւանայ, չպէտք է յուսահատուել,  
հարկաւոր է համբերել, սակայն ինչ որ  
գաղտնի ձայն ներսից ուրիշ բան էր ասում...

VIII.

Մինչ այս, մինչ այն վրայ հասաւ ա-

շունը. գեղջուկի բաղդաւոր և երջանիկ օքը, երբ նա իրեն դառն քրտինքի աշխատանքը հաւաքում, բերում է տուն։ Մարդիկ շատացան գիւղում. շատացաւ և Աւետիսի առևտուրը. բայց ինչնվ նա պիտի առուտուր անէր, քանի որ խանթում ապրանք չկար. ապրանքի մեծ մասը ծախսուել էր 5-6 ամսուայ ապրուստի համար, մնացածն էլ հնացել, անպէտքացել, ճանձերի ծիրտի մէջ կորել էր։ Երկար մտատանջուելուց յետոյ նա մէկ օր դառաւ ամուսնուն.

— Սալվի։

— Ասա։

— Ապրանք պիտի առնիմ, փող չկայ, ապառիկ էլ չեն տայ. կարող ես Բագրատից մի-երկու հարիւր բուքի խնդրել, մինչև որ...

— Բագրատի երկու հարիւր բուքին մրտեղից է—, իսկոյն նրա խօսքը կտրեց Սալվին, Բագրատը որ երկու հարիւր բուքի ունենար, էլ ինձի ինչի՞ գիւղը հարս կճամբէր։

Այդ խօսքերը Աւետիսի համար միանդամայն անսպասելի էին. նրանք կասես կայծակի նման շանթեցին նրա սիրտն ու

ուղեղը։ Օ՛օ, նա որքան հաւատացել էր Սալվիի սիրտն, կարեկցութեանը, որքան հաւալսել և նուիրուել էր նրան, որքան հաւատացել Բագրատի բարեկամութեանը... Իսկ այժմ, այդ նեղ բոպէում նա այդ տեսակ խօսքեր էր լսում... Նրա սիրտը սաստիկ ճմլուեց, հոգին համակուեց ծանր վշտով և կատարելապէս հիսաթափուած դուրս ելաւ տանից։

Դուրսը ցուրտ էր և խոնաւ. քամին փշում էր կատաղի կերպով, և հալածում էր երկրի երեսին թափուած իրերը։ Դեղնածդալկացած առարկաները հանգիստ գտնելու համար կասես փախչում, թագ էին կենում գետնի երեսի փոսիկներում, քարերի ու մացառների անկիւններում, սակայն մահուան շունչ քամին աւելի անողոք կերպով հետամուտ էր լինում նրանց, աշխատելով ոչ մի տեղ հանգիստ չթողնել, դադար չտալ նրանց, անվերջ հալածել...

Բնութեան այդ տեսարանը սաստիկ ազգեց նրան. և նա զգաց այդ բոպէ իրեն բնութեան անողոք պահանջների առաջ մինչմենակ, առանց ընկերոջ, առանց բարեկամի, ամոգնական...

Երկար ժամանակ այդ դրութեան մէջ  
մնալուց յետոյ երբ տեսաւ, որ ոչ մի ելք  
չկայ, ակամայ քայլերն ուղղեց դէպի Գրի-  
գոր աղի տուն:

Գրիգոր-աղան, որ օջախի գլուխը նստած  
հանգիստ կալեան էր քաշում, Աւետիսին  
տեսնելու պէս հրձուեց, նրա դէմքը փայլեց  
զոհ ժպիտով:

— Բարի լոյս, Գրիգոր-աղա:

— Աստծու բարին, բարնվ, Աւետիս  
ջան, նստիր:

Աւետիսը հասկացաւ Գրիգոր-աղայի  
սիրալի ընդունելութեան հրձուանքը. զգաց,  
որ ինքը այդ ըովէ նման էր գլուխը կորց-  
րած որսի, որ իր ոտքով ընկնում է որ-  
սորդի գիրկը. զգաց, հասկացաւ, սակայն  
ազատուելու ոչ մի ելք չունենալով, խեղ-  
դեց իր մէջ ամեն միտք ու զգացմունք, և  
լուռ նստեց նրա հանգէպ:

— Աւետիս ջան, էս ի՞նչպէս որ մեր  
կողմերը երևացիր. ո՞ր քամին փչեց:

— Խնդիրք ունիմ, Գրիգոր-աղա, դրա  
համար:

— Խնդիրք. հրամայիր—, և մտքում  
շարունակեց. «հը՛լ՛... հօ ոտքովդ եկար».

— Հրամանքդ բարի: Մինչեւ գարուն  
մի-երկու հարիւր ըուբլու պէտք ունիմ.  
ապրանք պիտի առնիմ խանթիս համար,  
չունիմ, մնացել եմ...

— Դժուար բան է խնդրածդ...

Աւետիսը հասկացաւ Գրիգոր-աղայի  
ասածի միտքը և սարսափեց, երբ ենթադ-  
րեց նրա յետին միտքը:

— Աղա ի՞նչպէս անեմ:

— Ուրիշից ուզիր:

Աւետիսը զիաէր, որ բացի Գրիգոր-  
աղայից զիւզում էլ ուրիշը չկար, որ իրեն  
փող տար. իսկ Գրիգոր-աղան էլ չորն էր  
կապում...

— Դու զիաես Գրիգոր-աղա:

— Զեռքս քիչ փող կայ, բայց էն էլ ինձ  
հարկաւոր է:

— Մի կերպ արա, կխնդրեմ. խիստ  
նեղն եմ:

— Լաւ... ուրախ մրմռաց նա և շա-  
րունակեց,— որ էդքան կխնդրես, կտամ.  
միայն ի՞նչ պայմանով կուզես:

— Մուրհակ կտամ, տոկոսն էլ էս  
զլիսից:

— Մուրհակը միայն քիչ է:

Ապմ:

Մի թուղթ էլ տուր բերնիցդ, որ  
եթէ ժամանակին փողերս չտառ՝ հողերիդ  
իրաւունքը ինձ անցնի:

«Հողերիդ իրաւունքը...

Այդ խօսքը շամփուրի պէս ծակեց նրա  
ականջն ու սիրտը. շփոթուեց, տաքութիւ-  
նըն առաւ նրա ջանը, նա ինքնիրեն կոր-  
ցրեց և շիմացաւ ի՞նչ պատասխանէր: Այդ  
մոլորուած գրութեան մէջ նա ձեռքը տա-  
րաւ գրպանը և մեքենայաբար հանեց ծխա-  
տուփը:

Գրիգոր աղան տեսաւ նրա կատարեալ  
անձարութիւնը. նկատեց, թէ ինչպէս Աւե-  
տիսը գալարւում էր իր առջեւորպէս մի որսի  
թռչուն, որ թրպրտալով որսորդի ոտքե-  
րի տակ իր վերջին շունչն է փչում. նկա-  
տեց, և աւելի հաստատ մնաց իր որոշման:

— Ի՞նչ շատ մտածեցիր:

Ի՞նչ պատասխանէր Աւետիսը. ասէր  
չեմ ու զի. ապա այն ժամանակ մւր գնար.  
մւմ գիմէր. մըտեղից փող ճարէր, որ տա-  
րանք առնէր, առետուրը շարունակէր. «Ո՛չ,  
ո՛չ, այդ անկարելի է. ապա ինչով տուն  
պահեմ»... Իսկ եթէ ասէր այս, համա-

ձայն եմ. ի՞նչ կլինէր վերջը. եթէ փո-  
ղերը ժամանակին չկարողանար վճարել, ու-  
րեմն զրկուելու էր իր վերջին յոյսից, կեան-  
քի նեցուկից. էլ ինչով ապրէր գիւղում...  
«Ո՛չ, ո՛չ, այդպէս չի լինի»... Աւետիսը մնա-  
ցել էր կատարեալ կաշկանդուած դրութեան  
մէջ, ձեռք ու ոտքը շղթայուած, որ ոչ կա-  
րողանում էր շարժուել, ոչ նստել: Ի՞նչ ա-  
նէր...

— Էդ քեզ համար է, որ իմ գործս  
թողած, փողը քեզ կուտամ. մի ուրիշին  
ոչ թէ 20 տոկոս, 120 տոկոս էլ որ տար,  
փող չէի տայ...

Աւետիսը իր ծանր խոհերի մէջ պինդ  
ծծեց պապիրոսը, ծիփ թանձը քուլաները  
թողեց օղի մէջ և հազիւ լսելի ձայնով թո-  
թովեց.

— Համաձայն եմ:

## IX.

...Այդպիսով անցաւ 2, 3, վերջապէս  
4 տարի:

Այդ ժամանակ շինւում էր Ախալքա-  
լակից-Արտահան տանող խճուղին: Ամբողջ

ճանապարհը բռնուած էր քար կլող սայլերով,  
սայլուորներով, քարկոփ մշակներով, փորող  
բանուորներով, խճու շեղջերով և քարերի  
կոյտերով:

Թըը՝ իսկ հա թըը՝ իսկ, լսում էր չորս  
կողմից մուրճի ու քլունգի ձայնը:

Փոշու և քրտինքի մէջ կորած երեսնե-  
րով, պատառուտած շորերով, արեի ճառա-  
գայթների տակ տաքին ու տապին աշխա-  
տում էին օրով վարձուած բանուորները:  
Նրանք ճանապարհ էին պատրաստում:

Մշակների բոլորի էլ դէմքերը թէն  
տանջուած էին և մաշուած, սակայն վստահ  
էին և համարձակ. նրանք ամեն մի անց-  
ւորի նայում էին հետաքրքրութեամբ, աշ-  
քերով ուղեսորում էին մինչև հեռանալը, նո-  
րից սկսում աշխատել:

Բայց այդ բոլոր մշակների մէջ կար  
մէկը, որ իւրաքանչիւր անցուորից ուշիու-  
շով ծածկում էր իր դէմքը. նա ձեռքի  
քլունգը դնում էր ոտքերի արանքը, ձեռը  
տանում դէմքին, ամաչելուց պահւում—թագ-  
կենում քարերի կոյտերի ետեր, որ ծա-  
նօթներն իրեն չտեսնէին, չճանաչէին:

Դա Տէրտէրանց Աւետինն էր:  
Նա ամեն ինչ կորցրած օրական բան-  
ւոր էր դառել:

Դաստիարակություն  
(անդամ անդամ) )  
անհանգը անդամ  
Անդամ Խաղաղություն  
Տառապություն  
(անդամ քանակ)  
Տառապություն

## ՀՈՒՅԱՆ ՏՈՒՆ

### I.

Առանձնասենեակի դուռը բացւեց և ներս մտնող աղախինը յայտնեց ճարտարապետի գալուստը:

— Խնդիր—, ձայնեց Մելքոն-աղան և վեր կենալով տեղից շարժուեց դէպի դուռը:

— Ա~ա, բարե ձեզ, Մելքոն-աղա—, քիչ յետոյ ներս մտնելով ձայնեց ճարտարապետը, ու ձեռքի կոլորած թուղթը դրեց սեղանի վրայ:

Մելքոն-աղան ինքը բաց առեց ծալած թուղթը և սկսեց նայել զծագրած յատակագծին:

— Գեղարուեստի վայելչութիւնը կայանում է նրա արտայայտութեան մէջ. իսկ արտայայտութիւնը անցնում է մեզ զլիսաւորապէս մեր տեսողութեան ու լսողութեան

միջոցով. Եթէ որևէ բան խանգարում է նրա կանոնաւոր և ներդաշնակ արտայայտութիւնը՝ գեղարուեստ խանգարուում է, և մենք կորցնում ենք մեր ստացած իլլիւզիան: Օրինակի համար վերցնենք մի վայելչահասակ կին. երբ տեսնում ես նրան նեռուից՝ զրաւվում ես նրա վայելչութեամբ. մօտենում ես նայում դէմքին, և ինչպէս վատ ես զգում քեզ, երբ նրա փարթամ հասակին համապատասխան դէմք չես տեսնում. տմբողջ տպաւորութիւնդ յեղաշրջւում է և ինչոր անհաճոյ տրամադրութիւն է գալիս վրադ:

— Բոլորովին ճիշտ է ասածդ, պարոն ճարտարապետ—, հառաչ արձակելով նրա ասածին արձագանք տուեց Մելքոն-աղան:

— Նոյնը և տունն է—, առաջ տարաւ ճարտարապետը, — դա ևս մի գեղարուեստական բան է. Եթէ չկառուցանես նրան համաշափ, և ամեն մի մասը իր տեղում, նա ևս կորցնում է իր ամբողջ զեղեցկութիւնը:

Մելքոն-աղան խիստ լաւ հասկանում և ըմբռնում էր ճարտարապետի ասածի միտքը, և այդ մաքից աւելի էր յուզւում, երբ մտածում էր, որ խարազ Աբէլը ծանր պայ-

մաններ էր առաջարկում այդ մի կտոր տեղի համար, լաւ խմանալով, որ այդ մի կտոր տեղը իրեն շատ հարկաւոր է՝ նեղութիւնը մի նոր ալիքով գալիս էր վրան և նրա տրամադրութիւնն աւելի վատացնում:

— Այդ բոլորը լաւ էր ասում, պարոն ճարտարապետ. բայց դրանով գործը չըդրստուեց, դուք դրա հնարն ասէք:

— Հնարը այդ մի կտոր հողն առնելն է. դրան էլ ուրիշ հնար չկայ—, ծխի օղակը օդի մէջ թողնելով սառն կերպով պատասխան տուեց ճարտարապետը:

— Իսկ եթէ հողի տէրն այն տեսակ պայման առաջարկէ, որ անհնար լինի առնելը—, պապիրոսի մոխիրը մատի ծայրով թափելով հարցրեց Մելքոն-աղան:

— Այն ժամանակ այդ տեղում տուն շինելու մտքից պիտի հրաժարուիր:

— Ի՞նչ. հրաժարուի՞մ—, համարեա բարկացած կանչեց Մելքոն-աղան:

— Այն, այն ժամանակ այդպիսի անդամանատուած տեղում աւելի լաւ է տուն չշինել, քան շինել:

— Պարօն ճարտարապետ, զիտէք ինչ էք ասում—, զայրոյթով առաջ տարաւ Մել-

քոն-աղան,— ինչպէս կարող եմ ես տուն չշինել, ասացէք խնդրեմ, այս տուն է, որի մէջ ես ապրում եմ. ոչ կանոնաւոր մուտք ունի, ոչ բաւականին սենեակներ. մի պատուաւոր մարդ է գալիս՝ փողոցի վրայ պարտեզդ չկայ, որ ընդունեմ. հրաւէր եմ սարքում, սեղանատունս 20 մարդուց աւելի չի տանում. նոր կարասի պէտք է առնիմ, չգիտեմ որտեղ դնեմ. մի խօսքով մնացել եմ շուարած. ինքներդ ասէք, ինչպէս չշինեմ:

Մելքոն-աղայի խօսակցութեան տոնը այնքան ստիպողական էր, որ նա ինքը ուրիշ կերպ չհասկանալով իր տան շինութեան հարցը, կարծես պահանջում էր, որ ուրիշ ներն ես այլ կերպ չհասկանային:

— Այդ ամենը իմստ լաւ էք ասում, բայց և այնպէս այդ նախագծով տուն շինելը միտք չունի: Նայեցէք խնդրեմ մի ըռպէ այստեղ—, յատակագծի վրայ մատը գնելով սկսեց ցոյց տալ ճարտարապետը,— այս կողմը փողոց է, այս միւս կողմը նոյնպէս փողոց, որ գալիս իրար կտրում են. իսկ այդ իրար կտրած տեղերի անկիւնը ձերը չէ, որը հիանալի ճակատ դուրս կգայ երկու փողոցի վրայ. իսկ երբ այդ ճակատը

չէ լինելու, ասել է տունդ առանց ճակատի  
է լինելու:

Մելքոն-աղան այդ լսելով աւելի յուղ-  
ւեց. նա ծխաքարշը հուպ տալով առամ-  
ների արանքում, չաղլիկ մատը դրեց յա-  
տակագծի այն տեղի վրայ, որ իրեն չէր  
պատկանում, աշխատելով կասես թղթի ե-  
րեսից պոկել-հանել այդ մի կտոր տեղը, որ  
խանգարում էր իր շինութեան գործը:

— Իսկ եթէ երկու փողոցի վրայ եր-  
կու ճակատ շինէք, մէջ տեղը մնայ փոս,  
մի աւերակ օտար խրճիթ, դա այնպէս ան-  
ձոռնի կլինի, ինչպէս անձոռնի է չաղ դէմ-  
քը առանց քթի:

«Թիւ», աւելի խիստ զայրացած շշն-  
ջաց Մելքոն-աղան երբ յիշեց դէմքը թափած  
քթով: Նրա համար այդ բոպէ թափած  
քթից աւելի զգուելի բան չկար:

— Ուրեմն:

— Այն, որ կամ չպիտի շինէք, և կամ  
եթէ անպատճառ ու զում էր շինել, այդ մի  
կտոր հողը ինչպէս էլ լինի պիտի ձեռ բե-  
րէք. այլապէս բոլոր ծախքերդ զուր կանց-  
նին:

Հարցը դրուած էր Մելքոն-աղայի առ-

ջե վճռական կերպով: Նա մի-երկու զայր-  
կեան մտածկոտ աչքերով նայեց ճարտա-  
րապետի երեսին, ձեռը տարաւ լայն ճա-  
կատին, ապա ճաղատ գլխին և մրմռաց.  
«այսպէս, կամ պիտի շինութիւն չշինել, և կամ  
այդ տեղն առնել»...

II.

Երեկոյ էր: Մեզմիկ զեփիւոը օրօրուե-  
լով անց կենալով քաղաքով՝ փարում էր ծա-  
ռերի կատարները, ներս էր մանում բաց  
դոներից ու լուսամուտներից, սողում էր  
տանիքները, գուրզուրում էր իրար հետ  
ընդգրկուած թփերն ու մացառները, շոյում  
էր վաստակաբեկ մարդկանց դէմքերն ու  
ճակատները, տատանում էր կանանց թել-  
թել կախ ընկած մազերը, խաղում էր մարդ-  
կանց ամառուայ թեթև զգեստների հետ և  
իր ալիքներով փոփոացնում նրանց փեշերը,  
սողում—վագում էր ամեն տեղ իր հանգիստ  
բերող զովութիւնն ու թարմութիւնը տա-  
րուծելու:

Ամառուայ այդպիսի մի անուշ երեկոյ  
էր, երբ պատից քաշ արած թիթեղեայ լամ-

պարի աղօտ լոյսի տակ նստած էր խարազ  
Աբէլի ընտանիքը:

Համպարի երերուն ճառագայթները հա-  
զիւ էին լուսաւորում խարխուլ շինութեան  
ցած պատերը, որ իրար հետ սերտ կերպով  
միացած կարծես ճիզ էին թափում պահե-  
լու իրենց վրայ կառուցած խարխուլ ձե-  
ղունը: Նեղիկ լուսամուտից ներս էր հո-  
սում օդը և պտոյաներ կազմելով նորից դառ-  
նում ետ, երբեմն-երբեմն իր ամիջներով  
տատանելով լամպարի աղօտ, երերուն  
բոցը:

Թաղթի վրայ նստած էր Աբէլի ամու-  
սինը, Ասլին, իր երեք փոքրիկ գաւակներով:  
Նրանք լուռ էին: Կենդանութիւն տուողը  
մոխրագոյն, աև շերտերով կատուն էր, որ  
մէջքով քսուելով մանուկներից մէկին ու  
միւսին, մելամաղձոտ մոմոց էր արձակում,  
և պոչով շոյում փոքրիկների ձեռքերն ու  
դէմքերը:

Տնակի գուռը ճոռալով բացուեց և ներս  
մտաւ ընտանիքի հայրը, Աբէլը:

Նրա դախ իրեն հետ կենդանութիւն  
ներս բերեց:

— Հայրիկս, հայրիկս—, կանչեցին

մանուկները և վեր թռան նստած տեղերից:  
Ամենից մեծը, Աւօն վազ տուեց դէպի հայ-  
րը, նրա ետեկից Սաթիկը. իսկ ամենափոքրը՝  
կուսիկը պարզեց թևերը և կանգնած տեղից  
կանչեց.

— Հայլիկ, ինձի ալ, հայլիկ:

— Հլմա, բալիկս—, ձայնեց հայրը:

Ասլին վեր կացաւ նստած տեղից, ըն-  
դունեց ամուսնու ձեռքից աղլուխի մէջ կա-  
պած ընթրիքի համար բերած մթերքը, և  
դրեց դարակի վրայ:

— Հայլիկ, հայլիկ, գլկէ:

— Հա, հա, գանուկս, կուսիկս, կուսս,  
խօսեց հայրը և գրկելով նրան պինդ հուպ  
տուեց դէմքին:

— Հայրիկս, հայրիկս—, ձայնեց Սա-  
թիկը և թռաւ հօր գիրկը:

Իսկ Աւօն մնաց հօր ծնկան հետ կանդ-  
նած:

— Ասլի, ջուր տուր քիչ լուացուիմ,  
զովանամ. ովկէ, Յ ջուխտ ոտնաման եմ  
կարել էսօր, հոգիս զուրս է եկել. օրը շնք,  
երկար, մարդ չի կարող շունչ քաշել. սաս-  
տիկ յոզնել եմ:

— Դէ, հայրիկին քիչ հանգիստ թռ-

դէք, գայ լուացուի. իջէք զրկից—, խօսեց  
Ասլին և ջուրը տալով ամուճնուն, ինքը գնաց  
խոհանոց ընթրիքի պատրաստութիւն տես-  
նելու:

Արէլը լուացուեց, սրբուեց, շորերը փո-  
խեց, էլի նստաւ իր տեղը, երեխաները հա-  
ւաքեց չորս բոլորքը:

Զեփիւռը շարունակ թեթև ալիքներով  
հսում էր ներս, և խաղում լամպարի բո-  
յի հետ, հեաը բերելով թարմութիւն ու զո-  
վութիւն. օդը քանի գնում աղմկող էր դառ-  
նում, և ծառերի սփսլոցի ձայնը լսելի դար-  
ձնում ամեն տեղ:

Անհուն երջանկութիւն էր զգում Արէ-  
լը, որ օրուայ աշխատանքից յետոյ երե-  
կոյեան հովին հանգիստ էր տոնում հօրա-  
կան տան մէջ, բոլորուած իր գաւակներով:

— Հայլիկ ձմեն, հայլիկ:

— Ի՞նչ է բալիկս:

— Ասէ (աշէ) —, ձայնեց Լուսիկը և  
բաշելով շրջազգեստի փեշը, ցոյց տուեց իր  
նոր շորը:

— Մայրիկդքեղ նոր շնօր է կարել, բա-  
լա ջան:

— Հըմմ—, ընչացքը հուպ տալով

ժպտաց Լուսիկը և ծռուելով դէպի Սաթիկը  
շարաձձի ժպիտով նայեց նրա երեսին:

— Մայրիկն ինձ համար էլ է կարել  
ա-այ—, աղմկեց Սաթիկը և վաղ տուեց  
մօր մադկից իր նոր շրջազգեստը հանելու:

— Իմս էլ վաղը պատրաստ կլինի—,  
գլուխը ետուառաջ տանելով խօսեց Ա-  
ւօն, որ հօր ծնկից չէր հեռանում:

— Հա, հա, վարդեռին բոլորդ էլ նոր  
շոր կունենաք—, վրայ բերեց Ասլին, որ այդ  
ըուպէ ներս մտաւ սեղան պատրաստելու:

— Հայրիկ—, կանչեց Սաթիկը, որ  
կիսով չափ հօր գիրկն էր բարձրացել:

— Ի՞նչ է բալիկս:

— Մանչերը վարդեռին վրէս ջուր  
չե՞ն ածի:

— Որ խելօք կենաս ինչի՞ պիտի ա-  
ծեն—, վրայ բերեց մայրը:

— Հերու ես խելօք էի, բա ինչու Մա-  
րանենց Սերօն վրէս ջուր ածեց—, դառաւ  
Աւօն:

— Ու դու էլ մոզու նման վեր-վեր  
ընկար—, ծաղրեց Սաթիկը:

— Հա, վեր-վեր ընկար—, կատակի  
տուեց հայրը:

— Շատ սառն էր հայրիկ, Պաղ աղ-  
բիւրի ջրից էր—, ուսերը վեր թօթուելով  
խօսեց Աւօն:

— Ամօթ քեզ, հազար ամօթ, որ ու-  
սումնարան գնալու տղայ ես, ջրից վախե-  
նում ես—, կատակը շարունակեց հայրը:

Մանուկն ամաչելուց ոտքը տարաւ ոտ-  
քի ետևը և խուլ կերպով ժպտաց:

— Ամօթ թեզ, հազար ամօթ—, ջրաց-  
րեց նրան Լուսիկը:

— Ես տարի վարդմորին մենք էլ կեր-  
թանք Պաղ աղբիւր—, խօսեց հայրը,— և ե-  
տերս կտանինք խորոված, ձռւկ, դինի, ձռւ,  
կանաչի...

— Խնձոր—, ձայնեց Լուսիկը:

— Ճանձ—, վրայ բերեց Սաթիկը:

— Ասեղ—, աւելացրեց մայրը:

— Ասեղ... հա, հա, հա... ծիծաղեց

Աւօն,— ինչի:

— Որ ով շատ խօսի՝ լեզուն ծակենք—,  
վրայ բերեց մայրը:

Մանուկները չարաճճի ժպիտով նայե-  
ցին իրար երեսի և լուռ ծիծաղեցին:

Մինչ այդ սեղանն արդէն պատրաստ  
էր, և նրանք բոլորուեցին նրա շուրջը:

III.

Ուշ երեկոյ էր: Սեղանի վրայ դրած  
հսկայ լամպարը իր լուսամփոփի պատերի  
միջով արձակում էր մեղմ, կաթնագոյն լոյս:

Մելքոն-աղան դարձեալ նստած էր իր  
սովորական տեղում, բագկաթոռին, երկու  
արմունկով յենուած ծնկներին, ճաղատ գլու-  
խը դէպի առաջ շարժած, որի մսալի կա-  
տարը պապղում էր լամպարի շեղակի ճա-  
ռագայլների դիմաց: Նա հատ-հատ գցում  
էր սեսսաթ թաղբէի կողոր հատերը, և ըր-  
թունքների արանքով երկու կողմից դուրս  
թողնում ծխի քուլաները:

Սենեակի և Մելքոն-աղայի լուսթիւնը  
խանգարեց քայլերի մի փափուկ ձայն: Նա  
գլուխը վեր բարձրացրեց և տեսաւ իր դի-  
մաց խարազ Աբէլին:

— Ա-ա, Աբէլ, դժւ ես: Ինչի՞ ուշացար:

— Գործ ունէի, ուշ տուն եկայ: Բա-  
րի իրիկուն:

— Բարնվ եկար: Հրամմէ նստի՞:

Աբէլը նստեց Մելքոն-աղայի դիմաց և  
մտածեց. «զիտեմ, էլի տանս համար է կան-  
չել, համա ուղած գնիցս իսկի բան պակսեց-

նելու չեմ»:

Մելքոն-աղան դանդաղ ես շրջուեց  
բազկաթոռի մէջքին ու խօսեց.

— Արէլ, բեր էդ տանդ փոքր տեղը  
ծախիր, վերջանայ:

— Ծախեմ. ի՞նչ եմ ասում:

— Մէկ վերջնական կերպով գինն ա-  
սէք, որ...

— Ասել եմ մի անգամ 2000 մանէթ.  
խօսքս խօսք է:

— Արէլ, ախար միքիչ մարդավարու-  
թիւն ունեցիր. ես նրա ի՞նչի՞ն ասմ 2000  
մանէթ. տեղը հազիւ լինի 50 սաժէն. սա-  
ժէնը հաշուիր 10 մանէթով, 500 մանէթ.  
շնութիւնն է 200-300 մանէթ, էդ քեզ  
800 մանէթ էլ ի՞նչ կուզես:

— Զէ, Մելքոն-աղա, հօրական տուն է,  
չարժէ էդ գնով ծախելը:

— Ախար դու ի՞նքդ էլ զիտես, որ չարժի:

— Չարժի՝ մի առնիք:

Մելքոն-աղան շեշտակի նայեց նրա աչ-  
քերին, կասես թափանցեց նրա հոգու խոր-  
քը, պարզ կարգաց նրա միտքը, որ ու-  
զում էր հանգամանքից օգտուել... կատա-  
դութիւնը բռնկեց նրա մէջ. սակայն զսպե-

լով իրեն դառաւ.

— Է՛ղ հողը ի՞նձ է պէտք, զրա համար  
եմ տալիս 800 մանէթ. թէ չէ ուրիշը իսկի  
զրա կէսն էլ չէր տայ:

— Է՛հ, չտար, ի՞նչ անենք — , սառն  
սպատասխանեց Արէլը, — հօ զօրի բան չէ:

«Զօրի բան... մ... սա ի՞նձ է հաս-  
կացնում»...

— Լաւ, որ էդպէս է, 200 մանէթ էլ  
կաւելացնեմ. 1000 մանէթ. տուր ձեռքդ:

— Երկու հազար. պակաս չիլի:

— Արէլ, նայիր. մենք զրացի ենք. էլի  
իրար պէտք կզանք. էնպէս բան որա, որ  
խղճի գէմ չլինի:

— Մելքոն-աղա, շխատին ասեմ, հօ-  
րական տուն է, խելի չեմ ուզում ծախել,  
համա որ գուք էդքան խնզրում էք, զրա  
համար եմ ծախում:

— Դէ ես՝ էլ առնում եմ էլի. 1000  
մանէթ:

— Պակաս չիլի. էդ է:

— Որ չես տայ, ի՞նչ պիտի անես. էս է,  
բանգւում է. ի՞նչնվ պիտի շինես:

— Աստուած ողորմած է. մէկ օր կհարս  
սանամ, կշինեմ:

«Ի՞նչ... սրան մտիկ արէք... բաւական չէ, որ չի ծախում, գեռ ուզում է շինել էլ... տանս առջեր կարել երկու կողմից... և այլ... տեսնինք ի՞նչպէս ես շինում»... շրթունքները կը ծոտեց Մելքոն-աղան:

Մինչ Մելքոն-աղան իր բարկութեան կրակի մէջ էր, Աբէլը մաքում հետեւեալն էր որոճում.

«Ամեն օր մենք ենք ձեր ձեռքը, դուք էք մեր կաշին քերթում, մէկ օր էլ դուք եղէք մեր ձեռքը, մենք ձեր կաշին քերթենք... Տեսէք հեշտ է, որ տարին-տասներկու ամիս ուզածներդ անում էք, հովիներս հանում»...

— Աւելի լաւ է ես էպաեզ տուն չեմ շինի, քան թէ մի թիզ տեղին 2000 մանէթ կտամ-, թունաւոր խօսեց Մելքոն-աղան և աչքերը փայլեցրեց ինչ որ ապատիցնող, դժոխային արտայայտութեամբ:

— Կամքը ձերն է-, աղքու տոնով վրայ բերեց Աբէլը և վեր կենալով նստած տեղից մաքում շարունակեց, «Հօ երեխայ չեմ, որ խարուիմ, թէ շիներու չես»...

IV.

Անցել էր Մելքոն-աղանի և խարազ Արէլի խօսակցութիւնից երկու-երեք շաբաթ։ Վարդավառի օրերը մօտեցել էին։ Մելքոն-աղան նստած իր գրասենեակում զլուխը դրած աջ ձեռի դաստակին ընկդմուած էր մտածմունքների մէջ։

Ներս մտաւ Աբէլը։

— Աբէլ, դու ես։

— Կանչել էիր աղա։ Բարի աջողում։

— Աստծու բարին. ի՞նչպէս է քէֆդ, հալդ, գործերդ։

— Փառք իրեն կամեցածին։ Կապրինը։

— Գործ շատ ունիս։

— Է՞ն, կայ. եօլա կերթանք։

— Էս երկօրս խկի աղաս ժամանակ չունի՞ս։

— Ինչի համար ես հարցնում, աղա։

— Խանթի համար թթու ջուր է հարկաւոր. էնպէս մէկը չունիմ, որ զրկեմ, բերէ։ Կիրակի վարդեսը է, մարդիկ քէֆից կդան, իրիկունը հազար ու մէկ տեղից թթու ջուր են ուղելու. քանի օր է ջուրը հատել է, խկի ջուր չկայ։ Յոյս էլի դու ես. տե-

զի հետ ծանօթ ես, ամեն ինչ զիտես, ինչպէս լցնես, ինչպէս բերանները փակես: թէ կարող ես, վերցրու շըրի, 200 հատ էլ փոքր շիշ, գնա բեր. շին մէկու կէս կոպէկ քեզ. խարջդ էլ վրէս:

Երեք բուբլին. դա այնովիսի մի գումար էր խարազ Աբէլի համար, էն էլ մի օրում, որ նրա համար կասարեալ զիւտ էր. ով զիաէ, քանի օր նա պիտի աշխատէր, որ 3 բուբլի ստանար: Սաստիկ ուրախութիւնը պատեց նրան և նա մտքում խօսեց. «Ճան, վարդեռիս ծախքն Աստուած ուղարկեց»:

— Ուզմում ես, մի ընկեր էլ հետդ վերցրու—, մեղմ նայուածքով ասամների արանքով խօսքը այն ձեռվ բաց թողեց Մելքոն-աղան, որ լսողը կկարծէր, թէ արդարէ նա մեղքանում էր Աբէլին և ուզմում էր մի ընկեր ևս տալ նրան օգնելու... Մինչդեռ խալապէս նրա ցանկութիւնը դրա հակառակն էր. նրան հարկաւոր էր որ միայն մի մարդ գնար, և այդ մի մարդը լինէր ինքը, Աբէլը:

— Բնկերն ինչ եմ անում. ինքս մենակ հերիք եմ:

— Լաւ. դնւ զիտես: Ե՞րբ կդաս—,

այս սնգամ՝ բարձր և ուրախ հարցրեց Մելքոն-աղան:

— Վաղը ուրբաթ է, ձեռքս զործ ունիմ, վերջացնեմ, տէրերին տամ, որ զիմացի երկու օրը իրար վրայ կիրակի է, առանց ոսնամանի չմնան, շաբաթ առաւօտ կերթամ, կիրակի ծէզին էստեղ կլինիմ:

— Լաւ, շատ լաւ—, գոհ եղանակով ձայնեց Մելքոն-աղան և աւելացրեց, Էնապէս լինի, որ կիրակի առաւօտ ջուրն էստեղ լինի:

— Աչքիս վրայ—, խօսեց Աբէլը և պատրաստուեց գնալու:

— Զումշնւդ:

— Համմէ—, ձայնեց զործակատարը մազագինից:

— Էդտեղից Աբէլին բեր հինգ մանէթ տուր ջրի փող—, հրամայեց Մելքոն-աղան:

— Էս սահաթիս—, ձայնեց զործակատարը և փողը բերեց տուեց Աբէլին:

— Երբ գաս, հաշիւ կանենք—, աւելացրեց Մելքոն-աղան:

— Լաւ—, ձայնեց Աբէլը և փողն տունելով երաւ դուրս:

V.

Վարդավառի առաւօտն էր։ Սաղ քաշաքը ոտքի վրայ էր։ Ամեն տեղ կենդանութիւն էր տիրում։ Կարծես Շ... քաղաքացիները որոշել էին այդ տարի վարդավառն աւելի ուրախ անցկացնել։ Վաղ առաւօտից մարդիկ շարան-շարան, որոնք կառքով, ուրոնք ոտքով, որոնք ձիով գնում էին քաղաքից դուրս հով այզիները, դալար պարտէզները օր անցկացնելու, քէֆ անելու, չեռուից լսում էր փողի ու թմբուկի ձայնը, որ վաղ առաւօտից «սահարին» էր սկսել, թառի ու ջութակի արձագանքը, որ «ճէզափին» էր նուագում, սրնդի երկար և ձիգ հնչինները, որ «առաւօտ լուսաբերն» էին երգում։ Դրանց հետ խառնուել էին երգերի, փողերի, պարերի և ուրախութեան աղաղակների ձայները, որ մերթ այս կողմից, մերթ այն կողմից արձագանք էին տալիս օդում։ Երկում էր, որ մարդկանց սըրտում կուտակուած ուրախութիւնը իր ընկեր վշտի հետ առիթ էր գտել դուրս թըռչելու նրանց կրծքից։ Գեղեցիկ էր Սիւնեաց աշխարհի բնութիւնը. իւրաքանչիւր քերծ

ու ժայռ, իւրաքանչիւր խոս ու արօտ, իւր քանչիւր ծառ ու ծաղիկ իրենց վայել-չութիւնն ունին այնտեղ։ Թոշունների երդը, երկնքի կապուտակը, ծաղկած բուսականութեան անուշահոտութիւնը, բացուած վարդի տեսքը, խոխոջող առուտակը, կարկաչող աղբիւրը, այդ բոլորը միասին թև առած կասես պարում էին իրար հետ։ Մարդը, բնութեան այդ պիզ արարածը զգում էր այդ, օգտառում և վայելչանում էր նրանով։

Արէլի ընտանիքն ևս պատրաստում էր զնալու։ Ասլին առաւօտ վաղ վեր կացած օրուայ պաշարն էր խուրջինում տեղաւորում։ Երեխանների երեմները լուսնում, նրանց շորերը հազցնում, ինքը կոկում-զուգում, որ Պաղ աղբիւր գնային. սպասում էին Արէլին։ Սակայն արեն արդէն ծագել էր, Արէլը դեռ չէր երկում։

— Դէ, Աւօ ջան, դու էս աղլուխը բոնիը, տար պատշգամբ, ես մինչև խուրջինը գուրս կբերեմ։ Նայիր, զգոյշ, մէջը ձու կայ, վէր չզցես, չկոտրես։

— Մայլիկ, խնձորը ուլ է։

— Էստեղ, զամբիւղի մէջ է, բալիկու։

— Մայրիկ, հայրիկը դեռ շմտ է ու-

շանալու:

— Զէ, հիմի ուր է ուր չէ, կդայ. քիչ  
էլ սպասենք—, Սաթիկին պատասխանեց  
մայրը, և երեխաների հետ գուրս գալով  
պատշպամբ նստեց այստեղ Աբէլի ճամբէն  
սպասելու: Բայց ուշանում էր Աբէլը: Արեն  
արդէն մի նիզակի բոյ վեր էր բարձրացել,  
բայց Աբէլը դեռ չէր երևում:

— Էդ մարդն ինչի՞ էսքան ուշացաւ,  
բոլոր քաղաքն արդէն դատարկուեց. լաւ  
տեղերը կնացին բռնեցին, իսկ նա դեռ չկայ:

Այդ ասելու հետ Ասլիի սիրաը կասես  
արորուեց. կասես նրա դարդն այն չլինէր,  
որ գրացիներն առաջուց գնացին լաւ տե-  
ղերը բռնեցին, այլ այն, որ Աբէլը չէր ե-  
րևում: Այդ բոլէ նրա աչքին ընկաւ դրա-  
ցու որդին: Կանչեց.

— Միքէլ, ա Միքէլ:

— Ի՞նչ է ազի:

— Քը մատաղ, մի գնա Մելքոն-աղոնց  
տուն, իմացիր, թէ Աբէլից ի՞նչ խաբար ու-  
նին:

— Ի՞նչպէս հարցնեմ—, կանգ առնե-  
լով հարցրեց Միքէլը:

— Ասա, Աբէլին որ խրկել էիք Թթու-

յուրը ջրի, դեռ չի՞ եկել:

— Լաւ—, ձայնեց պատանին ու թռաւ:  
Ասլին մնաց իր ձագերով նստած պատշ-  
պամբում, և միենոյն միտքն էր որոճում.  
«Ինչի՞ ուշացաւ», և այդ միտքը քանի գնում  
տւելի և աւելի ծանր էր դատնում նրա հա-  
մար և անմարսելի: Նրա մտածմունքները  
քանի գնում բարդում էին, ուռճանում և  
սև գոյն կրում: Այդ անորոշ թափիծը հետ-  
զհետէ քողաւորում էր մանկամարդ կնոջ  
սիրաը և ծածկում վշտի շղարշով, որը հետ-  
զհետէ ստուարանում էր և հաստատուն դառ-  
նում:

Նրա սիրաը ինչ որ անախորժ բան էր  
նախազգում. «Տէր-Աստուած, սա ի՞նչ բան է.  
արար-աշխարքը այսօր ուրախանում է,  
իսկ ես»...

— Վայ—, յանկարծ ճշաց նա և ան-  
զգայօրէն ձեռով խիեց ծնկանը:

— Ի՞նչ եղաւ մայրիկ—, իրար հետ  
հարցրին Աւօն ու Սաթիկը:

— Ոչինչ, էնպէս—, մանուկներին հան-  
գստացրեց Ասլին և յիշեց գիշերուայ երա-  
զը, որ իբր իրենք պարտիզում մի թառլան  
դուշ ունէին. այդ թառլան դուշը ծառի

վրայից թռաւ, զնայ: Այդ երազը վայրկենաբար վերայիշուեց նրա ուղեղում, և նրա տպաւորութիւնը չանհետացաւ: Գիտակցութիւնը նրա սրտի անորոշ թախիծի հետ դոյդ դարձած աւելի ծանրացաւ նրա մահկատի սրտի վրայ:

Այդ ժամանակ արտագ քայլերով երեաց Միքէլը:

— Ասում են, «մենք էլ չգիտենք, ջուռու մէկն եկել է բեռնով, միւս ջորին ու ինքը չեն երեսում»:

— Զե՞ն երեսում—, կանչեց Ասլին և մնաց քարացած. նրա ուղեղը վայրկենաբար կանգ առաւ մտածելուց, սիրան սկսեց սաստիկ բարախել և լեզուն համբացաւ բերանում:

— Ասում են, որ մարդ են զրկել ետեից—, իր խաբարը վերջացրեց Միքէլը:

Ասլին մնաց նոյն դրութեան մէջ: Նրա լացը կամաց-կամաց սկսեց գալ, կոկորդն սկսեց ճնշուիլ. սակայն նա չուզենալով երեխաների սիրաը կակծացնել, զսպեց իր արտասուրքը:

Մանուկներն զգալով մօր թախիծը, նրա ծնկների հետ շարուած-արձանացած մնա-

ցին և չգիտէին ինչ ասէին:

Այդ ըսպէ երեաց քաղաքի չաղասներից մէկը, և մօտենալով Ասլուն հարցը եց.

— Խարազ Աբէլի տունը սա է:

— Հրամանք ես աղա. Աբէլը տանը չի. ինչի համար ես հարցնում:

— Ինչի համար—, ակամայ կրկնեց չափառը և երեսը շրջեց գէպի փողոցի միւս կողմը:

Այդ ժամանակ երկու մարդ շալակած բերում էին մի արհաքամ դիակ:

— Վույ, մայրինկ ջան, ի՞նչ եմ տեսնում—, ճիչ արձակեց նա և ընկաւ ամուսնու սառած դիակի վրայ:

VI.

Մի տարի յեաց Մելքոն-աղայի տունը շնուռած էր այնպէս, ինչպէս ճարտարապետի առաջարկութիւնն էր:



ցութիւնն է եղել, որ Մաթոս-աղայի վրայ շատ վատ է ազգել. նա տուն գնալու պէս որոշել է եկեղեցու շինութեան գործը զլուխ բերել—, վրայ բերեց չորրորդը:

— Իսկ որ նեղենալու բան էր. աղօթատունը նեղ, առաստաղը ցածր. Էնքան հաղորդուողներ պատարագի ժամանակ գուրսն էին մնացել. շատ կնիկմարդկանց էլ քիչ է մնացել ուշքը գնայ:

— Մօտ հազար հոգի գաղթական հայ ենք, մեզ համար մի օրինաւոր եկեղեցի չունինք. փոքրիկ սենեակը գարձրել ենք աղօթատուն. դա ինչ քրիստոնէութեան չնորք է:

— Մենակ այդ էք ասում—, վրայ բերեց միւս կողմից սև դէմքով մի երիտասարդ. — ապա մոռացել էք Տէր-Մանասին, որ ոչ արած ժամը գիտէ, ոչ մատուցած պատարագը. Են տեսակ կկանչէ, որ կասես թուրքի մոլլա ըլլի աղան տալիս:

— Ապա էն աչքի մէկը քոռ տիրացուն չես ասէ, որ դունչը վերև ցցած էնպէս կրոռայ, որ կասես համադամի էշ ըլլի—, վրայ բերեց մի ուրիշը:

— Պահ, քո տունդ Աստուած շինի. կտարեալ ջաղցի ոտքը վերուցիր... քիչ էլ

## ԿԵԸՆ Բ ԵՒ ՓՈՂ

### I.

**Ամբողջ** ն... ծովափնեայ քաղաքը խօսում էք Մաթոս-աղայի մասին, որ խոսացել էք շինուելիք եկեղեցու համար տեղ առնել, և եկեղեցու շինութեան գործին զլուխ կանգնել:

— Փառք Քեզ Աստուած, հաղիւ պիտի արժանանանք **Ամ-**պատարագ տեսնելու—, հաւաքուած ամբոխի միջից խօսեց մէկը:

— Ու զանգի ձէն լսելու:

— Ասում են, որ երեցփոխն է եղել պատճառը. նա է համոզել Մաթոս-աղային եկեղեցու տեղն առնելու, գործին զլուխ կանգնելու:

— Գլխաւոր պատճառը, ասում են, ճրագալոյցի երեկոյեան անձոռնի ժամասա-

հայ հայի ժամը թուրքի մէջիդ կդարձնես:  
— Հանաքը մի կողմ մնայ, Մաթոս-  
տղայի արածը մէծ բան է. Աստուած ողոր-  
մի մեռելների հոգուն—, խօսեց մի տարի-  
քաւոր մարդ և հեռացաւ ամբոխից:

Միւսներն ևս կամաց-կամաց ցրուեցին  
իրենց աները, սրտերում տանելով քաղցր  
տպաւորութիւններ ու յոյզեր:

Եւ, Մաթոս-տղան, որ մինչ այդ ճա-  
նաչուել էր իբրև գծուծ և վաշխառու անձ-  
նաւորութեան, այդ օրուանից հասարակու-  
թեան աջում գառաւ առատաձեռն մարդ և  
բարի քաղաքացի:

Ժողովրդի միջի շըջող այդ լուրերը  
համարում էին Սարգիս Փորսուղեանի ական-  
ջին:

### II.

Սարգիս Փորսուղեանը գաղթական էր  
Ն... քաղաքում. նա գաղթել էր ոչ այն  
պատճառով, որ հալածական էր իր հայրե-  
նիքից, այլ այն պատճառով, որ լսել էր,  
թէ Ն... քաղաքում մարդիկ ոսկին բռերով  
են հաւաքում, և զիսաւորը հայ առատանցի  
հայը (ինչպէս նրանք էին տառմ) մեծ

պատիւ ունի ժողովրդի աչքում:

Ժողովրդի սիրալի ընդունելութիւնը և  
ցոյց տուած յարգանքը արբեցրել էին նրան  
և ինքնամուացութեան մէջ գցել. նա այդ  
կողմից արդէն այնքան առաջ էին գնացել,  
որ մի տեսակ պահանջող էր դարձել. և երբ  
տեսնում էր, որ մէկը այնպէս չի խոնարհ-  
ում իր առջի, չի ցոյց տալի իրեն յար-  
գանք, հասկանում է իր ցուցամոլութիւնը,  
և կամ այդ մէկը ուժեղ մարդ է, իր հրա-  
մանն ու ազգեցութիւնը չի կարող նրա  
վրայ տարածել՝ կատաղում էր, և չհամար-  
ձակուելով բան ասել, որ մի գուցէ այդ  
լուցիւց հրդեհ բռնկի՝ լուսմ էր ու ինքն իրեն  
ուտում:

Եկեղեցու շինութեան լուրերը կատա-  
րելապէս կատաղեցնում էին նրան, մանա-  
ւանդ, որ զբան ձեռնարկողը Մաթոս-տղան  
էր, ոչ ինքը, Մաթոս-տղան, որ աւելի մեծ  
զիրք ու անուն ունէր բան ինքը. կատա-  
զում էր աւելի ևս նրա համար, որ այդ  
զործի հետ կապուած էր և զբամական հարց:

«Եթէ Մաթոս-տղան եկեղեցու տեղ առ-  
նի իր միջոցներով, պէտք է տայ իր 200,000  
բուբլու կարողութիւնից ոչ աւել քան

5000 բուբլի. մինչդեռ շինութեան համար հարկաւոր է լինելու 25,000 բուբլի. իսկ այդ գումարը ումնից է առնելու. մեզանից, ինձանից... էն քիչը 1000 բուբլի... իսկ ես ինչպէս տամ 1000 բուբլի... Նույիները իրենց համար եկեղեցի պիտի շինեն,, ինձի ինչ, էն էլ Մաթոս-աղայի ձեռքով, նրա փառքի համար... Իսկ ես յիմարս միայն փող եմ տալու... Ո՞չ, ես կոպէկ տուողը չեմ... Բայց—, յանկարծ կանգ առաւ նո և մատը դրեց ճակատին, -- չտալ էլ չի լինի. Եթէ ասիմ «Հեմ տայ», հասարակութեան աչքում կկորցնեմ զիրքո. Եթէ ասեմ «Հունիմ», առեարական աշխարհում կձգեմ վարկը. ոչ, այդ կերպ չի լինի. հարկաւոր է մի ուրիշ հնար մտածել...

Այդ խորհրդածութիւնների մէջ էր նո, որ ներս մտաւ Տէր-Մանասը: Նրա փոքրիկ երեսը այդ օրը կասես տւելի. էր փոքրացել և բոլորովին կորել չլուացած մազի ու մօրուքի մէջ, որոնք կասես երբէք սահնրի երես տեսած չլինէին: Նրա երեսի վրայ հազիւ էին երեսում բների մէջ շարունակ խաղացող երկու աչքերը, որ կասես աչքեր չլինէին, այլ ներս իրցրած ուլունքներ:

Նրա երկար մազերը հասել էին մինչև ուշ սերը և ծածկել զուրս ընկած կուզի մի մասը: Նա կօշիկներով յատակիին քըսաքստացնելով մօտեցաւ Սարգիս Փորսուղեանին և յուզուած ողջունեց:

— Օրհնեա 'ի տէր—, ձայնեց Փորսուղեանը և հրաւիրեց նրան նստելու:

— Գերեզմանօրհնէքը պրծայ, տսացի զնամ տեսամ պարոն Սարգիսն ինչ ա շինում:

— Ուրախ եմ տէր-հայր, ուրախ, որ մեզ չէք մոռանում:

— Ո՞ս, պարոն Սարգիս, ձեզ պէս ափնիւ մարդուն մոռանալ... ինչպէս կարելի ա...

— Շնորհակալ եմ—, ժպտաց Փորսուղեանը, և զրանով իր փառախրութեանը կտասես մի նոր յագուրդ տուեց:

— Հա, պարոն Սարգիս, լաւ միտք ընկաւ—, զգացուած սկսեց Տէր-Մանասը,— իմանալուս եկեղեցի էք շինում, շնորհաւոր ըլլի. ձի՞շտ ա:

— Այն, այդպէս մի բան կայ:

— Եկեղեցի շինելներդ խիստ լաւ. ինչ ասել կուզայ, մենք քահանաներս մեր ազգի

Եկեղեցու պայծառութեանն ուրախանալու  
ենք. բայց ինչի՞ համար եկեղեցի շինելով  
ինձի կուզէք էս տեղան հեռացնել. յանցանքս  
ի՞նչ ա. ի՞նչ եմ արել. ում մեռեն եմ ան-  
թաղ թողել, կամ ում երեխան ա անկնունք  
մնացել. ասացէք:

— Ի՞նչպէս. այդ ով է ձեզ հեռացնողը:

— Մաթոս-աղան, ով—, յուզուած պա-  
տասխանեց Տէր-Մանասը:

— Մաթոս-աղան—, կանչեց Փորսու-  
դեանը, և քահանայի բարկութեան մէջ իր  
կրքերի համար հող գտնելով կանգնած տե-  
ղում ուրախութիւնից ոստաստաց:

— Այս, նա ասել ա, որ երբ եկեղե-  
ցին շինէք-վերջացնէք՝ ինձ հեռացնելու էք.  
ասել ա, «Տէր-Մանասը անարժան քահա-  
նայ ա. մի կանոնաւոր քահանայ պիտի հրա-  
ւիրենք»: Զգիտեմ քահանայի կանոնաւորը  
ի՞նչ տեսակ ա:

Տէր-Մանասի այդ խօսակցութեան վրայ  
Փորսուդեանը յիշեց նրա կենսագրութիւնը,  
որ արել էր նրան իր ընկերներից մէկը, թէ  
ի՞նչպէս նա առաջ եղել է մի խեղճ ջրկիր.  
երկար ջուր կրելուց երբ դուրս է եկել նրա  
ջանը, կուզն ել հետը՝ նա մտել էր իրենց

քաղաքի յաջորդի մօտ ծառայ. այդ յաջորդը  
վերջը եպիսկոպոս դառնալով իրու վարձատ-  
րութիւն Մահմասի ընտանիքին՝ նրան դարձ-  
րել է հայ ազգի գլխին տէրտէր:

— Հոգեոր իշխանութիւնը էնքան դէս-  
ուղէն հալածելուց յետոյ հազիւ մի անկիւն  
տուեց գաւակներովս ծուարելու՝ հիմա էլ  
Մաթոս-աղան ա հալածում, հացից զրկում...  
Մէղք եմ պարոն Սարգիս. խղճացէք ինձի.  
մի թողնէք հալածելու. եթէ ինձ չէք մեղ-  
քանում, գոնէ էնքան մանրուխոշորիս իրդ-  
ձացէք... Ա՛խ, եթէ սրբազնը կենդանի  
լինէք, մենք էս օրին չէինք մնայ... արատ-  
սուքը աչքերին այրուած կարօտով արտա-  
սանեց Տէր-Մանասը:

— Անհնգ կացէք, տէր-հայր. ես քանի  
այստեղ եմ, ձեզ ոչոք ոչինչ չի տնի. հան-  
գիստ մնացէք:

— Շնորհակալ եմ, պարոն Սարգիս,  
շնորհակալ—, արտասանեց նա և վեր կա-  
ցաւ գնալու:

Փորսուդեանը ուղեկցեց նրան մինչի  
դուռը. և առա երբ ետ դառաւ սենեակ,  
կանգնեց մի-երկու վայրկեան, և ձայնեց.

— Ա՛սա, դա ինձ պէտք կզայ...

III.

Այդ օրից անց էր կացել տարի, տարի  
ու կէս: Կովկասից հասնող լուրերը մէկը-  
մէկից աւելի սարսափելի էին և արիւնալի:  
Չինգիզխանների, Լանկթամուրների, Աղա-  
մամալների և Շահաբասների արժանաւոր  
ժառանգները վերսկսել էին իրենց նախա-  
հարց արհեստը. հնուր, սնուր, աւելի, ապա-  
կանութիւն տարածուել էր չորս կողմը:  
Գեղանի Կովկասը դառել էր դժոխք. արիւ-  
նը հոսում էր աղբիւրի նման. գիւղ ու քա-  
ղաք ծածկուել էին անմեղ մանուկների և  
անգէն ծերունիների հազարաւոր դիակնե-  
լով. կեանքը դառել էր չնչին բան. կալ-  
ւածքը, հրի ճարակ, ստացուածքը, աւարի  
բաժին, սեղ, սովին ընկեր... Այլ ևս չէին  
լսում գեղջուկի երգն ու հովուի սր.,  
ձայնը. նրանց փոխարինել էին մանու-  
ների աղեխարշ լացը և մայրերի անո-  
դորմ կականը... Մայրը որդուն էր վնասուում,  
քոյրը եղօրը, նորատի ամուսինը մարդուն.  
Բայց չէին գտնում. նրանք կամ մեռել էին,  
կամ կոռի շարքերում իրենց կրծքով, վեր-  
ջին չնչով իրենց ընտանիքի պատիւն ու

սիրասուն հայրենիք էին պաշտպանում:

Օգնութիւն, օգնութեան, լսում էր  
կովկասի խորքերից. օգնութեան էին կան-  
չում ՚ի տարապարաւոց հրի ու սրի մատ-  
նուած հայերը իրենց հեռաւոր ու մօտաւոր  
եղրայրներին, հայրենիքի արժանաւոր որդի-  
ներին:

IV.

Աշուն էր: Անսանձ քամին ծովից գա-  
լով իր բոլոր թափով անց էր կենում Ն...  
քաղաքի վրայով: Ծովի երեսին բարձրացող  
բլրածե ալիքները մէկը միւսի ետեից յոր-  
ծանք տալով դիալչում էին ափերի հսկայա-  
կան ժայռերին. վերջին անգստմ մի ցաւա-  
գար մոնչիւն արձակելով ուժգին ճողփիւ-  
նով ցայտեցնում էին ջրերը դէպի վեր և  
տեղի տալիս միւս ետի գալող ալիքներին:  
Ամեն մի իր, ամեն մի արարած ինչ աւե-  
լի թոյլ էր, քան ինքը քամին աշխատում  
էր հրել, դէն մղել իր առջեկից, ազատ ճա-  
նապահն բանալ, անցնել հեռաւոր անծայր-  
ալճակ անսապատները, ուր հողմն է ան-  
սանձ, ուր մըրիկն է թափառում...

Այդպիսի մի մըրկալի-ալեկոծ օր էր, որ

Մաթոս-աղան դոները պինդ փակած, իր ա-  
սանձնասենեակում նստած, զբաղուած էր  
Եկեղեցի շինելու ծրագրով, միենոյն ժամա-  
նակ մտածելով իր ընկերների թոյլ վերա-  
բերմունքը գէպի այդ գործը։ Այդ ժամանակ  
յանկարծ ներս մտաւ աղախինը և յանձնեց  
նրան մի նամակ։

Նամակը անսպասելի էր։ Նա ծրարը  
ճղելով աղախինին ձայնեց.

— Սպասիր։

— Ծառադ եմ։

— Ումից է այս նամակը։

— Զգիտեմ։

— Ո՞վ բերեց։

— Եափնջի մէջ փաթաթուած մի փա-  
փախաւոր մարդ։

— Հիմա այստեղ է։

— Ո՞չ. յանձնեց ու հեռացաւ։

— Զհարցրիր, ով էր. ումից է նամակը։

— Զհարցրի. ասաց «ամեն ինչ մէջը  
զրած է»։

«Ամեն ինչ մէջը զրած է», ըթի տակ  
մըմուաց Մաթոս-աղան և սկսեց կարդալ  
նամակը։ Նամակը նրան խիստ տարօրինակ  
թուաց. տառերը տպագիր չէին, բայց ինչ

որ տպագրածի ձեռվ էին. թանաքը զժկոյն  
էր. իսկ նամակի ճակատին կար մի ձուածե  
կարմիր շրջան, որի մէջտեղը զրած էր  
«հայ յեղափոխութիւն»։ Նրա ձեռքերն սկսե-  
ցին դողդողալ. սակայն նա ձիգ թափեց  
կարդալու։

Այդ բոոլէ ներս մտաւ նրա կինը, որ  
աղախինուց լսել էր անծանօթ նամակ տոտ-  
նալու մասին։

— Այդ ի՞նչ նամակ ես ստացել։

— Ի՞նչոր մի մարդ բերել, աղախինին է  
տուել. նայիր Զարդար, նայիր, զօրով փող  
են ուզում։

— Փող, զօրով—, կրկնեց Զարդարը և  
աւելի հաւասարիանալու համար նայեց նա-  
մակին։

— Այ, այ—, մատով ցոյց տուեց Մա-  
թոս-աղան, — զրած է երեք հազար  
բուրլի. եթէ չտաք՝ կդիմենք խիստ  
մի ջոցների։

— Ի՞նչ, խիստ միջոցների—, համա-  
րէա ճշաց Զարդարը, և շուարած նայեց ա-  
մուսնու երեսին. նրա շուարելը այդ բոոլէ  
այնքան նրա համար չէր, որ 3,000 բուրլի  
էին պահանջում, այլ նրա համար, որ «կըդի-

մէին խիստ միջոցների», որովհետեւ, շատ  
լաւ զիտէր իր ամուսնու տաք բնաւորու-  
թիւնը, կամակորութիւնը և անաեղի հակա-  
ռակիլլ:

— Ո՞չ, ես դրանց փող տուողը չեմ.  
ովքեր են դրանք. եթէ բարեգործութեան  
համար են ուզում, ես աւելի մեծ բարեգոր-  
ծութիւն եմ անում. եկեղեցի եմ շինում...  
Զէ, չեմ տայ. ինչ պիտի անեն. պիտի սպա-  
նեն. թող սպանեն, տեմիմ ինչպէս են  
սպանում —, ձեռքերն օդում շարժելով կա-  
տաղի կանչեց Մաթոս-աղան:

Կինը կարեկցօրէն նայեց նրա երեսին,  
խղճաց նրան իր տաք բնաւորութեան հա-  
մար և համոզիչ եղանակով դառաւ.

— Այ մարդ, ինչ ես էղպէս շուտ  
բարկանում. զրելով հօ չեկան, էս բոսկիս  
ձեռքիցդ չառան. քաղաքում հասկացող մար-  
դիկ կան, տաք ցոյց տուր, խորհուրդ հարց-  
րու, տես ինչ կասեն, յետոյ. օրինակ Մաթ-  
ոս Փորսուղեանին. նա հայ առատանց ի  
մարդ է, այդ տեսակ բաներ կդիտենայ.  
տպա թէ տուր, կամ մի տայ:

Մաթոս-աղան երկու վայրկեան մատա-  
կոտ աչքերով նայեց ամուսնու երեսին ու

դառաւ.

— Եաւ ես ասում, Զարդար, ասածդ  
ճշմարիս է. կտանեմ մի-երկու մարդու ցոյց  
կտամ. տեսնիմ ինչ կասեն՝ յետոյ: Եաւ ես  
ասում:

V.

Ուշ երեկոյ էր: Սեղանի վրայ զբած  
լամպարը իր բաց-ջրագոյն լուսարգելի մի-  
ջով գողգողացող ճառագայթները զցում էր  
սենեակում գտնուած իրերի վրայ: Սենեա-  
կը լուս էր և խաղաղ. աղմուկ հանողը մի-  
միայն ճօճանակի կիսալումնաձև պատուան-  
գանն էր, որ խուլ ձայնով բարձրանուու-  
ցածանում էր գորգի վրայ: Աղմկի հետ մի-  
ացողը ճօճանակի մէջ նստողի կախ ընկած  
մուճակի ձայնն էր, որ ամեն մի ճօճին թոյլ  
կերպով կընկով քուում էր գորգին:

Ճօճանակի մէջ մէջքին ընկած ճօճում  
էր Մաթոս Փորսուղեանը, մի նամակ ձե-  
ռին բռնած, ընկղմուած մտածմունիքների  
մէջ...

«Զարմանիք բան է, հէնց որ միքանի  
կոպէկ փող ես հաւաքում, քիչ անուն վաս-  
տակում, հասարակութեան մէջ դիրք ձեռ

բերում՝ իսկոյն չորս կողմից դիմում են.  
ուզածներն ինչ է, փող. ուսումնաբան է,  
փող. եկեղեցի է, փող. աքսորական է, փող.  
ձանապարհորդ է, փող. աղքատ աշակերտ է,  
փող. լրագիր է, փող. նոր գիրք է, փող. փող,  
փող. փող... ամենքը փող. մարդ դրանց  
բոլորին որ տայ ուր կհասնի. ինքն էլ կ'աղ-  
քատանայ: Մաթոս-աղան իրեն փառքի հա-  
մար եկեղեցի է ուզում շինել, իմ վրայ  
գրել է 1000 ըուբլի. այդ հերիք չէ, հիմա էլ  
սրանք են պահանջում 1000 ըուբլի, են էլ  
սպառնալիքով: Բայց—, կանգ առաւ նաև...  
արդեօք այս տեսակ նամակ մենակ ինձ են  
գրել թէ ուրիշներին էլ կլինեն գրած: Եթէ  
գրած լինին ուրիշներին, անշուշտ գրած  
կլինին և Մաթոս-աղային. և եթէ արդարե  
նրան գրել են, օ՞օ, այն ժամանակ ես զի-  
տեմ... Բայց ինչպէս իմանամ գրել են,  
թէ ոչ. ում հարցնեմ... բայց ոչ, հարկաւոր  
չէ հարցնել. հարկաւոր է լոել, այս նամա-  
կի մասին ոչոքի ոչինչ չտաել, մինչև որ մի  
տեղից մի բան կծագի. մանաւանդ, որ Մա-  
թոս-աղան ինքը անհամբեր մարդ է, եթէ մի  
բան լինի, չի կարայ պահէ, իսկոյն կասէ»:  
Հենց այդ վայրկենին լսուեց զանգակի

ձայնը:

Ավոգիսի ուշ զանգահարութիւնը հա-  
մարեա շփոթեցրեց Սարգիս Փորսուղեանին.  
նա վեր կացաւ նստած տեղից և դիմեց դէ-  
սի գուռը. այդ բովէ անսպասելի կերպով  
նրա դիմաց ելաւ Մաթոս-աղան:

Նրան տեսնելու պէս Փորսուղեանը շտա-  
պով նամակը զրեց ծոցը:

— Ա՞ն, այդ գուք էք, Մաթոս-աղա-  
էսպէս գիշերով ինչ խաբար:

— Այ, ինչ խաբար—, այլայլուած  
կանչեց Մաթոս-աղան, և ձեռի նամակը  
շպրտեց սեղանի վրայ:

Փորսուղեանը նախազգաց նամակի մէջ  
ինչ լինելը: Վայրկենապէս նրան այնպիսի  
մի ուրախութիւն տիրեց, որ նա խելքը  
կորցրածի պէս խլեց նամակը և մօտեցրեց  
լամպարին: Ճիշտ միենոյն նամակն էր, ինչ  
իր ստացածը. նոյն ձեզ, նոյն կնիքը, նոյն  
սպառնալիքը. միայն տարբերութիւնը գու-  
մարի մէջ էր:

— Կարգացի՞ք:

— Այն, կարգացի:

— Իմացաք ինչ է զրած:

— Այն, իմացայ:

— Դէ, հիմա ինքներդ ասէք, ինչ առեմ. տամ, հա, տամ էդ տեսակ մարդկանց, որ զօրնվ են ուզում, սպառնում են:

— Ճշմարիտ որ զայրանալու բան է: Զգիտես ով են, ինչ են, փող են ուզում, էն էլ զօրով... Եղբայր մենք ինքներս բողոքում ենք բռնութեան դէմ, զրանք աւելի մեծ բռնականներ են. դեռ համարձակւում են ազատութեան անունից խօսել...

— Ոչ թէ միայն բռնականներ են, այլ և աւազակներ են, աւազակներ—, վրդոված բռունցքով սեղանին խփեց Մաթոսաղան:

— Իմ կարծիքով նուէր ասածդ պիտի բղխէ մարդուս սրտից. այ, օրինակ ինչպէս ձեր եկեղեցու շինութեան համար տեղ տոնելը. դա իսկ որ նուէր է. իսկ մի նուէր, որ չի լինում կամովին, այլ լինում է բռնի՝ դա նուէր չէ, դա կատարեալ թալան է:

— Իսկ և իսկ թալան. լաւ ասիք: Չէ, ևս գրանց փող տուողը չեմ—, Փորսուղեանի խօսքերից յորդորած վճռեց Մաթոսաղան, — սպառնալ չէ, ինչ կուզէ անեն, ևս նրանց կոպէկ տուողը չեմ. ևս տալու տեղը գիտեմ. այ, եկեղեցու համար կտամ.

դա հոգու բան է:

— Իհարկէ, Մաթոսաղան, իհարկէ. եկեղեցին ուր, գրանց ուզածն ուր—, անսահման ուրախացած խօսեց Փորսուղեանը:

— Դէ, պարոն Սարգիս, գիշեր բարի. շնորհակալութիւն բարի խորհուրդներիդ համար. գալս էդ բանի համար էր: Ուշացայ. գուրսը մութն է:

— Լոյս բարի: Խսկի նշանակութիւն միտայ նրանց սպառնալիքին—, աւելի ամբացրեց նրան Փորսուղեանը և ուղեկցեց մինչ դուռը:

— Հա, պարոն Սարգիս, քիչ մնաց մոռանայի—, գոան մէջ կանգնելով խօսեց Մաթոսաղան, — վազը եկեղեցու շինութեան համար մեր տանը ժողով է. խնդրեմ չմոռանաք գալ:

— Շատ լաւ—, ձայնեց Փորսուղեանը և ճանապարհ գնելով նրան, ետ գառաս սենեակ և ընկաւ իր խորհրդածութիւնների մէջ...

VII.

Փոքրիկ սեղանի վրայ վառուող թիթեղիայ լամպարի աղօտ ճառագայթները հա-

զիւ լուսաւորում էին նրա շուրջը բոլորուած մարդկանց մտատանջ դէմքերը։ Նրանք բոլորն էլ լուս էին և մտախոհ։ յաճախակի ծխում էին պապիրոսները և շփում ճակատները, կասես աշխատելով այստեղից հանել, դուրս բերել մի հնար, միջոց իրենց զըժւարին կացութեան, որի մէջ մնացել էին նրանք։

— Բնկերներ —, նրանց գառաւ սեղանի զլխին նատած մի դեռահաս, զանգուը մազերով, նեղ ու լերկ ընչացըսվ, լայն ճակատով երխտասարդ, որի ճնօտի երկու կողմերը մազակալել էին, ու նրա դէմքին տուել վեհ և խրոխտ արտայայտութիւն, — դրութիւնն աւելի քան փափուկ է։ մեր հայրենիքին կործանող վտանգ է սպառնում։ հայի համար լինելու և չլինելու խնդիր է։ մեղ հարկաւոր է օր առաջ միջոց գտնել դէնք ձեռք բերելու, դէպի կովկաս ճանապարհուելու։ ամեն մի բողէ մեր հարազաներից տասնեակներով զոհ են գտնում թաթարական սրին։ ամեն օր մի գիւղ է աւերւում, ամեն շաբաթ մի քաղաք կործանում։ երկիրը գտնել է մոխրի կոյտեր... Այս բոլոր եղելութիւնը մենք աշխատեցինք

ասել-հասկացնել տեղիս հայ հասարակութեան, բայց այդ հասարակութիւնից բացի մեր հասարակ դասակարգի փոքր մասից ոչոք չխմացաւ մեր ասածը, ոչոք չըմբռնեց խնդրի կարեւութիւնը, ոչոք չհասկացաւ իրերի դրութիւնը։ Մանաւանդ աղա դասակարգը բոլորովին խուլ մնաց մեր քարոզին։ նա չուզեց զգալ մեր հայրենիքի ցաւը։ նա իր ոսկին պահեց, կարծելով, որ այդ ոսկին մի աւելի կարևոր բանի պէտք կդայ, քան հայրենիքի պաշտպանութիւնը։ նա իր նպատակը գաճնում է ոսկու և նրա դիզելու մէջ, նա չէ ուզում գիտենալ, որ եթէ այդ ոսկու մի մասը բաժին հանէր հայրենիքին, այդ գեղանի երկիրը այսօր այս չարաբաղդ վիճակին չէր համնի։ Այդպէս է եղել այդ գասակարգը մինչ օրս, այդպէս էլ այսօր է։ Նրա համար չկայ գաղափար, չկայ սէր, չկայ հայրենիք, այդ երեք բանին նրան փոխարինել են՝ հարստութիւն, հաճոյք և փառասիրութիւն։ Մեր ընկերները, որոնք իրենց կրծքով միշտ պատրաստ են եղել պաշտպանելու մեր հայրենիքը, կերծես երբէք մտածել չեն առել մեր աղաներին, թէ «նրանք որ հայրենիքի պաշտպանութեան համար զո-

հարերում են իրենց կեանքը, մենք էլ նրա  
փրկութեան համար նուիրաբերենք մեր ոս-  
կու մի մասը»։ Դրանք, սիրելի ընկերներ,  
հայրենիքի արժանի զաւակներ չեն, այլ մի  
տեսակ զաւաճաններ, որ ոսկի տալու եր-  
կիւղից հեռու են պահում իրենց դէպի հայ-  
րենիքի տառապանքները և խորթանում են  
մեզանից։ Արդ, երբ քարոզը չի օգնէ։ Արդէն երկ-  
րորդ անգամն է, ինչ նամակներով դիմում  
ենք արել, բայց ոչ մի տեղից պատասխան  
չունինք, և ոչ էլ մի կոտէկ փող ենք ստա-  
ցել. իսկ մենք երկար սպասել անկարող ենք.  
իւրաքանչիւր բոպէն թանդ է մեզ համար։  
Երբ ընդհանուրի շահը պահանջում է մէկի  
գոհուկիլը՝ այդ գոհը պէտք է լինի. մենք  
պէտք է դիմենք վճռական միջոցների։  
Խնդիրը ընկերներ խիստ լուրջ է, և հարցը  
ծանրակշիռ։ Զեր կարծիքն եմ հարցնում։

Մի քանի բոպէ տիրեց խորին լուռթիւն։  
— Ես կամէի—, կամաց և հանգիստ  
սկսեց մի հարուստ պեխերով երիտասարդ—,  
այդ տեսակ միջոցը թէ խիստ է և թէ վատ.  
այդ կերպ ստացած օգնութիւնը հաւասար է  
չստացածի, եթէ ոչ աւելի վատը. հարկա-

որ չէ այդ միջոցով օգնութիւն ստանալը.  
հարկաւոր է աշխատել, հասկացնել նրանց,  
որ նրանք իրենք զգան հայրենիքի ցաւը և  
կամովին անեն նուիրաբերութիւնը. մեր ա-  
րածը բռնութիւն է. դա մի ձեռով շինել է,  
միւս ձեռով քանզել։

— Ընկեր Վահագն—, ընդհատեց նրան  
մի նիհար, չոր, թուխ գէմքով երիտա-  
սարդ, — ասածդ միանգամայն ճիշտ է. ե-  
թէ չլիներ այն ճշնաժամը, և լիներ հան-  
գիստ ու խաղաղ ժամանակ, և մենք ունե-  
նայինք միջոց նրանց քարոզելու և հասկա-  
ցնելու՝ լաւ. բայց ինչ պիտի անես, երբ  
այդպիսի օրհասական բոպէում նրանց ան-  
տարբերութիւնը խոչընդուռ է հանգիստանում  
գործին և խանգարում է մեզ. իսկ մենք,  
ինչպէս ընկեր Արգամն ասաց, չենք կարող  
երկար համբերել, պէտք է դիմենք կտրուկ  
միջոցների։

Նորից տիրեց լուռթիւն, որից յետոյ  
վեր կացաւ միջահստակ, կապոյտ աչքերով,  
գալուկ ու մաղձուռ գէմքով մի գեռահաս  
երիտասարդ, հազար մի-երկու անգամ ու  
սկսկեց.

— Ընկերներ, իմ ասելիքս անմիջական

պատասխան չէ ընկեր Արգամի դրած հարցին, ոչ էլ անմիջական պատասխան ընկեր Վահագի ու Նժեռի ասածներին, այլ մի լրացուցիչ մասն հէնց այն կէտի, որ վիճաբանութեան նիւթ է, որովհետև հէնց այդ կէտն է, որ մեզ մտածել է տալիս և ետ կասեցնում մեզ բոլորիս. դա աղա դասակարգն է: Ընկեր Վահագնը ասաց, որ հարկաւոր է աշխատել, հասկացնել նրանց, որ նրանք իրենք զգան հայրենիքի ցաւը և կամովին անեն իրենց նուիրաբերութիւնը: Ես նրա ասածից հետեցնում եմ այն, որ նրանք, այսինքն այդ աղաները տղէտ են, այդքանը չեն հասկանում: Իսկ ես դրան ոչ թէ տարակուսում եմ, որ այդպէս չէ, այլ զարմանում եմ. միթէ աչք ունեցող մարդուն հարկաւոր է ցոյց տալ արել և նրա լոյսը. միթէ մարդ երբ զգում է ցուրտ, պիտի ասես, թէ «մրսում ես»: Ո՞չ, ընկերներ. այդ այդպէս չէ. այդքանը հասկանալու համար մեծ գիտութիւն պէտք չէ, մի առանձին գիտարութիւն էլ չկայ, այլ հարկաւոր է, որ մարդուս սիրտը մեռած չլինի, մարդը այդ աստիճանի շահագրգիռ և գծուծ չինի, Խնդրեմ ասէք, միթէ թուրք բէզը

կամ թաթար իշխանը աւելի հասկացող է և զարգացած քան մեր հարուստ, աղա դասակարգը. ամենեին ոչ. նրանք այդ բանում մերոնցից շատ ցածր են. բայց մի ուրիշ բան, որում նրանք մերոնցից բարձր են, այդ նրանց համայնական ոգին է, որ մեր աղայական դասակարգի մէջ մեռած է: Իսկ դա ոչ թէ ասելու հասկացնելու, այլ ժամանակի խնդիր է. մինչև որ կկրթուի մի քանի սերունդ: Իսկ այժմեան աղայական դասակարգը երբէք չի կամենայ, չեմ ասում չի կարենայ, մեզի հասկանալ: Նրանք եթէ այսօր իրեն հայութեան անդամ մեզ պիտանի չեն՝ գոնէ նրանց ոսկին մեզ պիտանի լինէր: Ծը՛, ես երկար կանգ կառնէի այդ դասակարգի, ընդհանրապէս դասակարգերի վրայ, բայց որովհետև ժամանակն ուշ է և մեզ այդ շատ հեռում կտանէր, ուստի ես վերջացնում եմ իսուքս—, ասաց և հազիւ շունչ քաշելով ընկաւ աթոռին:

Դարձեալ տիրեց խորին լոռութիւն. իւրաքանչիւր մէկի սրտի վրայ կասես մի քարէր ծանրացել. ամեն մէկը զգում էր իրեն խղճի պայքարում. նրանց մէջ մի կողմից խօսում էր մարդկային ցաւակցական զգաց-

մունքը, միւս կողմից հրատապ օրուայ խընդիրը:

Դրութիւնը ծանը էր և գժուարին. նրա իւրաքանչիւր ըոպէն ճակատազրական էր.

Գանգուր մազերով երիտասարդը, որ մինչ այդ խաղում էր իր լերկ ընչացքի հետ, ըմբոնեց ընկերների հոգուն տիրող դրութիւնը, հասա շրթունքները շարժեց ու դառնաւ.

— Ընկերներ, իմացաք ընկեր վահագի, Նժդեհի և Հրանտի ասածները. լսեցիք և իմ ասածը. Ես պարզ կերպով տեսնում եմ, որ իւրաքանչիւրիդ հոգու մէջ մի անհտւասար կոխւ կայ. բացի այդ, որքան էլ հարցը ձեզ համար վճռուած լինի, դարձեալ ճնշուած էք զգում ձեզ. այդ պատճառով ես առաջարկում եմ ձեզ դարձեալ մի, բայց վերջին միջոց. կկամենա՞ք:

— Խնդրեմ—, լսուեց չորս կողմից:

— Մենք պատղամաւոր ուղարկենք տեղիս երէցի մօտ և խնդրենք, որ նա գնայ մեր կողմից իբրև հոգեոր հայր ներկայաւայ աղամներից մէկին (որից ամենից շատ ենք պահանջել) համոզէ, առէ վերջին անգամ մեր առաջարկն ու վճիռը. և եթէ այդ

էլ չօգնէ՝ այն ժամանակ դիմենք խիստ միջոցի:

Ընկերները լուռ համաձայնութեան նշան տուին, և քիչ հանգստացած խօսող երիտասարդի առաջարկութեամբ, պասլիրոսները բերաններին կամաց-կամաց հեռացան սեսեակից:

Մնաց միայն գանգրահեր երիտասարդը. նա ծանը մի բաշեց, յուզուած ընկաւ մահճակալին և նորից պաշարուեց ծանը, ինեղող մաքերով...

### VII.

Տէր-Մանասը ընթրիքը կուշտ կերել կողքին ընկած թաղթին հանգստանում էր և երէցունու հետ խօսում:

— Ասում են, Մաթոս-աղէն եկեղեցու տեղն արգէն առել է, հա՛, տէրտէր, ճիշտ է:

— Այս, ճիշտ ա. սեռմռւթ տեղ ըլլի դիմին:

Ուրեմն շինութիւնը շուտով սկսելու են:

— Փող են հաւաքում, որ սկսեն. արդէն ցուցալ են կազմել, թէ ումից ինչքան առնին:

— Առել է մի տարուց եկեղեցին պատրաստ կլինի:

— Ի՞նչ մի տարի —, երեցուհու վրայ կանչեց Տէր-Մանասը, — ի՞նչ ես դուքս տալի. ասա եօթը, ութը, տասը... ի՞նչ, բերանդ կցաւի...

Երեցուհին հասկացաւ ամուսնու հոգեշխան դրութիւնը. նա նոյնպէս լսել էր, որ երբ եկեղեցին շինուի, պատրաստ լինի, իր ամուսնուն ասելու էին, «Երթաս բարով». Էլի նորմէկից թափառական կեանք, էլի հալածանք, էլի նեղութիւն: Նա այդ դրութիւնը միքանի անդամ ճաշակել էր, և զգացել էր նրա դառնութիւնը: Եւ երբ նա երեցի բարկութեան վրայ մտապատկերեց մի նոր թափառական անտուն, անհաց կեանք, սրտում մի ծակող կակիծ զգաց և մտքում խօսեց. «Երանի կամ որբազնը կենդանի լինէր, կամ մարդս նորից ջրկիր դառնար»...

— Եկեղեցի ա շինում. անխիդա անաստուած. մի կողմից եկեղեցի ա շինում, միւս կողմից կենդանի եկեղեցի ա քանդում: Տայ Աստուած իրեն օջախն էնպէս քանդուի, որ պուճախ դառնայ: Անտէր մարդ ա գտել, խեղդում ա... Ապա մէկ որբազնը

կենդանի ըլլիր, տեհամ ի՞նչպէս կհամարձակուիր ինձի ձեռը տալ... Հը ը՛, նրան շանց կտար —, բոռնցքը օդում շարժելով վերջացրեց Տէր-Մանասը:

— Այն, սրբազնը, սրբազնը... միւ..., խորը հառաչ քաշեց երեցուհին և յիշեց սրբազնի երկար, փափուկ մօրուքը...

— Ի՞նչ անեմ, հա, իրիցկին, ասա, ի՞նչ հնար գանիմ, որ խանգարեմ եկեղեցու շինութեան գործը, կամ էդ անաստուածին էն տեսակ մի վիաս հասցնեմ, որ գնայ իմանայ:

— Աստծուն թող —, խուլ ներշնչումով ձայնեց երեցուհին:

Այդ ժամանակ լսուեց գուան բաղխոցի ձայն: Երեցն իսկոյն վեր կենալով տեղից շարժուեց դէպի դուռը և կանչեց.

— Ո՞վ ա:

— Ես եմ:

— Դու ով ես:

— Ծուխ եմ: Բացէք:

— Ծուխ —, ձայնեց Տէր-Մանասը և մոմի ձեռին մօտեցաւ գուան. և նա հազիւ էր դուռը բայց արել, երբ նրա հանդէպ եափընջին ուսին կանգնեց մի դեռահաս երի-

տասարդ: Նրա մազակալած թուխ ընչացքի վրայ կասես քարացել էր յամառութիւն, և հրաման արտայայտող դիմագիծ:

Նրան տեսնելու պէս Տէր-Մանասը մի ցնցող երկիւղ զգաց, մի կաշկանդող անհամարձակութիւն տիրեց նրան և նա հազիւ թոթովեց.

— Ի՞նչ ես ուզում, որդի:

— Զեզ հետ խօսելիք ունիմ, հայր:

— Ի՞նչ խօսելիք:

— Ընկերների կողմից յանձնարարւած:

Տէր-Մանասը ոչ հասկացաւ երիտասարդի վերջին ասածը, և ոչ էլ մտահեց հարցնել, թէ ինչ ընկերներ էին այդ, որոնց կողմից յանձնարարուած էր: Նա աչքերը բների մէջ խաղացրեց ու կանչեց.

— Իրիցկի՞ն, ծուխա, զափի լամպը վասի:

Մինչև լամպարի վառելը երիտասարդը քարացած հայեացքով ու մարմնով կանգնած մնում էր իր տեղում. նա այդ ըռապէ անշարժ էր ինչպէս արձան: Քահանան էլի մի անգամ նայեց այդ կենդանի արձանին և ինքն իրեն հարցրեց. «Եահ, տեհնիս էս ով ա»...

— Համեցէք —, ներսից լսուեց երէց ցուհու ձայնը:

երիտասարդը երէցի հետ մտաւ դահլիճ:

— Ասա, որդի, տեսնամ ինչ ա:

— Տէր-հայր, նախ պէտք է ձեզ ասեմ, որ ես դիմում եմ ձեզ ընկերների կողմից իրեւ խոստովանահօր. ուզում եմ ասել, որ ասելիքս մնալու է մեր մէջ իրեւ գերեզմանական դադանիք:

— Իհարկէ որդի, խոստովանանք ա:

— Երկրորդ, մեր խնդիրքն է ձեզ, իրեւ քահանայի, միջնորդ հանդիսանալ մեր և մի անձնաւորութեան մէջ և աշխատել զլուխ բերել մեր յանձնարարութիւնը:

— Այս իհարկէ. էդ մեր քահանաների պարտքն ա:

— Մեր կողմից դիմեցէք Մաթոսազգային, յայտնեցէք, որ մենք միջնորդ ենք ընտրել ձեզ, և համոզեցէք նրան, որ տայ այն գումարը, որ մենք պահանջել ենք նրանից:

— Մաթոսազգին, գումար —, իրեն կորցրածի պէս կրկնեց երէցը:

— Այս, Մաթոս ազգին, գումար. ասացէք նրան, որ վերջին անգամ ենք դիմում

Նրան և զգուշացնում, որ սայ այդ գումարը. Եթէ այժմ էլ չկատարէ մեր պահանջը՝ վաս հետևանք կունենայ նրա համար... Հա, պէտք է այս էլ ասեմ, որ երբ նա ստացել էր մեր երկրորդ նամակը, բարկացած ճղել դէն էր ճղել և մեր ընկերների հասցէին անվայել խօսքեր շռայլել. այդ արդէն մենք նրան չենք ների...

Այդ խօսքերի վրայ Տէր-Մանասին տիրեց մի տարօրինակ յուզում. նրա մսերը վրան կասես շարժուեցին և կաշու տակ կարծես ինչ որ բաներ սկսեցին ման գալ:

— Դրա համար դուք նրան կտաք երեք օր ժամանակ, որ բերէ, յանձնէ. Եթէ այդ ժամանակամիջոցում էլ չկատարէ մեր պահանջը՝ մենք կդորժագրենք մեր վճիռը:

— Ի՞նչ վճիռ. եանի ի՞նչ կանէք —, ապուշ դարձածի նման հարցըց Տէր-Մանասը,

— Մահ կտանայ մեզանից:

— Մահ —, ոտքի թոշելով աչքերը բների մէջ խիստ արագ խաղացրեց Տէր-Մանասը. Այդ ըոպէ նրա սրտի յուղմունքն այնքան սաստկացաւ, որ նա զգաց իրեն կտարեալ ապուշ դրութեան մէջ, նա չփիտէր

ի՞նչ էր այդ լոպէ կատարուածը, երազ, թէ իրականութիւն:

— Ես ինձ յանձնարարուածն ասացի, մնում է ձեզ կատարելլ: Խոնարհ ծառայութիւնս —, ոտքի ելնելով վերջացրեց երիտասարդը:

— Տէր ընդ քեզ —, թոթովեց Տէր-Մանասը և ուղեկցեց անծանօթին մինչև դուռը. ապա երբ գուռը փակելուց յետոյ մտաւ գահին, գիտակցութիւնը հաւաքեց զլուխը, կարծես երկնքից բաղդ իջած զգաց իր գըլխին: Նրան այնպիսի մի ուրախութիւն պատեց, որ հաւասար էր իրեն հաւասացած խոսացեալ զրախտին: Նա արբած այդ անսպասելի իրականութիւնից սկսեց սենեակում բացականչել.

— Դէհ, հիմա եկեղեցի շինիր, Մաթոսաղա, եկեղեցի շինիր, տեսամ ինչպէս ես շինում... ու ինձ էլ էս տեղան հեռացնում... Հա, ինչպէս չէ, ես կզամքեզ մօտ, կտամ, կհամոզեմ, որ նրանց պահանջած գումարը տաս, որ ձեռքերից ազատուես... ինչ դադար յիմար պիտի ըլլիմ ես, որ իմ կործանումն ուզող թշնամուս կեանքը ազատել ցանկանամ... Զէ. ես էն դադար էլ յիմար

չեմ... Դէհ, հիմա ուրախացիր Տէր-Մանաս,  
ուրախացիր, գործդ աջ ա:

— Ի՞նչ ուրախութիւն. ի՞նչ աջ. ի՞նչ  
ես կանչում. ով էր դա. ի՞նչի չես գալիս  
սեղանատուն—, իրար ետևից հարցրեց ե-  
րեցուհին, որ ամուսնու բացականչութիւն-  
ների վրայ մտաւ ներս տեսնելու, թէ ի՞նչ  
ձայն էր:

— Ին եկողն ասում էր, որ մենք մնա-  
լու ենք էստեղ, էս քաղաքում:

— Շիտակ—, ուրախացած ամուսնուն  
փաթաթուեց երեցուհին:

— Սուրբ կարգս վկայ:

— Հը՛ը. ի՞նչ լաւ մարդ է եղել—,  
շնչաց երեցուհին, և հանգցնելով լամպարը  
քահանայի հետ անցաւ միւս սենեակը:

Տէր-Մանասը կատարելապէս արբած  
այդ անսպասելի ուրախութիւնից, ամբողջ  
զիշեր չկարողացաւ քնել. նա շարունակ  
շուռումուռ էր գալիս երեցուհու ծոցում և  
շուտ շուտ հարցնում.

— Զլուսացմւ, իրիցկին:

— Զէ դեռ. թող հանգիստ քնիմ:

Այդ գիշերուայ համբերութիւնը Տէր-  
Մանասի համար կատարեալ մարտիրոսու-

թիւն էր. նա անհամբեր սպասում էր, Երբ  
պէտք է լուսանար, որ գնար Սարգիս Փոր-  
սուղեանի մօտ, դէպքը նրան պատմէր....

### VIII.

Սարգիս Փորսուղեանը նոր էր վեր կա-  
ցել տեղից և դեռ կանոնաւոր չէր հագնուել,  
որ զանգակը հնչեցրին: Նա դեռ տարօրի-  
նակ մտածման մէջ էր, թէ ով կարող էր  
լինել առաւօտ այդպէս վաղ զանգը քաշողը,  
որ ներս մտաւ մաքուր հագնուած աղախի-  
նը և յայտնեց.

— Տէր-Մանաս հայրն է. ասում է  
«Խիստ կարեոր գործ ունիմ, ուզում եմ  
անպատճառ տեսնել»:

«Կարեոր գործ», մտքում կրկնեց Սար-  
գիս Փորսուղեանը և հրամայեց.

— Ընդունիր դահլիճ, մինչև ես կհագ-  
նուիմ, կգամ:

«Խիստ կարեոր գործ... Էն էլ առաւօտ  
այսպէս վաղ... չէ, այստեղ մի բան կայ»  
հագնուելիս մտօրաւ ինքնիրեն Փորսուղեա-  
նը և շտապեց գահլիճ:

— Ա-ա, այդ դժուք էր տէր հայր:

- Աղջնյն ձեզ:
- Օրհնեա 'ի տէր: Համեցէք ինդրեմ:
- Պարոն Սարգիս—, հաղիւ շունչ  
առնելով սկսեց Տէր-Մանասը,— ներեցէք,  
որ ես էսպէս առաւօտ վաղ, անքաղաքա-  
վար... բայց գիտէք ինչ կայ:
- Ի՞նչ. ասացէք ինդրեմ:
- Ա-ա, ինչպէս ասեմ. ը՛լ՛, երէկ ի-  
րիկուն, էհ, ինչ եմ ասում, ինչ իրիկուն,  
գիշեր, մի երկար բոյով մարդ, եափնջին ու-  
սին, սև փափաղը գլխին եկաւ ինձ մօտ.  
եկաւ ինձ մօտ, ասի, որդի, ի՞նչ ես ուզում:  
Ասաց թէ, մենք Մաթոս-աղայից փող ենք  
ուզել, ասաց, էսքան ժամանակ ա չի տա-  
լի, ասաց. եկել եմ ընկերների կողմից քեզ  
ասելու, ասաց, որ գնաս իրեն Մաթոս-աղի  
կուշոը, ասես, համոզես, ասաց, որ ասյ,  
ասաց, թէ չէ մենք նրան կսպանենք, ասաց:
- Ի՞նչ. կոպան ենք—, կանչեց Սար-  
գիս Փորսուղեանը և վեր թոշելով տեղից  
մի-երկու անգամ այնպէս պտոյտ եկաւ, որ  
կասես կաղրիլ պարեց:
- Այն, ասաց «կսպանենք»—, նորից  
աչքերը խփխփացնելով յարեց Տէր-Մանասը:
- Ե, դուք ինչ պատասխան տուիք:

- Ասի լու:
- Յետո՞յ—, այլայլուած դառաւ Սար-  
գիս Փորսուղեանը,— ինչ, գնացիք ասի՞ք:
- Հը, պարոն Սարգիս—, մեղմ ժպի-  
տով խօսեց Տէր-Մանասը, — Էն տեսակ բան  
էք ասում, կասէք ես երեխայ ըլլիմ... Ես  
առանց ձեզ ըսկի բան կանեմ...
- Ես այդպէս էլ համոզուած էի, տէր  
հայր—, հանգստացած վրայ բերեց Փորսու-  
ղեանը,— գիտեմ, որ դուք իմ ամենալաւ  
բարեկամն էք:
- Բակի գիշերս քուն չեղայ. ասի, Երբ  
պիտի մէկ լուսանայ, որ գնամ պարոն Սարգ-  
իս մօտ, հարցնեմ, տենամ ինչ կասի:
- Ես ինչ կանեմ—, խօսակցութեան  
ձեր փոխելով ձայնեց Փորսուղեանը:
- Այն. զրա համար էլ եկել եմ:
- Ես կասեմ. էն ուզողները, էն էլ  
ինքը Մաթոս-աղան. ուզում է տայ, ուզում  
է ոչ. ինձանից որ ուզէին, կմտածէի, ինչ  
անէի: Մաթոս-աղան իրեն շատ հասկացող  
մարդու տեղ է գնում. թող որոշէ, ինչպէս  
իրեն խելքը կկարէ: Մէկ էլ գիտէք ինչ:
- Ի՞նչ—, աչքերը խփխփացնելով հար-  
ցրեց Տէր-Մանասը:

— Այն, որ եթէ ասէք «փող առւր», պիտի կարծէ, թէ գուշ էլ փող ուզողների մէջ էք. եթէ ասէք «երբ չտաք կսպանեն», մի բան պատահելիս ձեզ վրայ պիտի կասկածին. Ահա թէ ինչ է իմ ասելիքը:

— Շատ խելօք էք ասում, — իսկը ես էլ էդ տեսակ էի մտածել... բայց ասի, էլի մէկ գնամ պարոն Սարգսից խորհուրդ հարցնեմ:

— Զափազանց շնորհակալ եմ ձեր մտերիմ բարեկամութեան համար. Միայն ինչ որ խօսեցինք, ինդրեմ մեր մէջը մնայ:

— Այն, իհարկէ..., թոթովեց Տէր-Մանասը և ելաւ ոտքի:

— Հա, տէր հայր..., ինքն ևս ոտքի կանգնելով խօսեց Փորսուղեանը, — եթէ պատահի, որ երիտասարդը գայ պատասխանի, ինչ էք ասելու:

— Կասեմ, որ «գնացի, ասացի»:

— Լաւ էք միտք արել: Այդ ժամանակ չմոռանաք հարցել նրան, ով է ինքը, որտեղ է բնակւում:

Տէր-Մինասը այդ խօսքերի վրայ աչքերը միքանի վայրկեան խիլխացրեց բների մէջ, կարծես այդպիսով ուղեց հասկա-

նալ, իմանալ, թէ ինչու համար էր այդ, սակայն չհամարձակւելով իր բարեկամի ցանկութիւնը քննել՝ ցածր ձայնով յարեց.

— Լաւ:

— Իսկ եթէ պատահի..., առաջ տարաւ Փորսուղեանը, — որ հարցնէ, թէ «ինչու համար էք հարցնում», ասացէք, «եթէ Մաթոս-աղին փողն ուղենայ բերել՝ ձեզ իմաց տամ»:

— Լաւ..., նորից յարեց Տէր-Մանասը և շարժուեց գէպի գուռը:

Փորսուղեանը ուղեկցեց նրան մինչի գրսի գուռը, ապա երբ ետ դառաւ դահլիճ, նստեց բազմոցին, քթի տակ մրմուց. — Եթէ Մաթոս-աղին ձեռ չտան՝ ասել է փող չտալուն մեզ էլ չեն վսասի. իսկ եթէ նրան խփեն և դրանից յետոյ անմիջապէս չբռնուին՝ այն ժամանակ 1000 ր. պէտք է տալ. ուրիշ ճանապարհ չկայ...

## IX.

Օրը կիրակի էր. Առաւօտ վաղ Ն... քաղաքի ժողովրդի մէջ ինչ որ խուլ շշուկ կար. մարդիկ իրար ականջի ինչ որ բան

էին փսփսում, և շտապով քայլերն ուղղում  
դէպի եկեղեցու համար առնուած տեղը:  
Խոնուած տմբոխը այնտեղ թաթերի վրայ  
բարձրանալով աշխատում էր իրար ուսերի  
վրայից տեսնել կատարուած իրողութիւնը:  
Ամբոխի կենտրոնում ոտտիկանութիւնը ըննի-  
չի հետ մի փոքր սեղանի շուրջ բոլորուած  
արձանագրութիւն էր կազմում:

— Զարմանալի բան է. չարագործները  
ոչ մի բան չեն վերցրել հանգուցեալի վրա-  
յից, ոչ փող, ոչ ժամացոյց և ոչ մատանի:

— Այդ նշանակում է, որ սպանութիւնը  
թալանելու նպատակով չէ կատարուած —,  
պրիստուի ասածին յարեց քննիչը:

Ոտտիկանութեան ոտքերի առաջ ընկած  
էր արնաթաթախ մի դիակ, որի ծնոտի տակ  
կոկորդի մէջ հասցրած վերքերի բերանները  
գեռ բաց էին և թարմ. երկում էր որ սպա-  
նութիւնը առաւօտ էր կատարուած:

Դա Մաթոս-աղայի դիակն էր, որ լճա-  
ցած արիւնի մէջ մէջքին ընկած, թևերը  
աջուծախ պարզած, կիսաբաց, հանգած  
աչքերով նայում էր կապուտակ երկնքին և  
կարծես հարցնում.

«Ինչո՞ւ սպանեցին ինձ աղօթատուն

զնացածս ժամանակ հէնց այն տեղում, ուր  
ես ուզում էի եկեղեցի կառուցանել. ինչո՞ւ»...

Ամբոխը դեռ չէր ցրուել, որ կառքով  
մօտեցաւ ոճրագործութեան տեղին Սարգիս  
Փորսուղեանը. նա բարձրանալով կառքի  
վրայ, իր աչքերով տեսաւ արնաշաղախ դի-  
ակը, մի-երկու ըռպէ լուռ դիտեց, ապա  
կառքը քշել տուեց և մտքում խօսեց. «այս  
մէկից պըծանք, մնաց միւսը»...

## X.

Մաթոս-աղայի սպանութեան օրից ան-  
ցել էր 2-3 օր:

Քնից զարթնելով գանգրահեր երիտա-  
սարգը, Արգամը մօտեցաւ լուսամուտին:

Օրը ամպամած էր խոնաւ և ցուրտ:

Քամին կատաղի յորձանք տալով ագահ  
կերպով լիզում էր գետինը և հաւաքում նրա  
երեսին ցըիւ եկած իրերը: Նրա ոռնոցը  
լաւում էր անվերջ, ինչպէս մի գուժկանի  
աղաղակ, կամ բոթաբերի վայնասուն: Բնու-  
թիւնը ինքնին տխուր և լալկան էր այդ օրը:

Եղանակից ստացած վատ տպաւորու-  
թիւնից երիտասարգը ետ դառնալով մահ-

ճակալի մօտ դրած սեղանին, նորից աչքից  
անցկացրեց սեղանի վրայ ցրիւ եկած հա-  
մակներն ու թղթերը, տրորեց լերկ ընչաց-  
քը, ապա վառելով պապիրոսը սկսեց դահ-  
դաղ հազնուել, երբ յանկարծ լուսամուտը  
ուժգին բաղիսեցին:

— Ո՞վ է:

— Ես եմ. շուտ բաց:

Զայնը ծանօթ էր: Երիտասարդն զգաց,  
որ այդպէս առաւօտ վաղ ուժգին բաղիսելը  
լաւ նշան չէր: Նա շտապով վազեց դէպի  
դրսի դուռը, բաց արեց, երբ յանկարծ այ-  
լայլուած նրա դիմաց կանգնեց վահագնը, և  
վհատած յայտնեց.

— Մենք բոլորս մատնուած ենք:

— Մատնուած—, սարսափած կրկնեց  
Արդամը, և կանգնած տեղում մնաց քարացած:

— Այս:

— Ի՞նչպէս. ո՞վ...

— Գիշերս խուզարկել են ընկեր Նժդե-  
հի բնակարանը, գտել են արնոտ դաշոյնը.  
Բացի այդ գտել են և «Մըրիկ» խմբի ցու-  
ցակը. իրեն էլ բանդարկել են:

— Ցուցակը—, դառն վրդովմունքով  
կանչեց դանգրահեր երիտասարդը և ձեռը

տանելով ճակատին արմունկով ընկաւ պա-  
տին:

— Այժմ եկել եմ իմանալու, ի՞նչ  
կկարգադրես:

— Ամեն ինչ կորած է և յոյս, և գործ  
և օգնութիւն—, այրուած շնչով խորը թա-  
ռանչ քաշեց նա և սկսեց տրորել ճակատը,  
երեսը, աչքերը, կարծես այդպիսով աշխատել  
պարզ տեսնելու տեղի ունեցող երկոյթը:

— Ընկերները բոլորը քաղաքից գուրս  
են, սպասում են քո կարգադրութեան:

— Փախչել, փախչել—, հազիւ կարո-  
ղացաւ արտասանել նա:

— Ո՞ւր, դէպի ո՞ր կողմը:

— Կովկաս, մեր հայրենիքը, դէպի մեր  
ընկերները:

վահագն իսկոյն հետացաւ:

Գանգրահեր երիտասարդը բաւականին  
ժամանակ քարացած կանգնած մնալով դա-  
ռն իրականութեան տպաւրութեան տակ,  
մի զօրեղ ցնցումով յանկարծ շուռ եկաւ  
տեղում, շտապով մտաւ սենեակ և սկսեց  
իրերն հաւաքել...

դա մեր բարեկամն է», և ինձ թոյլ տուեց  
մօտենալու:

Ես ձեռու տարայ սեռուկի գլխին ու բա-  
շին. նա այնպէս նուրբ էր, ինչպէս թաւիշ.  
այնպէս փափուկ ինչպէս մետաքս: Շոշա-  
փեցի նրա մէջքը, ոտքերը. փարուեցի զո-  
վը, համբուրեցի գունչն ու երեսը, և մի ան-  
հուն ուրախութեամբ լցուած ելայ գուրս  
ընկերներիս հաղորդելու իմ բաղդաւորու-  
թեան մասին:

Եղանակն արդէն գարուն էր: Աժմար-  
հի չորս կողմից ջրերը հոգի առած բար-  
ձունքներից թափւում էին ներքե, նախ  
սփուռում հարթավայրերում, ապա միանա-  
լով գետակների ու գետերի հետ դիմում  
գէպի մայր ծովը:

Բնութեան բոնութեան կապանքներից  
աղատուած համարձակ իրենց գլուխները  
դուրս էին հանել ծաղիկն ու խոտը, ծառն  
ու մացառը: Բացուել էր թռչունների լե-  
զուն. նրանք օրներգ էին կարգում աղա-  
տութիւն պարզեսող Արարչին: Հովը թևեր  
առած աղատութեան աւետիսը տանում-  
տարածում էր չորս կողմը: Երկնքի աճպե-  
րը կապանքներից աղատուած, արձակ լո-  
րը

## ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Առաւօտ տեղաշորիս մէջ դեռ  
պառկած էի, երբ ներս մտաւ հօրեղբայրս  
և յայտնեց, որ մեր սպիտակ մատեանը զի-  
շերս որձ քուռակ է բերել:

Ուրախութիւնից մանուկ սիրաս թըն-  
դաց: Շուտով հագայ շորերս, վազեցի գոմ  
տեսնելու իմ այնքան ժամանակուայ փայ-  
փայած երազը: Բացի գոմի գուռը, տեսայ  
նորածինը, նա սաթի նման սև էր և փայ-  
լուն. ողորկ, կորնը, սիրուն:

Ուրախութիւնից խելքս կորցրած վա-  
զեցի մօտ զրկելու, համբուրելու:

Իմ այդ յարձակումից վախեցած նա  
երկու սատիւն արեց, մօտեցաւ մօրը և  
կանգնեց մսուրի հետ:

Մայրը կամացուկ խրինջաց, հոտոտեց  
ձագուկին, գունչը տարաւ դէպի նրա զլու-  
խը և կասես ականջին ասաց. «մի վախիր.

դում էին երկնակամարում, մերթ կանչում,  
մերթ կայծում, մերթ անձրևում... Օ-օ,  
որքան ժամանակ է համրացել էր նրանց  
լեզուն, խաւարել լոյսը, չորացել ուրախու-  
թեան արցունքի կաթիլը...

Կենդանիները մի անսահման խնդու-  
թեամբ կայտում էին դալարոտ տեղերում,  
վեր-վեր թռչում, կեանք վայելում:

Կայտում էր և իմ սևաթոյր քուռակը.  
Նա դադար չէր առնում արշաւելուց. պտոյտ-  
ներ էր գործում մօր շուրջը, վազում-վազ-  
վզում, էլի մօտենում մօրը, մի երկու ումայ  
համեղ կաթից ծծում ու դարձեալ շարու-  
նակում կայտուել:

Իլիին երբ երեկոներն արօտից գալիս  
էր գիւղ, ևս գնում էի քուռակիս իր մօր  
հետ տուն բերելու:

Մի օր էլ ըստ սովորականին երբ դար-  
ձեալ գնացել էի նրանց տուն բերելու, քու-  
ռակիս չգայ իլիսու մէջ, ոչ էլ մօրը: Ինձ  
համար մի անբացարելի վշտով համակուած  
եկայ յայտնեցի եղելութիւնը հօրեղբօրս:  
Հօրեղբայրս գլուխը կախեց, քիչ մտօրաւ,  
ապա ձի նստեց, գնաց գնտուելու.

Ուշ, շատ ուշ գիշեր էր, որ նա վե-

րադարձաւ տուն և յայտնեց, որ ոչ մի տեղ  
չէ գտել, վաղն առաւօտ հարկաւոր է ա-  
ւելի հեռուները փնտուել:

Ես ամբողջ գիշերը վշտիցս չկարողացայ  
քնել. վերջապէս լուսացաւ և մենք մի քա-  
նի հոգով գնացինք որոնելու:

Ես անցկացայ մի ձորակ, բարձրացայ  
մեր գիւղի սարի «Գէօգգաղի» գլուխը, ա-  
պա թեքուեցի սարի ետևի քարքարոտ հար-  
թավայրը, որի անունը մինչի օրս էլ «Գէլ-  
բներ» է: Այնտեղ նկատեցի մի սպիտակ,  
փողփողող կէտ: Ճանաչեցի. դա մեր մա-  
տեանն էր. Նա մի կէտում գլուխը կախած  
անշարժ կանգնած էր. միայն նրա հարուստ  
սպիտակիախառն պոչն էր, որ ծածանւում էր  
զեփիւոի առջև: Հասայ: Նա ինձ տեսնելու  
պէս մի վշտալի վրինջ արձակեց, և գլուխը  
նորից կախեց ներքեւ:

Ես աւելի մօտեցայ նրան. տեսայ նրա  
առջև մի թարմ կմախք, սարսափ եկաւ վրաս,  
և մի ցնցող սարսուռ անցաւ մարմնիս վրա-  
յով. իմ քուռակիս ոսկորներն էին. նրա սև  
սմբակներից ճանաչեցի ես: Երկում էր, որ  
գայլերն էին պատառուել նրան, կմախքը  
թողել այստեղ:

Ծանր վշտով լցուած նայեցի մօրը, և  
տեսայ թէ ինչպէս կենդանին այդ ժամա-  
նակ հոտոտում էր իր զաւակի մարմնի մնա-  
ցորդները և աչքերից հեղեղի պէս արտա-  
սուք թափում:

Այդ տեսարանի առջև անկարող եղայ  
ինքս ինձ պահել. մի խորին ակնածութիւն  
զգացի գէպի այդ անխօս, բայց շատ բան  
ասող մայրը. համակուեցայ նրա վշտով և  
լցուեցի արցունքերով:

Արդէն ուշ էր. ուզեցայ նրա բաշից  
բռնել տանել տուն: Սակայն նա դժգոհ կեր-  
պով շարժեց գլուխը, խեց բաշը ձեռիցս,  
փոկաց և նորից ոկտեց հոտոտել, լիզել զա-  
ւակի մնացորդները և արտասուել:

Հօրեղբայրս եկաւ, գտաւ ինձ: Մենք  
նրա գլուխը սանձ դրինք, բերինք տուն:

Սակայն այդ օրուանից նա յաճախ ե-  
րեկոները տուն չէր գալիս: Նրան գտնելու,  
տուն բերելու համար ես միշտ զնում էի  
«Գէլբները», և շարունակ տեսնում էի նրան  
այնտեղ, իր զաւակի գերեզմանի մօտ կանգ-  
նած, արտասուք թափելիս:

Այն ժամանակ ես զգացի, թէ որքան  
վեհ և հզօր ես գու, մայրակմն գութ:

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

190... թուի ամառն էր:

Ս... քաղաքի գտարական պալատում  
քննուում էր մի շատ հետաքրքրական գործ:  
Հետաքրքրուող ամբոխը առաւօտ 10 ժամից  
արդէն բռնել էր դատարանի դահլիճի նստա-  
րաններն ու ազատ տեղերը: Դատաւորների  
ձախ կողմում դատապարտեալների նստա-  
րանի վրայ նստել էր յանցաւորը շղթայա-  
կապ. նրա կողքին սուխները ձեռքերին կանդ-  
նած էին երկու պահակ:

Քիչ ժամանակից դատարանի սպասա-  
ւորը զանգակը հնչեցը և յայտարարեց  
դատաւորների մուտքը:

Ներս մտան իրար ետեից երեք դատա-  
ւոր. նրանցից յետոյ պորտֆէյլը կռան տակ  
մտաւ դատախազը, ապա թղթերի ծալքը  
ձեռին քարտուղարը:

Խնդիրը նրանումն էր, որ ոչ ոստիկա-

նութիւնը, ոչ քննիչը, ոչ էլ դատայանական նախնական քննութիւնները կարողացել էին պարզել մեղագրեալի ոճրագործութեան պատճառը: Նա դրանց բոլորին էլ միայն մի պատասխան էր տուել. «այս, պարոն դատաւորներ, ես եմ սպանելնրան, բայց ես մարդապան չեմ». ուրիշ ոչինչ:

Նախագահը կարդալով ոստիկանութեան կազմած արձանագրութիւնը և քննիչի զեկուցումը, դառաւ.

— Մեղագրեալ, դուք խոսառվանելով ձեր կատարած սպանութեան յանցանքը, չեք յայտնել նրա պատճառը: Այժմ նորից օրէնքի առաջ էք. ի՞նչ ունիք ասելու ձեզ արդարացնելու համար:

Շղթաների ձայները հնչեցնելով քիչ առաջ շարժուեց մեղագրեալը:

Դա մի թիկնաւէտ, կորովի, մօտ երեսուն տարեկան երիտասարդ էր, խարսեաշմաղերով, քիչ շէկ մօրուքով, ընչացքների հետ աղատ տարած ուած հարուստ պեխերով, ոչ այնքան լայն ճակատով, որի վրայի երկու ծափերը զուգընթացաբար գնալով ճակատի մէջ տեղում մի ուրիշ գծով իրար հետ միանում էին, թաւ յոնքերով, որոնց

տակ երկում էին նրա նշանել խաժուժիկ հանգիստ նայուածքով աչքերը:

— Այս, պարոն դատաւորներ—, ձեռով ճակատը շփելով, մի անգամ և շղթաները շարժելով սկսեց նա, — ես մինչ օրս չեմ յայտնել կատարածս սպանութեան առիթը. չեմ յայտնել, որովհետեւ հաւատացած չեմ եղել, որ մի երկրում կատարած գէպքի համար, որոնց նմանները այն զուլում երկրում կատարուեցին ոչ թէ հարիւրներով, հազարներով, այլ հարիւր հազարներով, եթէ այս երկրում կրկնուի նրա փոխարէնը, կատարողը պէտք է արդացում համար ոչ թէ մարդու արեան, այլ անսպաւանի արեան համար անգամ պատասխանաւութիւն ու պատիժ կայ. մինչդեռ այնտեղ մարդիկ, ինձ նմանները մորթւում էին աւելի վատ քան անսպաւանները, և դրանց համար ոչ թէ պատասխանաւութիւն, այլ հարցմունք անգամ չկար... Այս տարաբաղդօրը, որ ես ձեռքս բարձրացրի և սպանեցի նրան, զգացի, որ ես յանցաւոր եմ, ոճրագործ այս երկրի օրէնքի առաջ. ուրեմն էլ ի՞նչ ասէի. չէ՞ որ այնտեղ եղածի համար այստեղ դատ չկայ, հետևապէս և ոչ մի հիմք

յանցագործին արդարացնելու։ Ա՛հ, եթէ  
մէկ օր լինէր մի մարդկային արդար դատ,  
քննէր այն հարիւր հազարաւոր նահատակ-  
ների արիւնը՝ ոչ թէ ինձ և ինձ նմաններին  
կդանէր յանցաւոր, այլ նրանց, որանց հա-  
մար մենք կոչւում ենք դատի...»

— Դուք, մեղադրեալ, գործից հեռա-  
նում էք և հարցին չէք պատասխանում։  
Յայտնեցէք ձեր սպանութեան շարժառի-  
թը—, հանգիստ տոնով ընդհատեց նրան նա-  
խագահը։

— Այժմ ես կպատմեմ այն ամենը, ինչ  
որ ինձ պատճառ եղաւ փախչելու Ռուսիա,  
գալուհամնելու այստեղ, այս գրութեան։

— Ես տաճկահայաստանցի եմ. հայրե-  
նիքս է Վասպուրականը, ծննդավայրս Ն...  
զիւղը, ուր ծնուել ու մեծացել եմ ես։

— Մեր գիւղը գտնուում էր Վանայ ծո-  
վից գէպի հարաւ, այնպիսի մի տեղ, որի  
վերև գէպի լեռը ձգւում էին մեր միշտ ա-  
տօք հասկերով արտերո, նրանցից էլ քիչ  
վերև մշտադարար արօտատեղիները. իսկ  
ներքեում, գէպի ձորակը, ուր բչքչալով հո-  
սում էր ձնալի զետը, գտնուում էին մեր  
պաղաբեր այգիներն ու ծառախիտ պար-

աէզները։

— Ես հօրս մեծ որդին էի. ունէի եր-  
կու եղբայր, որոնցից մէկը մի աշխոյժ պա-  
տանի էր, աշակերտ կենդրոնական վար-  
ժարանի, միւսը մօտ 19 տարեկան կտրիճ  
երիտասարդ, օգնում էր ինձ դիւդատըն-  
տեսական գործերում։

— Հայրս պատկառելի դէմքով մի բա-  
րի ծերունի էր, մայրս նիհար, աղօթասէր  
մի դալուկ պառաւ։

— Ես ամուսնացած էի: Կինս մի չքնաղ  
արարած էր: Նա այնքան գեղեցիկ էր պա-  
րոն գատաւորներ, որ կարծես հէքիաթի մի-  
ջի աղջիկ լինէր: Նա փարթամ և նազանի  
էր ինչպէս նօձի, և համեստ ինչպէս վաղոր-  
դեայն փախչող—թաքչող շուաք: Մենք ան-  
սահման սիրով սիրում էինք իրար. ես նրա  
գրկումն զգում էի ինձ ինչպէս իմ բարերար  
հրեշտակի թեերի մէջ։

— Մեր օջախը շէն էր և խաղաղ  
ինչպէս հայր Աբրահամի տունը։

— Ամեն անդամ հայրս երբ մի պա-  
տառ հաց էր ուտում, ցնծութեամբ լցւում  
էր, աղօթք անում Ամենակարողին և օրհնու-

թիւններ թափում մեր գիւղին:

— Եւ ես խիստ գոհ իմ վիճակից զգում  
էի ինձ երանութեան մէջ, տեսնում էի չորս  
բոլորքով բաղդ ու Աստուած:

— Մայիսեան մի գեղեցիկ օր ես իմ  
տնտեսական գործերով գնացել էի հարևան  
գիւղը:

— Ուշ երեկոյ էր, երբ յանկարծ լուր  
հասաւ, որ մեր գիւղը ըջապատուած է:

— Շրջապատել բառը մենք արդէն  
հասկանում էինք ինչ է նշանակում:

— Մի սարսափեցնող ցնցում անց կա-  
ցաւ մարմնիս վրայով. ես խելագարի պէս  
վեր թռայ տեղիցս, խեցի գէնքերս, դուրս  
վազեցի գիւղից. և հազիւ էի գիւղից դուրս  
ելեւ բարձրացել մի բլրի զլուխ, որ տե-  
սայ երկինքը կարմրած բոսորային գոյնով:  
Նրա տակ թանձր ծխի շերտերի մէջ իրենց  
գլուխներն էին ճօճացնում հազարաւոր լա-  
փող ու լիզող հրեղէն լեզուները:

— Այդ տեսարանի առջև ես խելքս  
կորցրի: Զգիտեմ էլ ինչ էր կատարւում իմ  
մէջ, ինչ էին տեսնում իմ աչքերը, միայն  
զգում էի, որ հեինե ես վազում էի գէպի  
մեր գիւղը: Բոլորովին յոզնել էի, որ հա-

սայ մեր գիւղին, և տեսայ, թէ ինչպէս  
հեռուից լացն ու կոծը, կանչն ու ձիչը, ա-  
ղաղակն ու յուսահատութիւնը խառնուել  
էին իրար և սպանիչ արձագանքներով տա-  
րածւում էին չորս կողմը:

— Մարդիկ կորցրած իրենց հարազա-  
տըն ու բարեկամը, գիտակցութիւնն ու կա-  
րողութիւնը խելակորոյս վազվզում էին բո-  
ցերի մէջ, կանչում, լալիս, աղերսում, ա-  
ղաչում, օգնութեան կանչում, փրկութիւն  
որոնում... Բոսորային լոյսի տակ ուրուա-  
գծւում էին մահի մատնուած, դեռ կենդանի  
մարդկանց ստուերները, որոնք իսկոյն հանդ-  
չում էին ինչպէս գիշերային տեսսիներ...

— Ամեն քայլը մահ էր հնչում, ամեն  
քարը մահ էր չնչում: Ես գիմեցի նրա  
ւերկը. վազեցի հայրենի օջախս, նրան օգ-  
նութեան: Հասայ: Բոցերը դեռ չէին հասել  
նրա կողմը: Տան գոները բաց էին: Ես ներս  
ընկայ. օհ, այդ ժամանակ փոխանակ իմ  
ւենդանի օջախի ինչ տեսայ, պարոն դատա-  
ւորներ —, ձիչ արձակելով քիչ կանգ առաւ  
հա, — հայրս սրախողխող ընկած մէջքին յա-  
տակի վրայ. մայրս կիսամահ նրա կրծքին  
սողալիս, որ կասես իր վերջին հանգիստն ու

միսիթարանքը այնտեղ, հօրս կրծքին փլնտուելիս լինէր. եղբայրներիս երկսի էլ գլուխները կտրած, դիակներն իրար քով զցած. Գուրգէնս, որ մի փոքրիկ, շիկահեր հրեշտականման մանուկ էր՝ արգէն չէր ճանաշւում, նրա գլուխը ջախջախած տափակացրած էր. իսկ կիսս, Գիւնազը չկար դրանց մէջ. պարզ էր, որ նրան առևանգել էին: Չգիտեմ ինչու այդ բոպէ նրա մահն ինձ աւելի հաճելի թուաց. բայց չարագործները չէին սպանել նրան. չէին սպանել ոչ թէ նրա համար որ նրա կեանքը ինայել էին, ոչ, այլ իրենց պազդոտ հաճոյքի համար:

— Ես չգիտէի ի՞նչ անէի այդ սպանիչ տեսարանի առջև. վազէի՞ ոճրագործների ետեկց, փնուէի, որոնէի՞ նրանց, իմ մահւան գնով վրէժ լուծէի նրանցից, թէ միայի անմեղ ընկածների մօտ, կիսամեռ մօրս մօտ, որը իմ գրկում վերջին ցնցումներն էր գործում. մնացել էի կատարեալ քարացած. չգիտէի ի՞նչ էր կատարւում իմ ներսու, իմ հոգուս ու սրտիս մէջ. մի բոպէ ինձ թւում էր, թէ դա մի ահաբեկող վայրկենական երազ էր, որ կատարված պիտի անցնէր, և տեղի տար առաջուայ եղած գեղեցիկ

իրականութեան. բայց աւաղ, դա երազ չէր, այլ իրականութիւն, ամենադառն իրականութիւն:

— Ես իսելակորոյս ընկայ դիակների վրայ, սկսեցի գրկել, համբուրել նրանց, այդպիսով կարծես աշխատել կեանք տալ, վերակենդանացնել նրանց. սակայն, աւաղ, քանի գնում նրանց մարմինները սառչում էին և դէմքերը քարանում:

— Եղբայրներիս գլուխները զցած էին դուն ետև: Նրանց երկսի երեսներն էլ գէպի վեր էին ուղղած. թւում էր, թէ նրանք մի բան էին մոնչում. այդ մոնչինը վրէժ էր, թէ կեանքի փափագ՝ ես չէի կարող հասկանալ. միայն տեսնում էի, որ նրանց աչքերը ծարաւի էին ինչ որ բանի:

— Մայրս այդ ժամանակ վերջին մի թոյլ ցնցում կատարեց գրկումս, և հազիւ լսելի ձայնով շշնջաց. «Օմար, ի՞նչ կուգէիր մեզանից»...

— Այդ անունը լսելով մի գժոխային վրէժ ծագեց սրտումս, որ կասես երբէք հանգչելու չէր:

— Սյիս կասկած չկար, որ մեր տունը կործանողը Օմարն էր, յայտնի արիւնը ուռշատ թուրք բէզը որ իր վայրագ ընաւո-

*բութեամբ յայտնի էր ամենքին:*

— Բայց այն զիտակցութիւնը, որ կնոջս Գիւնազին յափշտակել տարել էին, պարոն դատաւորներ, ամենակատարեալը թուաց ինձ բոլոր տեսակ եղեռնագործութիւններից, որին չգիտեմ ինչ անուն տամ, ըստորում չկայ այնպիսի մի բառ, որ արտայայտէր մարդ-գաղանութեան այդ անընթանելի վարմունքը:

— Ես կատաղութիւնից մռնչեցի, միայնակութեան մէջ յուսակտուր կանչեցի, սակայն իզնուր, իմ ձայնիս արձագանքը միայն ես էի լսում:

— Այդ բոպէ ինքս էլ ցանկացայ մեռնել, խառնուիլ նրանց հետ, անհետանալ գիւղից, աշխարհից, բայց չգիտեմ ինչ չարձեռք բռնեց ինձ, ետ կացրեց այդ մտադրութիւնից... Եւ ես անզօր սկսեցի լոկ իմ բաղդն անիծել որ ինձ էլ նրանց հետ չուղարկեց մահուան գիրկը, թողեց կենդանի իրու ծիծաղի բաժին, իբրև տանջանքի առարկայ...

— Այդ ժամանակ ես ծխի հոտ առայ, օդի մէջ զգացի տաքութիւն: Հրդեն արդէն մեր տան կողմն էր հասել: Ես ստիպուած

թողի նահատակներին, գուրս վազեցի և այդ րոպէ տեսայ, թէ ինչպէս անվերջ լսուում էին ատրճանակների և հրացանների ձայներ. մարդիկ այս ու այն կողմն էին վազում խելակորոյս. խեղճը վազում էր կեանքը փրկելու, վայրազը՝ կեանք հնձելու. տեսայ թէ ինչպէս սպանուողի հառաչանքն ու սպանողի յոխորաանքը միասին, միաժամանակ գուրս էին թոչում նրանց կրծքերից ծխով ծածկուած երկնքի տակ, որի միջից կարծես ինքը ստեղծող Արարիչը անկարող էր տեսնել, թէ ինչ էր կատարուում իրանից ներքե երկրի երեսին:

— Դժոնիք էր այն...

— Ես կատաղած սկսեցի դէս ու դէն վազվագել և յարձակում գործողների վրայ ատրճանակ պարպել: Նրանք նոյնպէս իմ վրա էին ատրճանակ պարպում. սակայն ճակատագիրը կարծես այլ կերպ էր անօրինել իմ կեանքի բազրը, որ ես կենդանի մնայի ծաղրի ու տանջանքի համար:

— Էլ այնուհեամ չգիտեմ ինչպէս եղաւ, որ փախուստ տուազների հետ ես ևս խառնուեցի, փախայ ինքս էլ չգիտեմ դէպի ուր...

— Արշալոյսին վերջին անդամ հեռուից մենք նայեցինք մեր զիւղին։ Նա զեռ այլը ւում էր, և իր հազարաւոր բոցերով ու ծիփ սիւնեակներով կարծես աշխատում էր մրցել երկնքի նոր բացուող կարմիր արշալոյսի և երկնակամարի կապուտակի հետ։ Որպիսի հեգնութիւն, պարոն դատաւորներ, երկնքի և երկրի մէջ։

— Գիւղ վերադառնալ այլևս անկարելի էր։ Մնացածներիս էլ կլոտորէին։ հարկաւոր էր փախչել։

— Եւ մենք փախանք Ռուսիոյ սահմանները։

— Զուրկ ամեն ինչից, ցնցոտի շորերով, սոված, երկար թափառեցի ես Ռուսիոյ սահմանագլխի քաղաքները։ Ոչ մի գործ ու պաշտօն չկարողացայ գտնել ես այդ տեղերում։ Անողոք կեանքը անփոյթ էր դառել դէպի իմ տագնապը։ Ես դառել էի երկնքի մի վտարանդի գաւակ, երկրի մի տարագիր որդի։ Ապրելու, թշուառ գոյութիւնս պահպանելու համար ես զիմեցի մարդկութեան մէջ տեղի ունեցող ամենախայտառակ միշոցին։ օգնութիւն խնդրելու։ Դուք զիտէք պարոն դատաւորներ, ինչ բան է այս բա-

զուկներով (այդ ժամանակ նա ցոյց տուեց իր ջլութագուկները), այս հասակում օգնութեան դիմել զա մի շանթող զրութիւն է։

— Այդպիսով ես անցկացրի մի տարի։

— Սակայն հայրենիքիս սէրը, մանաւանդ ծննդավայրս, որ այնքան նույիրական յիշատակներով կապուտած էին հետանին մաքիցս չէին հեռանում։ Ես դարձեալ մի ազօտ յոյս, մի ծխացող իղձ ունեի վերադառնալ այնտեղ, նորից կեանք վերամեղծելու։

— Գտայ ընկերներ։ և մենք միքանի հոգով որոշեցինք վերադառնալ։

— Գնացինք մինչև սահմանը։

— Այնտեղ մեզ յայտնեցին։ «այն մարդկի, որոնք խռովարար և ապստամբ են եղել վեհափառ սուլթանի դէմ, թողել հեռացել են Օսմանեան երկրից, նրանք այլևս չեն կարող վերադառնալ»։

— Ես առաջին անգամ էի լսում, պարոն դատաւորներ, որ ես ապստամբ ու խռովար եմ եղել սուլթանի դէմ, որովհետեւ խաղաղ նստած տեղս եկել կոտորել են մեզ, աւերել տունս, թալանել ինչքս... Ահա թէ ինչ է եղել վեհափառ սուլթանի աչքում

խոսվութիւնն ու ապստամբութիւնը:

— Դուք հարցից շեղում էք, կասսա ակամայ ընդհատեց նրան նախաղահը:  
— Ներեցէք, ես... ը՝ ը՛... կշարունակեմ ասելիքս:

— Ետ գարձանք:

— Ելի սկսուեց մինոր վաշրանդիկեանք:  
— Երկու տարուց յետոյ գարձեալ ուրշեցինք վերադառնալ, և այս անդամ վճռեցինք ինչպէս էլ լինի հասնել մեր երկիրը, վերստեղծել մեր կեանքը:

— Գնացինք:

— Ծածուկ անցանք սահմանը, մտանք ժամանակիս դժոխքը, որի անունն է Օսմանեան պիտութիւն: Գիշերը ճանապարհ էինք կտրում թաւ անտառներով, խոր ձորերով, ժայռերի տակով. ցերեկը թագ էինք կենում ծմակների խորքերում, քերծերի ծերպերում, զազանների որջերում: Վերջապէս հասանք մեր գիւղի սահմանը:

— Մեր թողած հրդեհուած աւերակ գիւղը տեսանք արդէն շէնացած: Զկարցինք մենք ներս մտնել: Մեր հարցին թէ ով է բնակլում այնաեղ, ասացին, որ քիւրդեր են բնակեցրած:

— Այդ լուրը կարծես մի երկնային կայծակ լինէք, որ արաքուեց մեր գլուխին:

— Ա՞հ, տեսնել հայրենի օջախը ուրիշի ձեռնին, սիրասուն հայրենիքը օտարի վաթան, նուիրական շիրիմները թշնամու սարի կոխան... Իսկ մենք մեր պաշտելի սրբավայրից վայրավատին հալածուած, անտուն, անտէր... օ, պարոն դատաւորներ, զուք չէք կարող երևակայել, թէ որքան մեծ վիշտ է այդ. չէք կարող երևակայել, որովհետեւ չէք կորցրել հայրենիք, չէք քաշել նրա կարօտը, չէք տեսել նրա զրկանքը, չէք մնացել անտուն, անտէր, անհոգ, անհաց... մեզ պէս չէք նմանուել բունը կորցրած թռչունի, որ չգիտէ ուր դնէ զլուխը:

— Դուք մեղագրեալ, բուն հարցից հետանում էք, նորից նկատեց նախաղահը:

— Ա՞խ, ներեցէք, ես սաստիկ յուղեցի, մոռացայ ինչու մասին էի խօսում:

— Պատմեցէք եղելութիւնը, նորից յարեց նախաղահը:

— Այդպէս, պարոն դատաւորներ, մենք մինչ այդ ծփանքի մէջ էինք, լուր հասաւ, որ մեզ նկատել են մի խումբ ձիաւորքրդեր, հետեւում են մեզ բոնելու, որ զլուխ-

Աերս կտրեն, տանեն իրենց փաշային, ասեն,  
թէ «այսքան ջան-ֆիդաններ ենք սպանել»...  
Դա կարմիր սուլթանի հրամանն է եղել:

— Դիմադրել անկարելի էր. մենք դա-  
նակ անգամ չունեինք հետերս. ստիպուած  
էինք տեղի տալ:

— Ու նորից փախանք մոռսիա, ընդ-  
միշտ թագելով մեր յոյսերն ու իղձերը:

— Դրանից յետոյ ես ամեն կերպ աշ-  
խատում էի մոռացութեան տալ ամեն ինչ,  
հաշտուել ճակատագրի դառն կատակի հետ  
և կեանքիս մնացորդը քաշ տալ մի կերպ  
այս կողմերում:

— Ինձ համար այլ ես չէր մնացել ոչ  
իոյս, ոչ ինդութիւն. արել դառել էր իս-  
ւար, լուսինը լալկան, աստղերը հանգած,  
խոսը դալուկ, ծաղիկը խամրած, թռչունը  
համբ, երկինքն անողոք, երկիրը քարացած:

— Վիրաւոր էրէի նման երկար ժամա-  
նակ դարձեալ կովկասի քաղաքները թափա-  
ռելուց յետոյ եկայ այս կողմերը, Ս... քա-  
դաքը, մտայ մի տեղ այգեպան:

— Ես գոհ եղայ իմ նոր վիճակից, որ  
պատուեցի օգնութեան դիմելուց, ու ունե-  
ցայ պատսպարուելու մի անկիւն:

— Անցաւ այդ օրից մի տարի:  
— Ես արդէն գրեթէ հաշոռուել էի իմ  
բաղդի հետ, մոռացութեան տուել դառն ան-  
ցելը, նրա հետ շատ բան: Աշխատում էի, և  
երեկոները երբեմն դուրս էի գալիս ծովափ  
զբունելու, ծանօթները, հայրենիքից եկող-  
ներ տեսնելու, խօսելու:

— Մի երեկոյ էլ նոյնպէս գնացի ծո-  
վափ տեսնելու արդեօք ոչոք եկող չկմը  
շոգենաւով մեր երկրից:

— Դա գարնանային մի գեղեցիկ երեկոյ  
էր, որ շոգենաւը վերջին, կասես յոգնած մորն-  
չիւնը — սուլոցը արձակելով, վերջին անգամ  
ալիքները ճողփացրեց իր ափերի ու ծովի  
եղբների հետ և կանգ առաւ նաւահանգստում:

— Կամուրջը դրին:

— Մինչ ես ճանապարհ էի փնտռում  
շոգենաւ մտնելու, դիմացս անսպասելի կեր-  
պով ելաւ ինչոր մի ծանօթ դէմք: Զգի-  
տեմ ինչու ես այդ դէմքի վրայ յիշեցի այն  
տեսարանը, որ վերջ տուեց մեր զիւզի կեան-  
քին, և այն զիշերը, երբ ես կորցրի ամեն ինչ.  
և կեանք և կարողութիւն, և սէր և պատիւ...

— Վերջալոյսի շեշտակի ճառագայթնե-  
րի տակ նորից նայեցի ես այդ ամեն ինչ իմ

մէջ վերակենդանացնող դէմքին. ահ, զառն  
բոպէ, ճանաչեցի նրան. նա էր. նա, իմ  
բաղդ ու կեանքը աւերողը, կինս ու պատիւս  
յափշտակողը:

— Այդ անալինկալ հանդիպումի առաջ  
կորցրի ինքս ինձ. չգիտեմ այդ բոպէ ինչ  
կատարուեց իմ մէջ, միայն այն եմ յիշում,  
որ ձեսս տարայ գրպանս, հանեցի փոքր  
յօդոցը, որ միշտ հետս ման էի ածում,  
յարձակուեցի նրա վրայ, ձեռքերս մէկզր-  
կու անզամ ուժեղ կերպով բարձրացան-ի-  
շան, և ես ոտքերիս տակ ընկած տեսայ նրա  
արնաշաղափ դիակը:

— Այս, պարոն դատաւորներ, ես սպա-  
նեցի նրան. բայց երգւում եմ իմ կորցրած  
օջախի վլատակներով, մօրս վերջին ցնցում-  
ներով, որ ես դիտաւորեալ չսպանեցի նրան:  
Այժմ օրէնքն էլ ձեր ձեռքն է, իրաւոնքն էր  
դատեցէք ինչպէս կամենաք:

Դատաւորները լուռ, թախիծը ճակատ-  
ներին, մտախոհ վեր կացան տեղերից,  
անցկացան խորհրդակցական սենեակը որո-  
շում կայացնելու:

Եթէ դուք լինէիք նրանց տեղը, ըն-  
թերցող, ինչպիսի վճիռ կկայացնէիք:

## ՑԱՆԿ

<del>Հ</del> I.	ՄԱՐՍԻԾ	.	.	.	.	.	3
II.	ԳԵՂՉՈՒԿԻ ՎԼՇԸԸ	.	.	.	.	.	20
<del>Հ</del> III.	ՄԱԳՆԻՄ	.	.	.	.	.	48
IV.	ՀՈՂԻՑ ԴՈՒՐՄ	.	.	.	.	.	55
V.	ՀՕՐԱԿԱՆ ՏՈՒՆ	.	.	.	.	.	84
VI.	ԿԵԱՆՔ ԵՒ ՓՈՂ	.	.	.	.	.	108
<del>Հ</del> VII.	ԱՐՑՈՒՆՔՆԵՐ	.	.	.	.	.	150
<del>Հ</del> VIII.	ԴԱՏԱԱՍԱՆ	.	.	.	.	.	155

Հնիթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում  
հետեւալ սխալների վրայ.

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
	6	քալելուդ	քաշելուդ
	16	չպամ	կպամ
	74	գերանդիները	գերանդիները
	104	գնացին	գնացին
	108	ծամ-	ժամ-
	»	համողել	համողել
	110	անձնաւորութւներ	անձնաւորութիւններ
	118	զէոլէ	զէոլի

Կենտրոնական, Կովկասեան և Գուշտենքեր  
գրավաճառանոցներում (Տփխիս), ու ինձ մօ-  
ծախուում են հետեւալ իմ աշխատութիւնները.

1.	Երդում, վէպ. սակաւաթիւ	40	կ
2.	Պատանեկան յուշեր. սակաւաթիւ	15	կ
3.	Հօրոստ-մօրոս. առաջին գիրք.	30	կ
4.	» » Երկրորդ	30	կ
5.	» » Երրորդ	30	կ
6.	Հայ գեղջուկի ալ'բոմը Ա. մաս	40	կ
7.	» » » Բ. »	40	կ

### Մամուլի տակ է


Ծիլեր, գրամա 4 գործող.	50	կ
------------------------	----	---

Շուտով տպագրութեան կյանձնուի  
Հայ գեղջուկի ալ'բոմի Գ մասը. . . . 40 կ

Պատրաստ են տպագրութեան համար  
Հիւանդանոց, գրամա 4 գործ.  
Հօրոստ-մօրոսի չորրորդ գիրքը:

### Իմ հասցեն.

Нахичевань на Дону.



ՀՀ Ազգային գրադարան



NL0352192

41584

